Azg Ազգ

2 ՅՈՒՆԻՍ 2007 ՇԱԲԱԹ 103 (3755)

Հայաստանում հայտնված ադրբեջանցի զինծառայողն իրեն մեղավոր է ճանաչում դավաճանության մեջ

Ադրբեջանցի գերիների վերադարձի ժամանակ սովորական դարձած դատավարությունների ու հայրենիքի դավաճանության մեղադրանքների առնչությամբ տեղ ունեն անգամ ողբերգությունները: Մասնավորապես երեկ, «Ազերի.տրես» գործակալության տեղեկացմամբ, այսպես կոչված, հայկական գերության մեջ հայտնված Էլդանիզ Նուրիեւը դատարանում իրեն մեղավոր է ճանաչել հայրենիքի դավաճանության մեջ: Թերեւս ավելի ճարահատությունն է խոսում, քան տրամաբանությունն ու բանականությունն այս դեպքում, քանի որ սա առաջին դեպքը չէ, երբ հայկական սահմանը պատահականությամբ կամ անփութության պատճառով խախտած ադրբեջանցի զինվորները վերադարձին կանգնում են դատարանի առաջ եւ մեղադրվում հայրենիքի դավաճանության մեջ:

Սահմանադրական դատարանն սկսեց համամասնական կարգով ընտրությունների արդյունքները վիճարկող գործի քննությունը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ սկսվեց մի գործընթաց, որից որեւէ մեկը օտասելիք չունի, անգամ դրա նախաձեռնողները, սակայն առաջանում է ընդդիմության գոյության բարունակականությունը մի կողմից, եւ ընդդիմության կարծիքով ցույց է տալու ընտրակեղծիքներն իրենց ողջ փայլով ու հարստությամբ, եթե ներկայացվող ընտրակեղծիքների փաստերը համոզեն եւ առացուցման ուժ ունենան: Խոսքը վերաբերում է Սահմանադրական դատարանում երեկ սկսված ընտրությունների՝ համամասնական կարգով արդյունքների վիճարկմանը: ՍԴ-ն մեկ գործի մեջ էր ներառել 4 ընդդիմադիր կուսակցությունների դիմումները, որոնց հիմնական պահանջն է անվավեր ճանաչել համամասնական կարգով մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Վիճարկման դիմումատերերն են «Իմոիչմենսը», ՕԵԿ-ը, «Հանրապետություն» եւ «Նոր ժամանակներ» կուսակցությունները, որոնք իրենց փաստաթղթերին ամրագրել են նաեւ «Ժառանգության» եւ ՀԺԿ-ի արձանագրած ընտրախախտումները:

Պատասխանող կողմի (ԿԸՀ-ի) երկու միջնորդությունները չընդունելու որոշումից հետո ՍԴ-ն լսեց դիմումները՝ դրանց վերաբերյալ ՍԴ անդամ **Վոլոդյա Հովհաննիսյանի** զեկուցումը եւս լսելով:

Տես էջ 2

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Մեթյու Բրայզան տեղեկացնում է, թե համաձայնություն կա վերադարձնելու Ղարաբաղի հարակից տարածքները

Հունիսի 9-ին պատրաստվում են ստորագրե՞լ ինչ-որ բան եւ այս տարբերակո՞վ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ժամանակ առ ժամանակ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի առնչությամբ տարբեր հայտարարություններ են հնչում, որոնք ավելի հաճախ կոնկրետ խնդիրների չեն վերաբերում, այլ լինում են հույս, հավատ, ակնկալիքներ ու էլի նման հասկացություններով որակվող կատեգորիաներ: Բայց երբեմն էլ, թեկուզ ադրբեջանական լրահոսի միջոցով ստացվում են լուրեր, որոնց համաձայն որոշակի առումով գաղտնազերծվում են բանակցային գործընթացի բաղկացուցիչները:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Մեթյու Բրայզան այս էլ որերորդ անգամ «բերանբացություն» է անում՝ անորոշ թողնելով սեփական խոսքերի ազդեցությունը: Միեւնույն ժամանակ գաղտնազերծվում կամ էլ աղավաղված Հայաստանի եւ Ադրբեջանի հասարակություններին են մատուցվում երեւույթներ, որոնք կարող են ուղղակի դառնալ անհաղթահարելի խոչընդոտ նույն այդ բանակցային գործընթացի համար:

Թերեւս զուտ խոսակցությունների մակարդակում դատողությունները, թե Սանկտ Պետերբուրգում հունիսի 9-ին կայանալիք Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպմանը ինչ-որ փաստաթուղթ է ստորագրվելու, ունեն որոշ իրատեսական հիմք, այլապես ինչու է Բրայզան «գաղտնազերծում» ինչ-ինչ սկզբունքներ, իսկ մյուս համանախագահներն Ադրբեջան այցելության ժամանակ խոսում են տարածքային ամբողջականության որակումներից:

Տես էջ 3

79-ամյա «Դոկտոր Մահը» կրկին ազատության մեջ

Միչիգանի նահանգային բանտից դուրս է եկել «Դոկտոր Մահ» մականվանն արժանացած Ջեք Գետրգյանը: Ինչպես հաղորդում են CNN եւ միջազգային այլ հեռուստաընկերությունների կայքէջերը, էվթանազիայի ջատագովը ճաղերի հետեւում հայտնվեց 1999 թվականին, երբ CBS հեռուստաընկերության «60 րոպե» ծրագրին ուղարկեց հերթական մահացու ներարկման մասին պատմող տեսաժապավենը: Այդ ժամանակ Գետրգյանն արդեն զրկված էր բժշկական արտոնագրից: Մինչեւ սկանդալային տեսաժապավենի հրապարակումն արդեն Գետրգյանը հայտարարում էր, թե 130 անբուժելի հիվանդների օգնել է հեռանալ կյանքից՝ ազատելով նրանց ֆիզիկական անասելի տառապանքներից: 1990-ականներին Գետրգյանի դեմ քրեական գործ հարուցելու փորձեր եղան մի քանի նահանգներում, սակայն՝ անհաջող. Ջեք Գետրգյանի օգնությամբ կյանքից հեռացած հիվանդները եւ նրանց հարազատները իրենք էին դիմել հայազգի բժշկին՝ խնդրելով վերջ տալ տանջանքներին:

Միչիգանի դատական համակարգը, սակայն, հաստատակամ գտնվեց Գետրգյանի գործունեությանը վերջ տալու հարցում: Գետրգյանը բանտից դուրս է գալիս հսկայական պայմանով՝ առաջիկա երկու տարիներին էվթանազիայի օրինականացման քարոզչություն չիրականացնել: «Մենք հետեւելու ենք նրա բոլոր հրապարակային ելույթներին», հայտարարել են Միչիգանի նահանգի իրավապահները: Միացյալ Նահանգներում անցկացված վերջին հարցումները վկայում են, որ 79-ամյա եւ վաստակոր Ջեք Գետրգյանը, բանտից դուրս գալով, կարող է տոնել առաջին «հաղթանակը». ըստ Pew Research կենտրոնի հետազոտության՝ էվթանազիայի օրինականացման կողմնակից ամերիկացիների թիվն արդեն հավասարվել է հակառակորդների թվին:

Ադրբեջանցի լրագրողներին ԱՄՆ-ն եւ Ռուսաստանը մերժում են քաղաքական ապաստան տալ

«Ազգը» տեղեկացրել էր, որ Ադրբեջանում մամուլի իրավիճակի հետեւանքով մի շարք ադրբեջանցի լրագրողներ քաղաքական ապաստան էին խնդրել երկրում հավատարմագրված դեսպանատներից: Ադրբեջանական կայքէջերը տեղեկացնում են, որ, ինչպես Բաքվում Ռուսաստանի դեսպանությունը, այնպես էլ Միացյալ Նահանգների ներկայացուցչությունը մերժել են քաղաքական ապաստան տրամադրելու խնդրանքները: Ռուսաստանի դեսպանատանը պարզաբանել են, թե քանի որ Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ գործում է առանց այցագրերի ռեժիմ, ուստի քաղաքական ապաստան կարելի է ստանալ հենց Ռուսաստանում: Ի դեպ, գնալով աճում է քաղաքական ապաստան խնդրող լրագրողների թիվը, որն արդեն անցել է 25-ը: Ա. Հ.

«ՉՎԵՐԹԵՈՅ»

Առաջին չվերթը՝ նոր օդանավակայանից

Չի բացառվում, որ Գյումրիի օդանավակայանի կառավարումը եւս հանձնվի Է. Էռնեկյանին

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Զվարթնոց օդանավակայանի ուղեւորային նոր համալիրից՝ մեկնման սրահից, երեկ, ժամը 14.15-ի սահմաններում տեղի ունեցավ առաջին չվերթը՝ Երեւան-Մոսկվա ուղղությամբ: Մոտ 70 ուղեւորներ առաջին անգամ արտերկիր մեկնեցին նոր օդանավակայանից: Հիշեցնենք, որ մեկնման սրահի բացումը տեղի էր ունեցել մայիսի 25-ին՝ երկրի նախագահի մասնակցությամբ: Առաջին ուղեւորներին դիմավորեցին տեսախցիկներով եւ դիկտոֆոններով զինված լրագրողները, օդանավակայանի ղեկավարությունը, որոնք իրենց ծափահարություններով անակնկալի բերեցին ուղեւորներին:

«Շատ հոյակապ է, տպավորությունը շատ լավ է, կահավորումը, սպասարկումը շատ լավ է: Գոհ ենք, նախկինի հետ երբեմ չես համեմատի», ասաց նոր սրահից Մոսկվա մեկնող **Անահիտ Գետրգյանը**: Նույն չվերթով Մոսկվա մեկնող մեկ այլ ուղեւոր՝ **Դավթյան Գուրգենն** էլ հավելեց. «Ահագին հաճելի օդանավակայան է, կեցցեն»:

«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության գլխավոր տնօրեն **Խուան Պաբլո Գեչիջյանի** ներկայացմամբ, այժմ «Զվարթնոց» օդանավակայանը՝ մեկնման եւ ժամանման սրահներով, համապատասխանում է միջազգային ամենաբարձր չափանիշներին եւ ամեն բան արվել է ուղեւորների հարմարավետ սպասարկման համար: Մեկնման նոր սրահում կան չվերթերի սպասարկման 6 բաժիններ, 5 ուղեւորային կամրջակներից պատրաստ են 3-ը, իսկ մյուս երկուսը պատրաստ կլինեն առաջիկա մեկ ամսում, կան 12 անձնագրային կետեր, սրճարան, մատաղերծ խանութ, բիզնես կարգի սպասարկման սրահ եւ այլ հարմարություններ:

Տես էջ 2

Ցեղասպանության համար պատասխանատվության օրինագիծ

Կոնգրեսականներ Հովարդ Բերմանը եւ Մայք Քենսը, Ամերիկայի հայկական համագումարի տեղեկացմամբ, Կոնգրեսի ստորին պալատին են ներկայացրել «Ցեղասպանության համար պատասխանատվության ակտ» օրինագիծը: Այս օրինագծի ընդունման դեպքում ամերիկյան դատարանի առաջ պատասխանատվության կենթարկվեն նաեւ Միացյալ Նահանգներից դուրս ցեղասպանություն իրականացրած, ամերիկյան քաղաքացիություն չունեցող անձինք: Համանման օրինագիծ մարտին ընդունվել է Կոնգրեսի վերին պալատում հինգ սենատորների նախաձեռնությամբ:

Ա. Հ.

ՓՈՐՁ

Հնարավո՞ր է ընտրական ձայների կեղծումը նոր անձնագրերի միջոցով

Հայաստանի Ազգային ժողովի ընտրություններից հետո հայտարարվեց, որ բազմաթիվ ձայներ կեղծվել են նոր անձնագրերի միջոցով, այսինքն՝ ընտրությունների օրը մարդկանց տրվել է նոր անձնագիր, որտեղ փակցված է եղել տվյալ անձի լուսանկարը, սակայն մնացած տվյալները (ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան թիվ, հասցե) եղել են կամ մահացածի, կամ հանրաքվեությունից դուրս գտնվող անձանց տվյալները: Ընդ որում, այս տարբերակով որքա՞ն կեղծված ձայների քանակ նշվում է մինչեւ 400.000 ձայն:

Հայտարարությունը հերքեց ՀՀ ոստիկանությունը:

Քննարկենք, թե որքանո՞վ է հնարավոր նոր (կեղծ) անձնագրերի միջոցով ընտրական ձայներ կեղծելու տարբերակը:

Ենթադրենք ՀՀ ԱԺ ընտրությունների ժամանակ նոր (կեղծ) անձնագրերի միջոցով հօգուտ կուսակցություններից մեկի անհրաժեշտ է եղել կեղծել (սանալ) 100000 ընտրողի ձայն:

Նշվածը հնարավոր է իրականացնել հետեւյալ քայլերը կատարելով:

Ճշտվում են այն հարյուր հազար անձանց (մահացածներ, հանրաքվեությունից բացակայողներ) տվյալները (ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան թիվ), որոնց անուններով ՀՀ ԱԺ ընտրությունների ժամանակ կատարվելու է 100.000 ձայների կեղծիք:

Ցուցակները կազմելու ժամանակ 1-ին կետում նշված 100.000 անունները գրանցվում են տարբեր ընտրատարածքների ցուցակներում:

Կուսակցությունն ընտրում է 5000 վստահելի մարդկանց, ովքեր պետք է իրականացնեն 6-11 կետերում նշված քայլերը:

ՀՀ ոստիկանության անձնագրերի եւ հրավերի վարչությունը լրացնում է 100.000 նոր (կեղծ) անձնագիր, որոնցում 1-ին կետում նշված անձանց տվյալներն են, սակայն փակցված են 3-րդ կետում նշված անձանց լուսանկարները, այսինքն՝ յուրաքանչյուր անձի լուսանկար հայտնվում է 20 նոր (կեղծ) անձնագրերի մեջ:

Ընտրություններից առաջ 100.000 նոր (կեղծ) անձնագրերը տրամադրվում են կուսակցությանը՝ ընտրություններից հետո անմիջապես հետ սանալու պայմանով:

Ընտրության օրը 3-րդ կետում նշված անձինք ներկայանում են կուսակցության շտաբ եւ հանձնում իսկական անձնագիրը:

Շտաբից 3-րդ կետում նշված անձանցից յուրաքանչյուրը սանում է նոր անձնագիր, որտեղ իր լուսանկարն է, սակայն մնացած տվյալներն այլ անձի տվյալներ են:

Շտաբում նոր անձնագիր ստացած անձին հայտնում են այն ընտրական տեղամասը, որտեղ նա պետք է ներկայանա իր նոր անձնագրով եւ հօգուտ կուսակցության կատարի քվեարկություն:

Կուսակցությունն արագ կազմակերպում է անձի տեղափոխությունը համապատասխան ընտրական տեղամաս:

Ընտրական տեղամասում քվեարկելուց հետո անձը շտաբ ներկայանում է կուսակցության շտաբ:

Նույն անձը 6-10 կետերը կրկնում է 20 անգամ:

Վերջին (20-րդ) ընտրությունը կատարելուց հետո շտաբում անձը վերադարձնում է իր մոտ գտնվող հերթական նոր անձնագիրը եւ ստանում է իր (իսկական) անձնագիրը:

100.000 նոր (կեղծ) անձնագրերը վերադարձվում են ՀՀ ոստիկանության անձնագրերի եւ հրավերի վարչություն, որտեղ այդ անձնագրերը ճանաչվում են խոտան եւ ոչնչացվում են:

Ակնհայտ է, որ 1-12 կետերում ներկայացված քայլերի դեպքում ընդամենը 5000 (հինգ հազար) վստահելի մարդկանց միջոցով հնարավոր է հօգուտ որեւէ կուսակցության կեղծել (ավելացնել) 100.000 ձայն:

Ակնհայտ է նաեւ, որ ներկայացված տարբերակի դեպքում հնարավոր չէ ունենալ փաստացի աղացույց նոր (կեղծ) անձնագրի միջոցով ընտրությունների մասնակցելու վերաբերյալ, սակայն նշված փաստը հնարավոր է աղացուցել ընտրական ցուցակներում առկա տվյալները միմյանց հետ համադրելու միջոցով:

ՀԱՅՈՐ ՄԱՐՈՅԱՆ

Հ. Գ.-Ընտրական ցուցակներում առկա են ավելի քան 77000 (յոթանասունյոթ հազար) ընտրողների տվյալներ, որոնց ծննդյան օրվա եւ ամսվա դիմաց գրված է՝ 00:

«ՀՅՈՒՐԹՆՈՅ»

Առաջին չվերթը նոր օդանավակայանից

1-ին էջից

Խուան Պաբլո Գեչիջյանն ասաց, որ առաջիկայում նախատեսվում է կառուցել նոր տերմինալ, որտեղ կտեղափոխվի օդանավակայանի հին համալիրում գործող ուղեւորների հաշվառման կետը: Նրա խոսքով, 5 հազար քմ տարածքով նոր տերմինալի համար նախատեսվում է

ներդնել 100 մլն դոլար, այսինքն՝ մոտավորապես այնքան, որքան ծախսվել է մեկնման եւ ժամանման սրահների կառուցման համար: Նոր տերմինալի կառուցումը կավարտվի 2010 թ. այն մի շարք ծառայությունների մատուցման հնարավորությունից կունենա նաեւ երկհարկանի ավտոկանգառ: Ընկերության մամուլի քարտուղար **Գեւորգ Աբրահամյանի** հավելմամբ էլ, նոր օդանավակայանը կարող է սպասարկել ժամում հազար ուղեւորի, իսկ տարեկան՝ մինչեւ 2 մլն ուղեւորի:

Պատասխանելով **«Ազգի»** հարցին՝ Խուան Պաբլո Գեչիջյանը նշեց, որ մեր օդանավակայանն այժմ իր չափանիշներով համարվում է B կարգի, իսկ ստանդարտը C է: Այսինքն, մեր օդանավակայանը նույնիսկ մեկ քայլ առաջ է սահմանված չափանիշներից: Պաբլո Գեչիջյանի խոսքով, նոր օդանավակայանն ունի նաեւ տարանցիկ չվերթերի հնարավորություն, որի իրականացման համար, կարծում է, ավելի շատ պետք է ավիաընկերություններն աշխատեն: 30 տարով օդանավակայանի կառավարումը ստանձնած ընկերության տնօրեն Խուան Պաբլո Գեչիջյանը նշեց, որ իրենք ակնկալում են ներդրած գումարներից շահույթ ստանալ առաջիկա 30 տարիներին:

Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ **Արսյոմ Մովսիսյանի** կարծիքով եւ տարանցիկ չվերթերի հարցը պետք է լինի ավիաընկերությունների քաղաքականության հիմքում. «Որպես պետություն մենք կոնցեսիոների հետ այդ քննարկումներն ունեցել ենք: Ինքն այստեղ այդ բոլոր հնարավորությունները ստեղծել է, արդեն ավիաընկերություններն իրենք պետք է որպես տրանզիտ դիտեն: Ես կարծում եմ, որ այստեղ մեծ անելիք ունի Արմավիան, որովհետեւ յուրաքանչյուր պետության ներսում տրանզիտը (տարանցիկ չվերթը) խրախուսում է այդ պետության ավիափոխադրողը: Իրեն ձեռնտու է լինում համակցումները, օրինակ՝ Դուբայից դեպի Կրասնոդար գնալը Հայաստանի միջոցով կարող է լինել շահավետ տարբերակ: Պետք է էժան գներ առաջարկի եւ կոմերցիոն լուծումներով այդ հարցը կարգավորելու համար»:

Խոսակցություններ կան, որ «Ամերիքն ինթերնեյշընըլ էյրփորթս» ընկերության նախագահ Էդուարդ Էռնեկյանը, ով 30 տարով վերցրել է «Զվարթնոցի» կառավարումը, դիտել է նաեւ Գյումրիի «Շիրակ» օդանավակայանը կառավարման վերցնելու: Արսյոմ Մովսիսյանի խոսքով, այժմ այդ հարցը քննարկվում է Հայաստանի իշխանությունների հետ:

Սահմանադրական դատարանն սկսեց...

1-ին էջից

Ցնցած դիմումների՝ 1 գործի մեջ միավորվելուն, դիմող կողմի 4 միավորները կարող էին առանձին-առանձին ներկայացնել եւ հիմնավորել իրենց պահանջները, ինչն առաջինն արեց «Իմպիչմենտը» (ներկայացուցիչներ **Նիկոլ Փաշինյան,** Վահագն Հովակիմյան, Վահե Գրիգորյան): Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ ընտրություններն անցել են զանգվածային ընտրախախտումներով եւ 3 խումբ շեշտադրումներ կատարեց ընտրակեղծիքներում: Ըստ նրա, նախ ընտրական գործընթացի մեկնարկից հետո փոխվել են խաղի կանոնները՝ մի քանի հարյուր հազար մարդ Ընտրական օրենսգրքի փոփոխության պատճառով զրկվել է ընտրելու իրավունքից, քանի որ այս ընտրություններին ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում ընտրական տեղամասեր չեն բացվել: Այդպիսով խախտվել է անհայտ թվով (ըստ որոշ տվյալների՝ մոտ 700 հազ.) ընտրողի սահմանադրական իրավունքը: Հենց այդ թիվը պարզելու պահանջն ուներ «Իմպիչմենտը» ՍԴ-ից, որպեսզի վերջինս տարբեր երկրների միգրացիոն ծառայություններից պարզի այդ երկրներում ժամանակավոր բնակվող ՀՀ քաղաքացիների թիվը. Հայաստանի վիճակագրական ծառայությունն այդ տվյալները չի տրամադրել: Ըստ Ն. Փաշինյանի՝ բացակաների փոխարեն քվեարկել են, ինչը կարող էր ազդել ընտրությունների արդյունքների վրա: Ընդ որում՝ «Իմպիչմենտի» ներկայացուցիչները հենց միջնորդում էին հեռաձգել նիստը, մինչեւ այդ տվյալները ձեռք բերվեն, ինչն, ըստ նրանց, կարող է

տրամագծորեն փոխել պատկերացումներն ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Սակայն ՍԴ նախագահ **Գագիկ Հարությունյանն** այդ միջնորդությունը չընդունեց առայժմ՝ մինչեւ ավարտվի կողմերին լսելը: «Իմպիչմենտի» երկրորդ շեշտադրումը վերաբերում էր ընտրակաշառքի բաժանմանը, ծառայությունների մատուցմանը, բարեգործությանը, ընդ որում բարեգործությունները նախընտրական շրջանում գովազդվել էին, ինչը նույնպես ընտրողների ազատ կամքի վրա ազդելու միջոց է եղել: Հեռուստաթերը եւս անհավասար պայմաններ է ստեղծել կուսակցությունների համար քարոզարշավի ընթացքում, որը ԿԸՀ-ն չի վերահսկել: Չեն վերահսկվել նաեւ նախընտրական հիմնադրամների ծախսերը, որոնք գերազանցող կուսակցություններ կան, առաջին հերթին ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն: Մի շարք փաստերով «Իմպիչմենտը» եկավ այն եզրակացության, որ ընտրակեղծիքները համակարգված են եղել՝ օրենսդիր, գործադիր, դատական մարմինների մասնակցությամբ. ընտրական ցուցակներում բացակաների ներառում, նոր անձնագրերով ընտրողխմբեր, քվեների զրոյացում հաշվելու ժամանակ, «մահացածների ակտիվացում ընտրությունների ժամանակ» եւ այլն:

ՕԵԿ ներկայացուցիչ **Հովհաննես Մարգարյանը** բոլորովին այլ մարտավարություն էր որդեգրել եւ մոտ երեք ժամ ընտրակեղծիքներ արեց լսողներին՝ ներկայացնելով 23 տարածքների 200 ընտրատեղամասերի բազմաթիվ ընտրակեղծիքների նկարագրությունը: Ասենք՝ գրառումներ չեն եղել գրանցամատյաններում, օրենքով սահմանված կարգով նիստեր չեն գումարվել, քվեաթերթիկները չեն մարվել սահմանված ձեւով, որ վերահսկվեր, թե քանի քվեաթերթիկ է ստացվել: Արձանագրությունների ելակետային տվյալները փոփոխված են եղել, կարմիր գույնով գրող գրչով քվեարկություններ են արվել, մեկանգամյա օգտագործման պարկերը բացված են եղել, այնտեղ չեն եղել ընտրացուցակները, մի շարք տեղամասերի արձանագրությունները փոփոխվել եւ նորից են կազմվել, իսկ ՕԵԿ հանձնաժողովականների հատուկ կարծիքները չեն կցվել ամփոփիչ արձանագրություններին: ՍԴ նախագահը Գագիկ Հարությունյանը ճշտեց՝ ի՞նչ է ուզում ՕԵԿ-ը, ո՞րն է նրա պահանջը, քանի որ այս կուսակցության դիմումում խոսվում է որոշ ընտրատեղամասերի եւ վերաքվեարկության, եւ ընտրությունների արդյունքների վերանայման, եւ համամասնական ցուցակի այլ անդամներին պատգամավորության թեկնածու գրանցելու մասին՝ խախտումների պատճառով ըստ նրանց, ընտրությունների արդյունքները չեն համապատասխանում իրականությանը: ՍԴ նախագահը նաեւ հարցրեց, թե արդյո՞ք այդ հատուկ կարծիքների թղթերը պահպանվել են, որպեսզի ՍԴ ներկայացվեն: **Գարեգին Ազարյանը** նույնպես ճշտող հարցեր տվեց, որոնց մեկ երկուսին հստակ պատասխան չտրվեց:

«Նոր ժամանակների» ներկայացուցիչ **Ռուբեն Թորոսյանը** 13 խումբ ընտրակեղծիքներ էր առանձնացրել, որոնցից 8 խումբը ներկայացրեց: Ըստ նրա՝ ընտրակեղծիքներն ազդել են ընտրությունների արդյունքների վրա: 3 կուսակցություն՝ ՀՅԿ-ն, ՀՅԴ-ն եւ ԲՀԿ-ն կեղծ փաստաթղթերով են գրանցվել, «Ժողկուսակցությունն» ու ԲՀԿ-ն ընտրակաշառք են բաժանել, այս խախտումները մինչեւ օրս ԿԸՀ-ն չի քննարկել, չի վերահսկել նաեւ նախընտրական հիմնադրամների շարժը: Օրինակ, ըստ Ռ. Թորոսյանի, ՀՅԿ-ն Ազատության հրապարակում 1 մլն դոլարանոց միջոցառում է կազմակերպել, եւ դա ոչ ոք չի նկատել: Մի խոսքով՝ Ռ. Թորոսյանը դատդասված ներկայացրեց իրենց արած հսկայական աշխատանքի արդյունքները ՆԺ-ի «կիլոուկեսանոց» դիմումից:

ՍԴ նիստը կշարունակվի այսօր:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեջ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լուսաղողների սենյակ / հեռ 581841
Հաճախորդ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լուսանկար ծառայություն / հեռ 529353
Հաճախորդչային շարասենյակ
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Նախընտրական կրքեր Մատենադարանի նոր տնօրեն ընտրելուց առաջ

Հայաստանի գրողների միությունն ու «Վերնատուն» հասարակական կազմակերպությունը երեկ գլուխ-գլխի էին հավաքել արվեստի ու գրականության ախարհի մարդկանց՝ վերստին խոսելու Մատենադարանի ձեռագրերի թվայնացման լավ ու վատ կողմերից, ծանր ու թեթև անելու առածն ու չարածը: Առաջին պահին թվաց, թե համախոհների հավաք է, ամեն ինչ անցնելու է խաղաղ գետի պես, բայց հիչ անց պարզ դարձավ, որ կար նրանց «մերոնց» ու «ձերոնց» բաժանող մի զգայուն կետ, որին դիպչելիս արտաբերվող որակումներից մթնոլորտն իսկույն խեղդող էր դառնում: Երբ որևէ մեկի բերանից Մատենադարանի արդեն նախկին տնօրենության մասին դրական խոսք էր հնչում, գրողների միության կլոր սեղանի շուրջը նստածներից մի քանիսն ասես տեղից վեր էին թռչում: Բանաստեղծուհի **Անահիտ Պարսամյանն** այնպես էր բորբոքվել եւ իմացած ողջ բառապաշարը գործի դրել, որ առանց ճանաչելու բղավեց Սերուժան Կարապետյանի վրա՝ «Լռեք, ձեզ էլ գիտենք», բայց երբ կողից հուշեցին նրա ով լինելը՝ ժպտալով ասաց՝ «Հա, մերոնցից է»: Բանաստեղծուհիների դրամատիկ ելույթները մերթընդմերթ ընդհատվում էին իրավաբանական Պուլկին Սերոբյանի եւ այլոց՝ Մատենադարանի տնօրենությանը որպես կրիտինալի դատապարտող, ուր որ է կախաղան բարձրացնող արտահայտություններով: Դժվար է ասել, թե ինչքան կձգվեր բոցաշունչ խոսքերի շարանը, եթե ձայն չխնդրեր պատվելի վանեցին՝ ակադեմիկոս-ճարտարապետ **Վարազդատ Հարությունյանը:** Մատենադարանի շենքի հիմնադրման ախատանքներին մասնակցած ճարտարապետը հիշեցրեց, որ մոտակա ժայռերի մեջ պահարաններ են կառուցվել ձեռագրերը պահպանելու համար, սակայն ստորգետնյա ջրերի հոսքի պատճառով չի օգտագործվել: «Ծանոթ եմ եղել Մատենադարանի տնօրեններ Լեւոն Խաչիկյանի եւ Սեն Արեւշատյանի հետ, երկուսն էլ ազգանվեր մտավորականներ են, ազնիվ գործող: Այն հանցանքները, որ վերագրում են նախկին տնօրենությանը, ճիշտն ասած, ինձ չի համոզում: Իմ ունեցած վերջին տեղեկություններով, ոչ մի ձեռագրերի ոչ մի պատճեն արտասահման չի գնալու, այդ բոլորը կառավարության որոշմամբ, հանվելու եւ պահվելու է Հայաստանում, որպեսզի ուսումնասիրողները բնօրինակների հետ գործ չունենան: Ինչպե՞ս կլինի, որ կառավարությունը մի բան որոշի, կրթության նախարար Լեւոն Մկրտչյանը՝ մեկ այլ բան, այդ դեպքում մենք կարող ենք պահանջել նրան հեռացնել այդ պաշտոնից»:

Ռեժիսոր **Ռուբեն Սահակյանը** տեղին նկատեց, որ համաձայնագիր ստորագրելու համար որեւէ մեկին պետք չէ մեղադրել, նույն վիճակում կարող է հայտնվել յուրաքանչյուր ոք՝ «Սարսափով մտածում եմ, թե հիմա ինչ պատասխան պիտի տայի ձեզ, եթե ես կնքած լինեի: Պարզ է, որ կնքելիս պիտի ունենայի ամենաբարի ցանկություններն ու նպատակները: Մատենադարանի ճակատագիրը պետք է կախված լինի ոչ թե մեկ անձից, այլ պետք է գործեն հստակ մեխանիզմներ՝ այդպիսի փաստաթղթեր կնքելու համար: Բացի այդ պետք է ունենալ թվայնացմամբ զբաղվող կադրեր, եւ իմանալ, թե ինչ կարող է պատահել արդեն թվայնացված ձեռագրերի հետ: Թե՞ կարծում ենք, որ եթե Մատենադարանի ձեռագրերի թվայնացման գործը հանձնարարենք հայկական կազմակերպությանը, ուրեմն չի վաճառի ձեռագրերի տվյալները: Կվաճառի, այն էլ՝ ամերիկացիներից ավելի շուտ: Հարցն այն է, որ այդ ախատանքը չպետք է կախված լինի որեւէ անձից, որովհետեւ նա կարող է հանցավոր սխալներ թույլ տալ»:

Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի նախագահ **Գարեգին Չուխասզյանը** ընդգծեց այն հանգամանքը, որ ամենից առաջ պետք էր ուսումնասիրել ձեռագրերը թվանշայնացնելու միջազգային փորձը. «Եթե ուզում ես տվյալ գործի լավն ու վատը իմանալ, պիտի համեմատելու եզրեր ունենաք: Եգիպտոսի մշակութային ամբողջ ժառանգությունը թվանշայնացրել է ամերիկյան Այբի-էմը, Ռուսաստանի Էրմիտաժինը՝ նույնպես: Այդ ախատանքը կատարվել է որպես նվիրատվություն: Բազմաթիվ կազմակերպություններ պատիվ կհամարեին Մատենադարանի կողքին իրենց անունը դնելու: Քանիցս Սեն Արեւշատյանին ասել եմ, որ ինքը գիտակ չէ այս հարցում, իր ախատակիցներից ոչ մեկը չի կարող ասել՝ թվայինը թվանշանայնից ինչով է տարբերվում: Ինչպե՞ս է առանց մասնագետների հետ ընտրակելու այդպիսի գործ ծավալում: Վերջին 2 ամիսներին բազմիցս գրվեց, թե ինչպես էր պետք այդ ամենը անել, սակայն դարձյալ ոչինչ չի ասվում: Այլեւս որեւիցե վստահություն չունեմ, որ սա գործից գլուխ չհանելու հարց է: Այստեղ կա ուղղակի շահագրգռվածություն, եւ այս խմորը դեռ շատ ջուր է առնելու: Բարձր աստիճաններից փորձելու են այս ամենը առաջ մղել, ասում եմ՝ վստահ եմ, որովհետեւ դրա նախօրինակը եղել է՝ «Հայֆիլմի» հետ պայմանագիրը»:

Հավաքի կազմակերպիչները երեկ տարածած հայտարարության մեջ Մատենադարանի կնքած պայմանագիրը նորից քննության առնելու պահանջ էին դրել կառավարության առաջ, իսկ գլխավոր դատախազությունից ակնկալել էին «անհապաղ արձագանքել պայմանագրերի քննարկումից լրագրողների մեկուսացման, Մատենադարանին կտակած 100 հազար դոլարի յուրացման փաստերին, ինչպես նաեւ պետական ազգային շահերի դեմ ուղղված պայմանագրերը չեղյալ հայտարարելուն»:

Ի պատասխան այդ հայտարարության ընթերցվեց Մատենադարանի ախատակազմի խոսքը. «Նախընտրական կրքերի կենտրոնում այսօր հայտնվել է մեր սրբության սրբոցը՝ Մաշտոցի անվան Մատենադարանը, որովհետեւ նոր տնօրեն է ընտրվելու, եւ դրանում կարեւոր դեր պիտի խաղա նաեւ ախատակազմը: Դա դուր չի գալիս ոմանց, նրանք անվայել կեցվածք են ընդունել՝ հետամնդելով շահադիտական նպատակներ: Ցեն խորհում ոչնչից՝ անտեսելու, նսեմացնելու այն հսկայական դերը, որ կատարել է Մատենադարանը մեր ազգային ու մշակութային կյանքում: Անվանարկվում է նաեւ գիտական անձնակազմը, նրա երկարամյա տնօրեն Սեն Արեւշատյանը: Կասկածի տակ է դրվում բազմավաստակ գիտնականի բարոյական նկարագիրը, ինչն անհանդուրժելի է: Պայմանագիրը չեղյալ է հայտարարվել, պարոնայք: Արժե՞ դրա շուրջն անվերջ շոուներ սարքել: Ինչ վերաբերում է Մատենադարանին կտակված 100 հազար դոլարին, տեղեկացնում ենք, որ ստացման օրվանից կտակատուի կամքով այն պահվում է բանկում առ այսօր՝ անձեռնմխելի»:

Ավելացնենք, որ երեկվա հավաքին ներկա էր նաեւ Մատենադարանի ավագ գիտաախատող **Վարդան Դեւրիկյանը,** որը վերջին կետը մանրամասնելով նշեց, որ այդ գումարի բերած տարեկան բանկային տոկոսներից գիտաախատողներն ամեն տարի դրամական պարգեւատրումներ են ստացել: (Վ. Դեւրիկյանի հոդվածը կարդալ **«Ազգի»** այսօրվա մշակութային ներդիրում):

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Միասնական քննությունները Արցախում հաջող անցան

Երեկ Արցախում եւս մեկնարկեցին ավարտական քննությունները: Հանրապետության 2154 շրջանավարտներից 776-ը հայոց լեզու եւ գրականություն առարկայից քննություն հանձնեցին միասնական տարբերակով, իսկ 1378 շրջանավարտներ 50 քննական կետերում հանձնեցին ավարտական պետական քննություններ:

ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար **Կամո Աբրահամյանը** գոհունակություն հայտնեց միասնական քննությունների ընթացքի կապակցությամբ, նշելով, որ տեւական նախապատրաստական աշխատանքը տվել է իր ցանկալի արդյունքը: Հատկանշական է, որ ոչ մի շրջանավարտ չէր բացակայել քննությունից, իսկ մեկ հոգի նույնիսկ ներկայացել էր՝ անտեսելով իր ջարդված ոտքը, որը հարգելի պատճառ է սահմանված կարգով հուսալի սկզբներին քննությունը վերահանձնելու համար:

Քննության արդյունքները հայտնի կդառնան 6 օր հետո, որի նպատակով՝ քննություններն ավարտվելուն պես թեստերն ու պատասխանների ձեւաթղթերը փաթեթավորվել, ծածկագրվել եւ նույն արկղերում ուղարկվել են «Արդշինբանկի» Ստեփանակերտի մասնաճյուղ, որտեղից էլ դրանք առավել են Երեւան՝ գնահատման եւ թեստավորման կենտրոն:

Քննություններին, համակարգչային մոնիտորների միջոցով, հետեւում էին նաեւ ծնողները: Նրանք թեպետ իրենց զավակներից ոչ պակաս էին հուզված, սակայն ակնկալում էին, որ նոր քննակարգը առավել օբյեկտիվ կբացահայտի աշակերտների գիտելիքները:

Միասնական քննության ընթացքին տեղում ծանոթանալու նպատակով քննավայր՝ Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոց այցելեց նաեւ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, որի տրամադրությունները քննության ընթացքից ու կազմակերպչական աշխատանքից նույնպես դրական էին:

Կ. Գ.

Ստեփանակերտ

«ԿԱՊԸ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՌ ԳՈՒՅՆԵՐՈՎ»

«Արմենտելն» առաջարկում է նոր սակագներ

Դրանց մի մասը կբարձրանա, մյուսը կնվազի կամ կմնա անփոփոխ

«Արմենտելը» երեկ ֆիքսված հեռախոսակապի սակագների վերաբալանսավորման հայտ է ներկայացրել հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Վերջինիս 90-օրյա ժամկետում կքննարկի ընկերության ներկայացրած հայտը եւ որոշում կկայացնի: Այդ մասին երեկ լրագրողներին հայտնեց ընկերության գլխավոր տնօրեն **Օլեգ Բլիզնյուկը:** Նա ներկա էր Հայաստանի մանկական պատկերասրահում բացված «Կապը՝ մանկական վառ գույներով» նկարների ցուցահանդեսին: Ցուցահանդեսը կազմակերպել էր «Արմենտելը» եւ նվիրված էր երեխաների պաշտպանության միջազգային օրվան:

Պարզաբանելով հայտի ներկայացման անհրաժեշտությունը, Օլեգ Բլիզնյուկը նշեց, որ համաձայն գործող լիցենզիայի պահանջների, մինչ տուկայի ազատականացումը «Արմենտելը» պետք է առաջարկ ներկայացնի ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների սակագները վերաբալանսավորելու վերաբերյալ, որի դեպքում սակագները պետք է հիմնված լինեն ինքնարժեքի վրա: «Կան սակագներ, որոնք կիջնեն 5-6 անգամ, կան, որ կմնան անփոփոխ կամ կբարձրանան», ասաց «Արմենտելի» գլխավոր տնօրենը, ավելացնելով, որ փոփոխությունները գնային մեծ տեղաշարժ չեն առաջացնի եւ «տուկայում պայթյուն չի լինի»: Օլեգ Բլիզնյուկը նաեւ կարծիք հայտնեց, որ նոր սակագները ընկերության շահույթի վրա էական ազդեցություն չեն ունենա եւ հավաստիացրեց, որ այդ ծառայությունների սակագները Ռուսաստանում շատ ավելի բարձր են, քան մեզ մոտ:

Իսկ, այնուամենայնիվ, ինչ փոփոխություններ է առաջարկում «Արմենտելը»: Դրանք հրապարակվել են մամուլում, այդ թվում՝ **«Ազգում»:** Մասնավորապես կէժանանան միջազգային խոսակցությունների գները: Օրինակ՝ դեպի Ռուսաստան ներկայիս 1 րոպեի դիմաց գանձվող 140-192 դրամի փոխարեն կգանձվի 90 դրամ, դեպի ԱՄՆ ներկայիս 250-344 դրամի փոխարեն՝ դարձյալ 90 դրամ, դեպի եվրոպական երկրներ 344 դրամ գործող սակագնի փոխարեն առաջարկվում է 90 դրամից մինչեւ առավելագույնը 344 դրամ սակագին:

Տեղային խոսակցությունների համար անփոփոխ է մնում 360 րոպե առանց րոպեավճարի խոսելաժամանակը, 361-րդ րոպեից հետո 1 րոպեի դիմաց 5 դրամ սակագինը, 1001-րդ րոպեից 1 րոպեի դիմաց 9 դրամ սակագինը: Սակայն փոխարենը առաջարկվում է կտրուկ բարձրացնել բաժանորդային՝ վճարը՝ ներկայիս 1100 դրամի փոխարեն մինչեւ 2040 դրամ բնակիչների համար, իսկ գործարար բաժանորդների համար՝ 4800 դրամ: Վերոնշյալ սակագների մեջ ներառված է նաեւ ավելացված արժեքի հարկը:

, ԱԲՈՒ ՏԱՐՏԱՐՈՍՅԱՆ

Մեթյու Բրայզան տեղեկացնում է, թե համաձայնություն կա ...

1-ին էջից

Հայաստանն ու Ադրբեջանը էական առաջընթաց են գրանցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ: Հերթական անգամ գեղեցիկ ձեւակերպմամբ ու թերեւս հուսալու տրամադրությամբ այս հայտարարության հեղինակն, ըստ The Associated Press-ի, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ, ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Մեթյու Բրայզան է: Նրա խոսքերով, հակամարտության կարգավորման միջազգային միջնորդների ավելի քան 10 տարվա ջանքերից հետո Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները մոտ են հիմնական սկզբունքների համաձայնության ճանապարհին մնացած խոչընդոտների հաղթահարմանը:

«Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Իլհամ Ալիեւի Սանկտ Պետերբուրգում հունիսի 9-ին կայանալիք բանակցությունների ժամանակ ուշադրությունը կկենտրոնանա չլուծված հարցերի վրա: Եթե այս հանդիպումը պսակվի հաջողությամբ, ապա տարածայնությունները կարգավորման հիմնական սկզբունքների շուրջը կարող են հասնել զրոյի», նշել է Բրայզան:

Ամերիկացի համանախագահը չի մանրամասնել, թե որոնք են այդ տարածայնությունները, սակայն փոխարենը ներկայացրել է որոշ հիմնական սկզբունքներ, որոնց առնչությամբ պոտենցիալ որոշումներ են գրանցվել: «Կողմերը պայմանավորվել են Լեռնային Ղարաբաղի հարակից, հայկական վերահսկողության տակ գտնվող շրջանների վերադարձի մասին», նշել է Բրայզան, փախստականների վերադարձի առնչությամբ անորոշություն թողնելով, թե տարածաշրջան փախստականների վերադարձի կամ նրանց փոխհատուցում վճարելու առնչությամբ համաձայնություն կա, թե ոչ:

«Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին էլ, Բրայզայի խոսքերով, պետք է գովել, քանի որ նրանք խիզախորեն փորձում են կայունություն եւ բարգավաճում ապահովել իրենց ժողովուրդների համար», ընդգծել է ամերիկացի համանախագահը:

Հայաստանի արտգործնախարարությունը այս ամենին, ըստ ԱԳՆ մամուլի պատասխանատու պաշտոնակատար Վլադիմիր Կարապետյանի, պատասխանում է հետեւյալ կերպ, թե Հայաստանի դիրքորոշումը ակնհայտ է, եւ անկախ նմանատիպ հայտարարություններ անելու կամ բանակցությունների ընթացքը որեւէ կերպ մեկնաբանելու հանգամանքից, Հայաստանի համար առաջնահերթ է մնում Ղարաբաղի կարգավիճակի հստակեցումը եւ ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ապահովման ամբողջական ամրագրումը, նաեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ անխափան աշխարհագրական կապի ապահովումը: Այլապես հայկական կողմը չի պատրաստվում խոսել «երրորդական հարցերի շուրջը»:

Զուգահեռներ

Մ. ՆԱՀԱՊԵՏԵՐՆ ՈՒ ԻՐԱՆԸ

Ով մեզ հետ չէ, ուրեմն մեր դեմ է

Միջազգային հարաբերություններում երեւի այնքան էլ հաճախ չի լինում, երբ գերտերությունը, հակամարտելով իր համեմատ սովորական պետության հետ, կողմնակիորեն նպաստում է վերջինիս քաղաքական կարգավիճակի անհամեմատ բարձրացմանը: Համենայն դեպս, հազիվ թե որեւէ մեկը ժխտի, որ իսլամական հեղափոխության հաղթանակից հետո հնարաւոր Պարսկաստանը, էապես ԱՄՆ-ի շնորհիվ, դարձել է համաշխարհային անցուդարձի առանցքային խաղացողներից մեկը եւ քաղաքական, տնտեսական, ռազմական ու հոգեւոր մարտահրավերներ է նետում իր թշնամիներին ու ընդդիմադիրներին: Իրանի նկատմամբ պատժամիջոցներն ուժեղացնելու ամերիկացիների կոչերը եւ Մահմուդ Ահմադինեժադի հեգնական վերաբերմունքը («Թող Անվտանգության խորհուրդը շարունակի զվարճանալ իր որոշումներով») հուսահատեցնում է առաջինին:

Ահա արդեն գրեթե երեք տասնամյակ ամերիկացիները հատկապես պայքարում են «այաթոլլաների» ռեժիմի դեմ եւ ոչ միայն ոչնչի չեն հասնում, այլեւ, ինչպես ասվեց, սանում են հակառակ արդյունքը: Իրանի միջուկային ծրագրերի դեմ ուղղված միջոցների անարդյունավետությունը վկայում է, որ իրանցիները շարունակելով ամենատարբեր մակարդակներով «բանակցել» տարբեր երկրների ու կազմակերպությունների հետ, ըստ էության հետեւողականորեն իրականացնում են իրենց ազգային շահերին համապատասխանող քաղաքականություն:

Բնականաբար հարց է առաջանում՝ ինչի՞ շնորհիվ է Թեհրանին հաջողվում դիմակայել աշխարհի գերհզորներին ու շարունակել իր գիծը: Եթե իրանցիները հայտարարում են, որ Ամերիկան ունի սոսկ 200 տարվա պատմություն, իսկ իրենք՝ հազարամյակների, ապա դա չպետք է ընդունել որպես սոսկ «պատմասիրություն» կամ դատարկ ինքնագովության նշան (ադրբեջանցիներն էլ են «հնամյա» ազգ): Բարձրաստիճան մի ռուս դիվանագետ վերջերս խոստովանել էր, որ բանակցությունների սեղանին իրանցիներին գործնականում հնարավոր չէ հաղթել. նրանք խուսանավումներով, ձգձգումներով, անորոշություններով, պերճախոսությամբ եւ արեւելյան այլ «պատմական» միջոցներով իրագործում են իրենց ուղենիշները: Եվ սա մասնավոր հանգամանք չէ:

Երբ 1979 թվականին Իրանում, տապալելով ամերիկամետ շահին, իշխանության գլուխ եկավ ծերունազարդ այաթոլլա Խոմեյնին, ապա ոչ ոք չէր հավատում, թե այդ կրոնական վարչակարգը կարող է երկար գոյատեւել, քանզի իրոք դժվար էր պատկերացնել «միջնադարյան» պետություն 20-րդ դարում: Սակայն իրանցիներին հաջողվեց իրենց մեջ արթնացնել այն հզոր ներուժը, որ, ցավոք, նիրհում է, ասենք, ունիվերսալ կոչված լիբերալ-դեմոկրատական ուսմունքի մեջ: Ոգին: Եվ սա դատարկ հնչյուն չէ: Այսօր նույնիսկ ներկա ռեժիմին չհամակրող իրանցին անվարան կզոհաբերի իր կյանքը հանուն երկրի շահերի: Ինչ ասես չձեռնարկվեցին Իրանի դեմ՝ երկրի ղեկավարներին ոչնչացնելու ահաբեկչական գործողություններ, ուղղակի օդային ներխուժում, Իրաքի սանձազերծած պատերազմ, ընդսմին, Սադդամին օգնում էին ոչ միայն ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, ԽՍՀՄ-ը, այլեւ ոչ քիչ մահմեդական արաբական երկրներ: Եվ ո՞վ հաղթեց՝ իրանական ոգին: «Իրանական նոր ընտրախավը, գրում է մոսկովյան թերթերից մեկը, արմատական հոգեւորականությունը՝ իր հակաարեւմտյան խոր գաղափարներով, իսլամական բարոյախոսությամբ ու մշակույթով, միավորվել ու համալրվել է տաղանդավոր, հավատացյալ, նվիրված պրոֆեսիոնալներով, եւ նման համերաշխման հիմքն առաջին հերթին դարձել են հոգեւոր արժեքները, անցյալի փորձի խորախորհուրդ պաշարը եւ ազգային հառնած ռազմավարական հայացքը»: Նրանց չեն վախեցնում ամերիկյան ականակիրները, իսրայելական ատոմային ռումբը, Անվտանգության խորհրդի հոխորտանքները:

Ամերիկացիները չեն կարող չիմանալ, չզգալ ու չտեսնել, որ գլխով բախվում են ամրակուռ մի պատի: Հույս դնել իրանական ռեժիմի ներքին էվոլյուցիայի վրա, անիմաստակ գործ է: Թեհրանն ապեն ավելին է, քան որպես իսլամական աշխարհի լիդերներից մեկը: Գուցե Վաշինգտոնի ամենակով համառությունը (որ չգիտես ինչու չդրսեւորվեց նույնպես մահմեդական Պակիստանի նկատմամբ) իր մերձավոր դաշնակցի՝ Իսրայելի անվտանգության խնդրի մեջ է, որին Ահմադինեժադը, առիթը չփախցնելով, սպառնում է ոչնչացնել: Գուցե հարցն առնչվում է Իրաքին, որտեղ ԱՄՆ-ը, նաեւ Իրանի պատճառով, ամուլ է «դեմոկրատիա» հաստատելու համար:

Ոչ միայն: Հիշո՞ւմ եք ինչ տեսք ունեին ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնյաները Պուտինի մյունխենյան ելույթի ժամանակ: Նրանց մթնած դեմքերին մեծագույն տարակուսանք էր գրանցված՝ ինչպե՞ս կարող է ոմն ռուս, ով էլ լինի, ճնշադատել մեզ՝ հզոր, անսխալական, գաղափարապես անթերի, աշխարհին միայն բարիք, ազատություն, դեմոկրատիա, մարդու իրավունքներ հրամցնող ու տարածող մեծ եւ կատարյալ ազգին: Իսկ հիմա պատկերացրեք, որ մյուս հակառակորդը եվրոպական էլ չէ, այլ ընդամենը արմատական մահմեդական, ահաբեկչությունը խրախուսող, ամերիկյան արժեքն իսպառ մերժող, դրա հետ էլ՝ հանդուգն: Սրանք արդեն բավարար են, որ Ամերիկան այդ պետությունը համարի նզովյալ թշնամի: Սառը պատերազմում հաղթելով ԽՍՀՄ-ին, ամերիկացիները, մինչ այդ էլ, իհարկե, զուրկ չլինելով մեսիականհավակնություններից, միաբեւեռ աշխարհում ամեն ինչին նայում են բացառապես իրենց ազգային շահերի ու ամեն ինչ դրանց ենթարկելու տեսանկյունից: Եվ յուրաքանչյուր երկիր, որ չի ընդունի նրա պահանջները, պատժելի է: «Ամերիկան չի հասկանում, թե ուրիշ ազգերը ինչպես կարող են չընդունել նրա աշխարհընկալումները եւ չձգտեն նպաստել նրան: Չէ՞ որ այդ երկիրը, լինելով անզուգական պետություն ի բարություն բոլորի, մարմնավորում է բարությունը»՝ հեգնանքով գրում է ռուսական մի այլ թերթ: Այսինքն, իրագործվում է հայտնի սկզբունքը՝ ով մեզ հետ չէ, ուրեմն մեր դեմ է:

Ի դեպ, ներկայիս ամերիկացիներն ինչ-որ տեղ հիշեցնում են «նոր» աշխարհ կառուցող արմատական բոլշեւիկներին, այն տարբերությամբ, որ կոմունիստական գաղափարախոսությանը փոխարինել է լիբերալ-դեմոկրատիան: Եվ այն տպավորությունն է ստեղծվում, որ իր աշխարհաստիճան «բարեգործական» առաքելության իրականացմանն արգելք դարձած Իրանին պատժելու ԱՄՆ-ի մտադրությունը անշեղ է: Մնում է միայն սպասել պատեհ առիթի եւ ընտրել պատժաձեւը: Իսկ թե ինչի կհանգեցնի այդ քայլը, դա ԱՄՆ-ին, ըստ երեւույթին, չի էլ հուզում:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Դատավորը՝ խաղալիք Յուշչենկոյի, իսկ լրագրողը՝ Ալիեւի ձեռքում

Իրավիճակը Ուկրաինայում, նաեւ Ադրբեջանում փաստում է եվրոշափանիշների երկակիությունը

Արդարությունն ու անաչառությունն այնպիսի հասկացություններ են, որ գնահատելիս նույն կողմում են բոլորը, սակայն ցուցաբերելու տեսանկյունից մոտեցման դեպքում դրանց դրսեւորմամբ առանձնացող գրեթե մարդ չի մնում: Իսկ այս ամենը քաղաքականության մեջ ուղղակի աննկարագրելիորեն պարզունակ է դարձնում իրականությունն այն պատճառով, որ արդարություն ու անաչառությունը մնում են փաստաթղթային ձեւակերպումներում ու ոչ մի կերպ ի հայտ չեն գալիս քաղաքական գործընթացներում:

Եվրոպական, իսկ ավելի ընդհանուր ասած, արեւմտյան արժեքներն այնպիսի պատրաստակամությամբ են «գգվում», իսկ դրանք մեզ բերող երկրներին այնպիսի միամտությամբ են «սրբացնում», որ էլ երազ-ցանկություն չի մնում բացի մեկից. սեփական ներկայությամբ «պատվել» այդ երկրները: Մինչդեռ ստանդարտները միշտ երկակի են լինում, արժեքները երկակի են կիրառվում, իսկ քաղաքական կատեգորիաներում շահը մնում է գերադասելի իրողությունը:

Ուկրաինայում տեղի ունեցող գործընթացներին հետեւելիս կարելի է ենթադրել, թե Եվրոպան տառացիորեն խոր քուն է մտել, որից արթնանալու հավանականությունը բնավ էլ չի կարելի պայմանավորել այնպիսի բարձրարժեք երեւույթներով, ինչպիսին են երկրում անարխիայի դրսեւորումները, իրավունքների ոտնահարումն ու ժողովրդավարության դեռ չկայացած արժեքների արժեզրկումը: Երբ երկրի սահմանադրական դատարանը ենթում էր նախագահ Վիկտոր Յուշչենկոյի որոշ քայլերի օրինականությունը, Ուկրաինայի նախագահը հրաման է տվեց դադարեցնել ԱԴ որոշ դատավորների: Վատ չէ այնպիսի երկրի համար, որին արեւմտյան երկրները դիկտատուրա կոմունիստական կամ էլ միապետություն, որոնց հանդեպ ամենաաղմուկ ձայնով բոլոր իրավապաշտպան, ժողովրդավարապաշտպան ու էլի նման անվանումներով իրենց բնութագրող կառույցներն ու կազմակերպությունները համամոլորակային աղմուկ կբարձրացնեին:

Հետո էլ Ուկրաինայում բառացիորեն ենից զարթնած նախագահը գլխավոր դատախազ է հանում, որին դատական կարգով վերականգնում են, նախագահական հրամանագիրն էլ չեղյալ հայտարարում: Եվս մեկ դատական գործընթաց ավելի բարձր ատյանում բռնում է նախագահի կողմն ու կրկին դադարեցնում գլխավոր դատախազի լիազորությունների իրականացումը նախկին դարձած գլխավոր դատախազի կողմից: Ի՞նչ է սա՝ դատական ատյաններում օրենսդրական հնարավորությունների փորձարկում, դատարաններում սեփական հեղինակության ամրապնդում, թե՞ Ուկրաինայում կարելի է գլխավոր դատախազի հետ վարվել ճիշտ այնպես, ինչպես մեկ ուրիշ առավոտ կարելի է որոշել ցրել երկրի խորհրդարանը:

Առավել յուրօրինակություն է հաղորդում այս իրավիճակին այն հանգամանքը, որ Ուկրաինայում որոշումները փոփոխվում են այնպիսի արագությամբ, որ անգամ ժամանակին արձագանքելու հնարավորություն չի մնում: Խորհրդարանը ցրելու որոշումը զուտ ուկրաինական տրամաբանությամբ անցած բանակցությունների ու Գերագույն ռադայի «գիշերային հերթափոխի» չկայացած աշխատանքի արդյունքում կրկին ենթարկվում է փոփոխության ու նախագահ Յուշչենկոյի ձեռամբ դառնում Ռադայի լիազորությունները երկարաձգելու որոշում:

Թեեւ «նարնջագույն» հեղափոխություն տեսած երկրում նոր խորհրդարան կազմելու միջոցով քաղաքական ճգնաժամից դուրս գալու որոշումը ֆիզ թե շատ ժողովրդավարական է, սակայն Ուկրաինայի նախագահի՝ գլխավոր դատախազին ազատելու որոշմանը դեմ գնացող խորհրդարանի աշխատանքները դադարեցնելու հեռանկարը բնավ էլ եվրոպական ժողովրդավարության մոտեցումներից չէ: Պակաս կարեւոր չէ եւ այն հանգամանքը, որ Ուկրաինայի ներքին գործերի նախարարը կաթված է սանում, որը, որոշ կարծիքների համաձայն, կարող է թունավորման հետեւանք լինել: Ներքին գործերի նախարարն էլ սկանդալային պատմությունների մասնակից է համարվում, ավելին, նրա նկատմամբ քրեական գործեր են հարուցված:

Եվ այսպես, գունավոր հեղափոխությունը ողջունող Եվրոպան ու ժողովրդավարության դրոշակակիր ներկայացող, դրանից արեւմուտք գտնվող տերությունը հիմա նախընտրում են լռությունը, կարծես Ուկրաինան վերացել է քաղաքական քարտեզից, այնտեղ տեղի ունեցող գործընթացներն էլ որեւէ առնչություն չունեն Յանուկովիչ-Յուշչենկո հակադրությունը ժամանակին կարետրող կառույցների հետ:

Ի դեպ, Ուկրաինան միակ օրինակը չէ, երբ ստանդարտները գործադրվում են ըստ հարմարության ու ծառայում են կոնկրետ շահերի, այլ ոչ թե ժողովրդավարական նպատակների: Այն, ինչ այսօր ադրբեջանական իշխանությունները իրականացնում են ընդդեմ մամուլի, միանշանակ վկայում է, որ ժողովրդավարության գեղեցիկ, բարեհունչ ու արժեքավոր հասկացությունները միշտ էլ օգտագործվում են այն ժամանակ, երբ դրանք կարելի է ծառայեցնել որեւէ գերտերության շահերին: Ժողովրդավարության մասին Ադրբեջանի պարագայում թերեւս հիշեն այն ժամանակ, երբ ադրբեջանական իշխանությունները այլ կեցվածք ընդունեն նավթագազային հարաբերություններում:

Գոյություն չունի այնպիսի կառույց, միջազգային այնպիսի ատյան, որ խոսի ազատության կարետության մասին չխոսի ամենաբարձր ձայնով, ի լոտ ամենի: Հարգելի կառույցներ, հետաքրքրական է, թե որն է կոնկրետ քայլերի բացակայության պատճառը, երբ Ադրբեջանում փակվում են արդարության ու անաչառության կատեգորիաներին որոշ առումով համապատասխանող ատյանք տանող թերթերը, ձերբակալվում ու դատապարտվում են լրագրողներ, խմբագիրներ, մեղադրվում ահաբեկչության կազմակերպման, զրպարտության ու էլի նման «հարմար» հոդվածներով: Ավելին, նավթային դրդավարությունը թերեւս նույնքան հետաքրքիր իրավիճակ պատկերացնող Ադրբեջանի լրագրողներն ուղղակի քաղաքական ապաստան են խնդրում այլ երկրներից:

Բայց դե, ինչպես կարելի է, ինչպես խոսել Ալիեւ կրտսերի դիկտատուրայի, տոտալ վերահսկողության, անգամ ինտերնետային գրաքննության երեւույթների մասին, երբ նույն գերտերությունները «նավթային ծարավ» են հագեցնում Կասպից ծովի մերձափնյա հատվածում: Իսկ ավելի կոնկրետ, «ազատություն», «անկախություն», «երկխոսություն», «արդարություն» ու էլի նման գեղեցիկ բառերով սեփական անվանումները «ծաղկեցրած» միջազգային կազմակերպությունները թերեւ խնդիր ունեն մտահոգվելու սեփական անաչառության առումով, այլ ոչ միայն բավարարվելու ադրբեջանական իշխանությունների՝ մամուլի հանդեպ վերաբերմունքի առնչությամբ մտահոգություններ արտահայտելով:

Մյուս կողմից, ի՞նչ կա զարմանալու: Երկակի մոտեցումները առկա են ամեն ինչում: Այլապես դժվար կլիներ հասկանալ այն նույն Եվրոպայի ու Միացյալ Նահանգների կեցվածքը, երբ միջազգային կառույցները փաստում են, որ Ադրբեջանը թաթ ունի եվրոպական կառույցների հանդեպ ստանձնած սեփական պարտավորությունների ու ընդհանրապես այդ կառույցների գնահատականների վրա:

Ինչեւէ, երբ ադրբեջանական կազմակերպությունները, պետական ինստիտուտները, երկիրը հորից ժառանգած նախագահն էլ հետը, խոսում են ժողովրդավարությունից, ավելին, այդ նույն ժողովրդավարության դրսեւորում են ներկայացնում «Ղարաբաղին հնարավոր լայն ինքնավարություն» տրամադրելու պատրաստակամությունը, հուսանք, որ կարճ չի լինի միջազգային կառույցների՝ ԵԱՀԿ-ի, ԵԽԽՎ-ի ու մյուսների հիշողությունը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 ՅՈՒՆԻՍ 2007 ԷՋ Ա

ՀԱԿԵԼԿԱԾ ՄԱՄՈՒՅՆ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 11(30)

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԵՐԸ ՈՒՐԻՀ Է

Մի քանի տարի առաջ նորից մեր նորանկախ հանրապետությունում ընտրություններու օրեր էին, երբ Միացյալ Նահանգներից էր, թե՞ Արեւմտյան Եվրոպայից, վայ թե Միացյալ Նահանգներից, լուր էին ուղարկել Հայաստան, որ լավ իմացեք, ձեր գործերը չեն համապատասխանում democracy-ին: Կարծեմ շեշտել էին՝ արեւմտյան democracy-ին, իսկ հայերուն մեջ գտնվեց մի ղեկավար պետական գործիչ, որ անպատասխան չթողեց դեմոկրաս ախոյանին: Մենք շատ լավ գիտենք ձեր դեմոկրատիան, ասաց նա, ասելիք չունինք, բայց մեր դեմոկրատիան ալ ուրիշ է: ՄԵՐ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՈՒՐԻՇ Է, կարծ՝ ՄԵՐԸ ՈՒՐԻՇ Է: Կարծեք, մեր պատասխան նամակը (պատասխան Հազկերտին) կրնար թվալ հանդուգն ու անլուրջ: Դա՝ առաջին հայացքից, իրականին մեջ՝ մեր 16-ամյա անկախության ժամանակին արտասանված ամենալուրջ հայ հասուն քաղաքական մտքի ձեւակերպումն էր, կրնանք ըսել aphorisme մը: Եղբայր, մեր երկրին վիճակը մի հատ նայեք: Հիմա նորից ընտրություններով ենք զբաղված: Ամբողջ ժամանակը մամուլում, ձայնասփյուռից, հեռուստացույցից քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, պետական այրեր օրն ի բուն, ինչպես վնասված սկավառակ (թեեւ հիմա սկավառակով երաժշտությունը լսելը, կարծեք, հիշեցնում է քարե դարը, բայց վնաս չունի, գրամաֆոնի ասեղը նույն գիծին վրա կրկնում է), որ ընտրություններն այս անգամ անպայման պիտի ըլլան արդար, առանց խարդախության, թափանցիկ, եւ որքան նույն բանը ասում ենք, այնքան օտար դիտորդներու Հայաստան մուտքի վիզայի դիմումները բազմանում են՝ գալու եւ մասնակցելու մեր ընտրություններուն: Ովքե՞ր են այս մարդիկը, ինչո՞ւ են խառնվում մեր գործերուն: Եթե ասեմ, որ արհեստավարժ ձրիակերներ են, կարծեմ ավելի ճիշտ կըլլար:

Ես, ճիշտը եթե կուզեք, ընտրություններուն խարդախվելուն բնավ նշանակություն չեմ տալիս: Այսպես արտահայտվելով՝ օրիգինալ ըլլալու, հայրենակիցներուս հատուկ ուշադրության առարկան դառնալու նպատակ չունիմ, հավատացեք: Ես գտնում եմ, որ ավելի կարեւորը այն է, որ Հայաստանի նախագահը հայ է, վարչապետը հայ է, խորհրդարանի պատգամավորները հայեր են: Կարելի է շարունակել հայության մասին: Բայց այստեղ ես կուզեմ մանավանդ հիշեցնել, որ հայ ժողովուրդը 70 տարի պարել է մարդ արարածի պատմության ամենապայծառագույն եւ արտասովոր հասարակարգին բռնապետության տակ, ավելի ճիշտ բառով՝ ոճրային տիրապետության տակ: Եվ այս պահուն միայն հիշենք, որ 70 տարի աչխարհի մեկ վեցերորդի տարածքի վրա սովետական քաղաքացիները ապենը մեկ պետք էր մասնակցեին ընտրություններու, պետք էր երթային քվեատուփին մոտ, որպեսզի ամբողջ աչխարհը իմանար, որ Սովետական Միությունում ընտրություններ են տեղի ունեցել: Կառավարության անդամներեն սկսելով իսկական տղամարդ մարշալները, գիտնականները, արվեստագետները, բժիշկները, սպորտսմենները, կանայք, տղամարդիկ, մի խոսքով՝ փառապանծ պրոլետարիատը, բանվոր դասակարգը գյուղացիության եւ անկուսակցականների հետ դաշինք կնքած: Իսկ այդ հրաշքը ինչպե՞ս էր տեղի ունենում. մարդ չէր հարցնում ինչպե՞ս հնարավոր էր միակը ընտրել: Բայց եւ այնպես սովետական քաղաքացիներու 9999 տոկոսը ընտրում էր: Երեք մարդկային լեզուն այսպես չի այլանդակվել: Ինչը չէր այլանդակվում Ս. Միությունում, որ բառը չայլանդակվեր:

Այստեղ, ներեցեք, մի սովետական ժամանակի անեկդոտ հիշեցի, կարծեմ Նիկիտա Սերգեյիչի օրերից: Որ մի մեծ հավաքի ժամանակ, անշուշտ պարտիական, Նիկիտա Սերգեյիչը իր կողքը նստած, կարծեմ, Միջին Ասիայից եկած մի սովխոզի նախագահին, որուն պարտիան շաբաշանով պիտի պարգեւատրեր նրա կատարած սխրագործություններու համար, հարցնում է. Ընկեր «Ք.», մի՞թե ձեր սխրագործությունը այստեղ ավարտվում է, չեմ հավատում, որ դուք չեք կարող կովի կաթնատվությունը էլ ավելի բարձրացնել: 30 լիտրը վստահաբար կրնանք հասցնել 35 լիտրի: Խեղճ նախագահը ինչ ասի, խոստանում է ամեն ինչ անել պարտիայի փափագը բավարարելու համար: Բայց Նիկիտա Սերգեյիչը ոգեւորված շարունակում է հարցնել եւ ուզում է իմանալ, որ եթե ավելի լարի ուժերը, մեր սովխոզի նախագահը չի՞ կարող միթե իր կովին ռեկորդը բարձրացնել նաեւ էլի մի հինգ լիտրով: Խեղճ նախագահը ո՞ւր փախչի, պատվո խոսք է տալիս, որ անպայման ամեն ինչ կանի սովետական սովխոզնիկին եւ կովին պատիվը գետնով չտա: Նիկիտա Սերգեյիչի ոգեւորությունը հասնում է իր գագաթնակետին եւ մի անգամ էլ հարց է տալիս. Ընկեր «Ք.», եթե քո պարտիական ամբողջ ուժերդ լարես, մի՞թե չես կարող սովետական կովին համոզել, որ էլի 5 լիտր էլ ավելացնե իր կաթը: Նիկիտա Սերգեյիչը երեւի ուզում է սուզվել՝ մարքս-լենինյան գաղափարախոսության համար անկարելի բան կա՞: Մանավանդ այդ տարիներուն ասում էին՝ հեսա ուր որ է սոցիալիզմը դեն էինք շպրտում եւ անցնում կոմունիզմին: Մեր խեղճ սովխոզի նախագահը քրտինքներու մեջ կորած՝ կակազելով խոստանում է ամեն բան անել կապիտալիստական կովերուն մի լավ նոկաուտ անելու համար: Ես ռուսերեն չեմ գիտեր, այս պատմությունը հիշեցի, երբ Լենինականում էինք ապրում եւ մեկ-մեկ երբ մայրաքաղաք էինք գնում, վերադարձին մեր հայրենադարձ ընկերներուն պատմում էինք Երեւանում այդ օրերուն արագորեն տարածված «Հայկական ռադիոյի» անեկդոտները: Այս մեկը պատմեց ողորմածիկ ընկերս՝ Աբրահամը, որ ինձի հետ նույն նավով ներգաղթել էր Հայաստան, եւ ես, ինչպես տեսնում եք, չեմ մոռացել նույնիսկ ռուսերեն բառերը: Ուրեմն, ավարտելու համար, խեղճ սովխոզի նախագահը խոստանում է Նիկիտա Սերգեյիչին, որ կովին կաթնատվությունը 5 լիտրով էլ ավելացնելու է, բայց զգուշացնում է, եւ Նիկիտա Սերգեյիչին ասում է. «Բուդեթ, Նիկիտա Սերգեյիչ, բուդեթ, բայց սավսեմ վադա բուդեթ»:

Շարունակեմ, ընտրությունների մասին էինք խոսում: Ինչ էիք ուզում հայ ժողովուրդեն, հայ ընտրողեն, որ 70 տարի սովետական զզվելի պետության կազմակերպած ընտրություններուն է մասնակցած: Բայց ի պատիվ մեր ժողովուրդին, երբ իրական ընտրություն անելու առիթը ներկայացավ, մեր ժողովուրդը միանգամից, առանց տատամսելու, իր քվեն տվավ ոչ պարտիականին, երբ երկիրը տակավին կոմունիստական բռնապետության ենթակա էր: Գոնե մի քանի իրական ընտրություններու մասնակցեցավ մեր ժողովուրդը: Առաջինը, երբ մի քանի տղաներ Ազատության հրապարակեն ուղիղ մտան Գերագույն սովետ: Ինչ «կայֆ» էր թելեվիզիոնից տեսնել այդ տղերքի ելույթները, երբ ինչպես քուրջի էին վերածվել կոմկուսի ահարկու զորքաները: Չերկարեմ, հետո նորից իրական ընտրություններ՝ երբ նոր խորհրդարանին պատգամավորներու կեսը կոմկուսի հետ գործ չուներ: Հետո՝ առաջին խորհրդարանի նախագահին ընտրությունը, երբ քանի մը «տուրից» հետո ընտրվեց Լեւոն Տեր-Պետրոսյանը, հետո՝ Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունը. էլի Լեւոն Տեր-Պետրոսյանը ընտրվեց Հայաստանի երրորդ Հանրապետության առաջին նախագահ: Ինչ հուզիչ եւ ոգեւորության օրեր էին, երբ ժողովուրդը նստած հեռուստացույցին դիմաց հետեւում էր դեպուտատներու ելույթներուն եւ գործունեությանը: Ինչ մակարդակ էր. վերջապես ժողովուրդը լսում էր պարզ հայերեն լեզուն: Ոչ թե բոլշեւիկյան փայտե լեզուն:

«...Բայց ափսոս որ երազ էր», ինչպես ասում է մեր անուշ երգը: Կարիք չեմ տեսնում երկարելու, առաջին ընտրությունեն հինգ տարի անց, նորից նախագահի ընտրության ժամանակ պարզվեց, որ նույնիսկ 11-հոգանոց այդ հայ հերոս տղերքի խումբը կազմված էր տասներից, որոնք բռնապետության դեմ քաջաբար պայքարել, բանտ էին ընկել, տանջանքներ կրել, ի վիճակի չէին զսպել իրենց մանր «ամբիցիաները»՝ մոռանալով, որ հայ ժողովուրդը ինչ հավատով հետեւում է իրենց վարք ու բարքին: Ափսոս, հազար ափսոս, որ չկարողացան օրինակ հանդիսանալ կարգապահության եւ իրարու հանդեպ սիրո: Դարձան օրինակ պառակտումի: Նախագահական երկրորդ ընտրությանը պարզ դարձավ, որ, ինչպես ասում է Ավետարանը, «...կշռվեցար եւ պակաս գտնվեցար...»: Արդեն պարզ դարձավ ընտրողներուն համար, որ թեկնածուները այլեւ այնքան նման են իրար, որ անիմաստ է ընտրել: Պարզ դարձավ, որ «մերը ուրիշ է», որ խորհրդարան մտնելու համար ընտրողներու քվեին կարիք ալ չկա, բայց վնաս չունի, թող ընտրողները գան: Չինական կոմիտե առած մը հիշեցի: Չինացին ասում է՝ կնոջդ ծեծե, եթե դու չես իմանում ինչի՞ համար ես ծեծում, նա իմանում է:

Նախագահական երկրորդ ընտրությունը ցույց տվեց, որ հայ ժողովուրդը կապ չունի ընտրություն հասկացողության հետ: Հայ մարդը, անհատը վերջին 70 տարիներեն շատ առաջ, հազար տարիե ի վեր, սեփական պետություն չուներ եւ ապրում էր իբրեւ բռնապետության հպատակ: Փոխարենը, մանավանդ հայը՝ իբրեւ ընտիր ազգի զավակ, օժտված բնածին կարողություններով, դարերու ընթացքին իր գոյությունը պաշտպանելու համար մշակել էր ինքնապաշտպանություն, կենաց-մահու պայքարի մեջ ապավինելու միմիայն իր ուժերուն, իր կարողություններուն եւ խորքում էր որեւէ գործակցութենե ուրիշներու, իր նմաններու հետ: Հայը՝ իր նմանին չհանդուրժող, նախանձը, խանդը, մրցակցության ոգին, իրեն ցույց տալու առիթներ փնտրող, օտարին թենող, բայց իր ազգակիցի հետ չգործակցող: Անշուշտ լավ հատկություններ ալ ունենալու էր հայը, որոնք չէին կարող երեւան գալ օտարի լուծին տակ: Հայը դադարել էր ժողովուրդ ըլլալե, դարձել էր, ինչպես բանաստեղծն է ասում, փոշի ազգ: Բայց ամենամեծ դժբախտությունը այն էր, որ մինչեւ սովետական ոճրագալի ռեժիմին հայտնվելը հայը օտար տիրապետության տակ կարողացել էր պահել անպայման իր բնածին ունակությունները: Լավագույն օրինակը՝ 1915 թվականի եղեռնե վերջ, երբ ողջ մնացած թրքահայերը արմատախիլ եղան եւ վտարվեցան իրենց բնօրրանեն, հայտնվեցին օտար երկիրներու մեջ, օտար լեզուներու մեջ, բնավ չխեղճացան, չսորացան, որովհետեւ արհեստավորներ էին, հողագործներ եւ առեւտրականներ էին, նաեւ համալսարանական կրթությամբ մասնագետներ, եւ օտար երկիրներու մեջ անմիջապես նկատվեցին: Ուշադրություն գրավեցին եւ գնահատվեցին: Իրենց պարուսը շահիլը եւ իրենց ընտանիքը պահելը երկար ժամանակ չպահանջեցին հայեն:

Շարունակությունը հետո երեւի տխուր է, եւ ահավասիկ տեսեք նույն հայ ազգի զավակները, որոնք հեռացան Երրորդ հանրապետեն, իրենց հայրենիքեն՝ օտարության մեջ իրենց կյանքը պահպանելու համար: Որքան հայեր, ուղղակի անհավատալի է, չունենալով որեւէ պատրաստություն՝ հոգեւոր եւ ֆիզիկական, քանի որ սովետը այլասերած էր հայերուն՝ սիրելով, որ հայ մարդը դառնա պրոլետար, բանվոր, այն ալ սովետական բանվոր, անհատականություն ունեցող, օժտված հային դարձուց անդեմ մասսա: Ախր, հայը բանվոր չէ, նա ավելիին կարող էր, շատ ավելին: Հայը կոլխոզ-սովխոզ չէ: Հայ հողագործը գնացել է հեռավոր Կալիֆոռնիա նահանգը եւ տնկել խաղողի վազեր, խաղողի չամիչ ուտելն ամերիկացիներին սովորեցրել: Հետս չի եղել, բայց թափած քրտինքը արդյունավորվել է հաջողությամբ: Կալիֆոռնիայում կա խաղողագործության ինստիտուտ, որուն ստեղծողները եւ ղեկավարները հայրենիքեն Միացյալ Նահանգներ գաղթած հայորդիներու ժառանգներ են եղել: Սովետական ռեժիմը այլասերեց հայ ժողովուրդը: Այս կեղծ, արվեստական տնտեսությունը, որ ստեղծեց Մոսկվան, քարտմանդ եղավ, եւ բան չմնաց Հայաստանի համար, մնաց թռնավոր կլիման եւ գործազրկությունը: Ամենամեծ աղետը ժողովուրդի մը եւ պետության մը համար: Գործազուրկը ինչպես իրեն լիարժեք մարդ զգա: Օգնությունով, թեկուզ պանդուխտ ազգական-բարեկամներու ուղարկած օգնությունով, անհատը ինչպես կարող է իրեն զգալ ԱԶԱՏ եւ ԱՆԿԱԽ: Իսկ եթե ժողովուրդ մը բաղկացնող անհատներուն մեծ մասը գործազուրկ է, ինչպե՞ս կարող է իրեն համար ստեղծել ԱԶԱՏ եւ ԱՆԿԱԽ պետություն: Գործազրկութենեն ծնվում է հանցագործը: Երկար ժամանակ գործազուրկը վերջ ի վերջո դառնում է հոգեկան հիվանդ: Գործազրկությունը ամենադարարս հողն է «կրիմինալին» համար: Այնպես որ, արդեն քանի տարի է ժողովուրդին կողմե «ընտրված» մարդիկ անկարող ըլլալով լուծել երկրին առջեւ ծառացած խնդիրները, մտածում են իրենց անձնական հարցերը լուծել, եւ անշուշտ լուծում են: Ագահությունը, ընչաքաղցությունը, նյութապաշտությունը... 7 մահացու մեղքերը դարձել են պաշտամունք «նոր հայերու» համար:

1915 թվականի եղեռնը, Ցեղասպանությունը մարդկության պատմության գիրքեն սրբեց արեւմտահայությունը: Թուրք ճիվաղներուն հաջողվեց իրականացնել՝ իրենց հողերուն վրա, մեր բնօրրանին մեջ, ոչնչացնել հայությունը: Պատմության ծաղրը ըլլար կարծեք, որ հայությունը ցրվելով աչխարհով մեկ եւ ապրելով ավելի «քաղաքակրթված» երկիրներու մեջ, դատապարտված էր անհետանալու, ձուլվելու ուրիշ ժողովուրդներու մեջ: Օտարության՝ մեզի պարգեւած հաջողության, բարգավաճումի տարին էինք վճարում, վճարում ենք: Մնացորդացին համար քիչ ժամանակ է մնում: Ես երկու թոռնիկ ունեմ, որոնք երբ հասնին իմ տարիքիս, ո՛չ, հիմակվանից արդեն կանադացիներ են: Այսպես ստացվեց՝ ես օտարությունից ապաստանեցա հայրենիքս, իրենք՝ օտարության մեջ ծնան, մեծանում են, արդեն համալսարանի ուսանողներ են եւ հարստացնելու են Կանադան: Մեզի մնում է մեր հայրենիքը, մեր հողը, հողին վրա մեր լեզվին մեջ մենք կարող ենք գոյատեւել: Ուրիշ հնարավորություն չկա հայուն համար: Ահավասիկ հարցերու հարցը. ինչպե՞ս պաշտպանենք մեր հողը եւ պետությունը: Սովետական այլասերումի ամենապարզ ապացույցներեն մեկը, կարծեք, հայ մարդուն մեջ հաստատված ճակատագրապաշտությունն է, երեւի ճշգրիտ բառը չէ, պասսիվության բացակայությունը հայու մտածողության մեջ: Ո՞վ է կառուցել Լենինական քաղաքը: Ինքը չէ, այսինքն սովետական հայ քաղաքացին չէ: Սովետական պետությո՞ւնն է: Եթե ցեմենտը, երկաթը գողանում են, եթե երեք հարկից ավելի շենքեր են կառուցում, իր ինչ գործն է: Քաղաքը տասը անգամ պակաս զոհեր պիտի տար ահավոր երկրաշարժին, եթե լենինականցիները գիտակցությունը ունենային, որ քաղաքը իրենցն է եւ իրենք են կառուցում: Տասնյակ հազարավոր հայեր, ասում են՝ մինչեւ 50 հազար զոհ գնացին հանցագործ սովետ ղեկավարության: Որեւէ մեկը դատի կանչվե՞ց: Ոչ մեկը: Անշուշտ: Ինչ կա որ, դուն սաղ ըլլաս, ախտեր ջան: Երկրաշարժ է, մեռել են, թաղվել են, ջանդ սաղ ըլլա: Լենինականը մնաց աղետի գոտի, հոգ չէ, տեղը Երեւանում կազինոներ, ռեստորաններ, բոզանոցներ կկառուցեն: Ընտրություն է, թող ըլլա, «մերն ուրիշ է», ով ուզում է թող ընտրվի: Հետո, մենք գիտենք արդեն, որ իսկայական հողեր ունինք, Լենինականը ինչ է որ: Ղարաբաղը, Նախիջեւանը, Զավախքը, Սեւ ծովեն մինչեւ Միջերկրական ծով: Սեւրի դաշնագիրը՝ վերջ ի վերջո, ՀԱՅ ԴԱՏԸ վերջ ի վերջո պիտի ստիպե Միացյալ Նահանգներուն, Ֆրանսիային եւ մյուս երկիրներուն, որ մեր պատենական հողերը թուրքերեն վերցնեն եւ մեզի տան: Ոչինչ, որ հազար տարի առաջ հայոց Հովհաննես Սմբատ թագավորը Անի քաղաքը նվիրեց Բյուզանդիային, հին պատմություն է՝ չարժի հիշել: Պատկերացնում եք, այդ ամբողջ հողերը հայերուն տան: Պակասամիտներ կան, որ ասում են՝ բա ո՞վ պիտի բնակի այդ հողերուն վրա: Հիմար հարց: Ինչո՞ւ մարդ պիտի երթա այնտեղ բնակի, մեր հողերը չե՞ն, կծախենք: Նավթ չունենք, կծախենք օտարներուն, այդ փողերը օվեյցարական բանկերը կդնենք եւ եկամուտներով, օխ պարան, կարիք տարբեր ծովափներուն, խաղատուններն ալ կան: Միայն եղե՞ռն, միայն ցեղասպանությո՞ւն, մենք ալ իրավունք չունի՞նք մարդավարի ապրելու, կարիք չկա բազմանալու:

Տեսեք ինչեր եմ մտածում: Այսինքն, որ չինացիները մեկ միլիարդ երեք հարյուր միլիոն են, ինչ են անելու:

Երկար ժամանակ է մտածում էի մեր ժողովուրդին մասին, մեր երկրի մասին: Շատ բաներ կային եւ հիմա էլ կան միտիս մեջ: Բայց այս անգամ այսպես ստացվեց:

Ինչ պիտի ըլլա մեր ժողովուրդի վիճակը՝ չեմ գիտեր:

Ես ալ արդեն լավ ծերացած խեղճ ու կրակ հայն եմ:

■

Ստահոգություն

Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են: Ուրախ ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է մեր հայրենիքում:

Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյան

Խորագիրը կարող է առաջին հայացքից տարօրինակ թվալ, քանի որ նմանատիպ նամակները սովորաբար ուղղվում են երկրի պետական բարձրագույն իշխանությանը: Այստեղ բարձրացված հարցը եւս իր վերջնական լուծումը գտնելու է մեր երկրի քաղաքական բարձրագույն իշխանության կողմից, սակայն սա մի հարց է, որի համար ազգային բարոյական պատասխանատվություն է կրում մեր ողջ ժողովուրդը, հասարակությունը եւ հատկապես մտավորականությունը: Եվ հասարակական նեռազդմամբ ի չիք դարձնել հայ մշակույթի դեմ նյութվող այս ոճիրը, նշանակում է հավաստել, որ մենք որպես ժողովուրդ եւ որպես հավաքականություն ի զորու ենք ի չիք դարձնել բոլոր այն գործարքները, որոնցով կարող են աճուրդի հանվել մեր ազգային անկորնչելի արժեքները:

Ասվածը վերաբերում է ԱՄՆ Մինեսոտայի նահանգի Hill թանգարանի եւ Մաշտոցյան Մատենադարանի միջեւ կնքված պայմանագրին, որը թեեւ այնուհետեւ չեղյալ հայտարարվեց Մատենադարանի կողմից, սակայն չարորակ այդ գործարքի վերակենդանացման մեծասազները այսօր եւս շարունակում են ի հայտ գալ եւ անգամ գիտության ու կրթության նախարարության մակարդակով, որը Մատենադարանի կողմից լուծարված պայմանագրի համար հայտարարել է, թե այն ինքը պարզապես սառեցնում է:

Ահա այս պատճառով փորձենք մի անգամ եւս ամփոփ ձեւով ներկայացնել այդ պայմանագրի հնարավոր կնքման դեպքում առաջ գալիք աղետալի հետեւանքները ոչ միայն հայագիտության համար, այլեւ ընդհանրապես՝ ազգային-մշակութային տեսանկյունից:

Այս չարաբաստիկ պայմանագրով նախատեսվում է, որ հիշյալ թանգարանի տրամադրած միջոցներով եւ տեխնիկայով թվայնացվում, այսինքն՝ թվային տեխնիկայով լուսանկարվում է Մատենադարանի ձեռագրային ողջ ֆոնդը, որի փոխարեն թվայնացված օրինակների մեկական պատճեն տվելու է հիշյալ թանգարանին, որով, ըստ էության, Հայաստանից դուրս ստեղծվում է Մատենադարանի թվայնացված կրկնօրինակը՝ Մատենադարանի կլոնը, եւ Մաշտոցյան Մատենադարանը դադարում է եզակի մի հաստատություն լինելուց, որը շնորհիվ ձեռագրագիտական-աղբյուրագիտական իր հիմքի, միջազգային առումով հայագիտության բնագավառում ունի թելադրող դիր:

Շատ է գրվել պայմանագրի տարբեր կետերի անհամապատասխանության եւ դրանց միջոցով Մատենադարանին հիշյալ կազմակերպությունից ստրկական կախվածության մեջ գցելու, պայմանագրի կետերի հայերեն եւ անգլերեն տարբերակների միտումնավոր անհամապատասխանության մասին, սակայն եթե անգամ վերացվեն բոլոր այս անհամապատասխանությունները, ուժեղացվեն պայմանագրի բոլոր կետերը, որը, որպես խայծ, այսօր շարունակ մատուցվում է տարբեր քննարկումներում, այդ ամենից ոչինչ չի փոխվի, եթե մնա միայն այն կետը, որով ասվում է, թե թվայնացված կրկնօրինակների պատճենները պետք է դուրս տվեն:

Հարցերի հարցը եւ հանցագործությունների հանցագործությունը այս մի կետն է, մնացյալը դասակարգ մտավարժանքներ են՝ իրավաբանական տարբեր ձեակերպումներով: Իրավաբանական ինչ երաշխիքներ էլ տվեն, դուրս հանված պատճենների վերահսկողությունը տեխնիկապես անհնարին է, եւ այս թանգարանը ում ինչ ցանկանա, կարող է տրամադրել, էլ չասած՝ վաճառել: Մի կողմ թողնելով այն հարցը, թե այդ թանգարանը պատճենները տնօրինելուց ինչպիսի հսկայական շահույթներ կստանա, որը ինքնին շատ կարեւոր է՝ մենք փորձենք ներկայացնել այն հարվածը, որը կհասցվի հայագիտությանը եւ մեր ազգային նվիրական արժեքներին:

Այս պայմանագրի կողմնակիցները մատնանշում են այն հանգամանքը, որ տվյալների գիտական փոխանակման ընդունված կարգով, համանման մյուս հաստատությունների պես Մատենադարանը եւս ամեն տարի տարբեր ձեռագրերի պատճեններ է տալիս արտասահմանյան գիտնականներին, ինչպես եւ իր հերթին ինքը ստանում աշխարհի հայկական ձեռագրերի պահոցներից, որով եւ Մատենադարանը ունի դրսի հավաքածուների տարբեր մանրաժապավենների առանձին մի ֆոնդ: Այսինքն՝ այն նյութերը եւ ձեռագրերի էջերը, որոնք հետաքրքրում են դրսի հետազոտողներին, նրանք, այսպես թե այնպես, ստանում են, եւ անկախ այս պայմանագրի կնքումից՝ Մատենադարանին ուղղված նմանատիպ խնդրանքները այստեղ եւս պետք է բավարարվեն:

Այստեղ, սակայն, կա մի էական տարբերություն: Այս կամ այն հետազոտողին որեւէ բնագրի կամ բնագրերի էջերի պատճենները տալը քանակական առումով որեւէ որակ չի կազմում եւ դրանով որեւէ ձեռագրախումբ իսկ չի վերարտադրվում, ուր մնաց թե ամբողջ Մատենադարանը: Ավելին, նման որեւէ խնդրանքով դիմելուց առաջ հետազոտողները Մատենադարանում նախ համեմատում են տվյալ բնագիրը պարունակող ձեռագրերը եւ նոր պատվիրում ամենաանհրաժեշտները, իսկ պատճենները դուրս տալու դեպքում որեւէ գիտնական այլեւս Հայաստան գալու կարիք չի ունենա: Եվ սա ոչ միայն վնաս է գիտական շփման եւ համագործակցության առումով, այլեւ գիտական համակարգման եւ վերահսկման անդառնալի կորուստ հետեւյալ պատճառով:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Բաց նամակ մտավորականությանը

Մատենադարանը՝ մեր պատմական հայրենիքի մանրակերտը

Մատենադարանում պատվիրվող յուրաքանչյուր ձեռագրի համար պահանջաթերթիկում նշվում է ուսումնասիրության թեման, ինչպես նաեւ դա պարզ է դառնում պատվիրվող ձեռագրերի պարունակած նյութերից եւ գիտնականների հետ անմիջական շփումներից: Հայկական ձեռագրերը, բաժանելով մեր ժողովրդի ճակատագիրը, թեեւ սփռված են ողջ աշխարհով, սակայն միջնադարագիտությանը վերաբերող հայագիտական որեւէ խնդիր հնարավոր չէ լիարժեք քննության ենթարկել առանց Մատենադարանի ձեռագրերից օգտվելու, այսինքն՝ առանց Մատենադարանի իմացության, որով, շնորհիվ Մատենադարանի, հայաստանյան հայագիտությունը իրազեկված է, թե աշխարհում ով եւ ինչ հաստատություն հայագիտական ի՛նչ խնդրով է զբաղվում, որով ուղղվում են թե՛ դրսի հայագիտության հետաքրքրությունները եւ թե՛ առաջնային ուղղությունները, իսկ թե որքանով է կարեւոր իրազեկ լինելը ընթացիկ գիտական հետազոտություններին, երեւում է հենց արտասահմանյան գրադարանների եւ թանգարանների օրինակով:

Մատենադարանում եթե հետազոտողը իր պատվերում միայն ձեռագրի համարն է նշում, ապա աշխարհի շատ ձեռագրային պահոցներում պահանջվում է ոչ միայն ձեռագրի, այլեւ այդ ձեռագրերում նայվելիք էջերի թերթահամարները նշել, ասենք օրինակ՝ 56ա-89բ: Ինչի համար է պահանջվում նման նշումը, որը վերաբերում է ընդհանրապես բոլոր ձեռագրերին, անկախ նրանից, թե ինչ լեզվով են, կամ հայագիտությանն են վերաբերվում, թե՛ բյուզանդագիտությանը, կովկասագիտությանը կամ թուրքագիտությանը: Մասնանշումը նայվելիք ձեռագրերի թերթերին պայմանավորված է ոչ թե ձեռագրերի հանդեպ մտահոգությամբ, այսինքն՝ պատճառը այն չէ, որ իզուր տեղը չթերթվեն տվյալ ձեռագրի մնացյալ էջերը, այլ միանգամայն ուրիշ նպատակ ունի: Ձեռագիրը եւ հատկապես ժողովածուները թեմատիկ առումով բազմազան նյութեր են պարունակում, եւ եթե հետազոտողը միայն ձեռագրի համարն է նշում, ապա տվյալ հաստատության համար արդեն այնքան էլ հստակ չի լինում, թե այդ գիտնականը հատկապես ինչ թեմայով է զբաղվում, որի համար էլ պահանջվում է նշել նաեւ տվյալ ձեռագրի թերթերը, որպեսզի թեման լիովին հստակ լինի եւ ըստ այդմ էլ՝ ինֆորմացիան, թե տվյալ գիտնականն ինչ թեմայով է զբաղվում:

Մատենադարանը պատճենավորմամբ որպես մի կլոն հանձնելով Hill թանգարանին, մենք հնարավորություն ենք ստեղծում, որ որեւէ հետազոտության համար արդեն դիմեն այդ թանգարանին, եւ մենք ինքնակամ մեզ զրկում ենք գիտական ինֆորմացիայի այն կարեւորագույն աղբյուրից, որին գիտությունների ցանկացած բնագավառում ձգտում են տիրանալ աշխարհի տարբեր կենտրոններ:

Այս համատեքստում չպետք է մոռանալ այն կարեւորագույն հանգամանքը, որ հումանիտար գիտությունները գնալով շեշտված քաղաքական ուղղվածություն եւ ենթատեքստ են ստանում, որը, դժբախտաբար, ուղղակիորեն արտահայտվում է հենց հայագիտության բնագավառում, որի բնորոշ փորձերն են Արեւմտյան Հայաստանի հուշարձանները սոսկ բյուզանդական արվեստի պրովինցիալ արտահայտություն, իսկ Արցախի հուշարձանները՝ աղվանական մշակույթի դրսեւորումներ հայտարարելը: Անշուշտ, կարելի է ենթադրել, որ ոչ միայն թուրք եւ ադրբեջանցի, այլեւ օտարազգի շատ գիտնականների կողմից կատարվող նման փորձերը գիտական օբյեկտիվությամբ չէ, որ պայմանավորված են, այլեւ մի շարք գործոններով, եւ հանձնել Մատենադարանի ձեռագրերի պատճենները, նշանակում է ոչ միայն զրկվել նրանց հետազոտությունների ընթացքին հետեւելուց եւ հակազդելուց, այլեւ պարզապես փաստի առջեւ կանգնել յուրահանչյուր մի նոր հրապարակումից հետո:

Պատճենների տրամադրումը կրկնակիորեն աղետալի կլինի նաեւ Մատենադարանում ամբարված գրական մեծ հուշարձաններից մինչեւ հայ բանաստեղծության մարգարիտների հրատարակության առումով: Տասնամյակներ շարունակ Մատենադարանում ընդունված կարգ է, որ եթե որեւէ գիտնական որեւէ գործի բնագիր է կազմում, կամ տվյալ ձեռագիրը որպես առանձին մի հուշարձան ուսումնասիրում, մինչ այդ աշխատանքի ավարտվելը, այն տեսական ժամանակով որեւէ այլ գիտնականի չի տվող, մինչեւ չավարտվի այդ աշխատանքը: Պատճենների տրամադրմամբ առաջ է գալիս թեմաների զուգահեռ ուսումնասիրման եւ չհամաձայնեցված հրատարակության վտանգը, երբ Հայաստանում մի որեւէ ինքնական բնագրի պատրաստումից հետո կարզվի, որ պատճենների հիման վրա մեկ ուրիշն արդեն դա հրատարակել է արտասահմանում:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ հետեւյալ հանգամանքը: Համակարգչային տեխնիկան այսօր անպատկերացնելի հեղաշրջումներ է կատարում նաեւ հրատարակչական գործի եւ բնագրագիտության բնագավառում: Եթե մինչեւ այժմ որեւէ գործ վերահրատարակելիս այն կամ պետք էր լուսատիպ (ֆակսիմիլե) տպագրել եւ կամ նորից շարել, ապա այժմ համապատասխան տառատեսակների նմուշների թվայնացմամբ գրի լուսապատճենից ավտոմատ կերպով համակարգչային շարվածը կարելի է ստանալ: Այս ծրագիրը այժմ գործում է նաեւ հայկական մի շարք տառաձեւերի պարագայում, եւ տպագրական մամուլներով ու լինոտիպով շարված որեւէ գիրք այլեւս կարիք չկա վերաշարելու, այլ լուսապատճենմամբ կարելի է ստանալ նրա համակարգչային շարվածը:

Այս ծրագիրը հեղաշրջում առաջ կբերի նաեւ բնագրերի հրատարակման գործում, որով ձեռագրերի վրա հակված եւ տող առ տող այն ընդօրինակող գիտնականի կերպարը առաջիկա մեկ երկու տարում կփոխարինվի ձեռագրի բնագիրը իր ձեռքի տակ ունեցող եւ պարզապես այն համապատասխան ինքնական վերլուծության ենթարկող գիտնականի կերպարով, հետեւյալ պատճառով. ինչպես որ լինոտիպային շարվածքն ունի մի շարք տառատեսակներ, այնպես էլ հայկական ձեռագրերը նայողին հիացնում են նաեւ գրի կանոնավորությամբ, եւ մի պահ անգամ պատրանք է ստեղծվում, որ դրանք ոչ թե ձեռքով են գրված, այլ տպագրական մեքենայով շարված:

Հայկական ձեռագրերի գրատեսակները շատ ավելի փոքր են եւ բաժանվում են հետեւյալ խմբերի՝ երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր եւ շղագիր: Եվ նույն այն ծրագրով, որով տպագրի էջերն են վերածվում համակարգչային շարվածքի, վերը թված գրատեսակներից յուրաքանչյուրի այբբենական համակարգը ներառելով հիշյալ ծրագրի մեջ, առաջիկա մեկ երկու տարում կստեղծվի այդ ծրագրի՝ հայկական ձեռագրերի գրատեսակների համար տեղայնացված տարբերակը, որով թվայնացված ձեռագրերի էջերի տողերը ավտոմատ կվերածվեն նաեւ տվյալ բնագրի համակարգչային շարվածքի, այսինքն՝ տվյալ ձեռագրում գտնվող գործի ընդօրինակությունը հավասարազոր կդառնա այդ ձեռագրերը թվային լուսանկարչական աղարատով նկարելուն եւ համակարգչի միջոցով համապատասխան ծրագրով ակնթարթորեն այն համակարգչային շարվածքի վերածելուն:

Այսպիսով, որեւէ երկի ինքնական բնագիր կազմելը հավասարազոր կդառնա այդ բնագիրը պարունակող ձեռագրերի էջերի թվայնացված տարբերակներից համակարգչային շարվածքի ստանալուն եւ այդ շարվածքների համադրմամբ համապատասխան տարընթերցվածքների մատնանշմամբ ինքնական բնագրի կազմմանը, որով ձեռագրերում գտնվող նյութերի հրատարակության ընթացքը կարագանա 10-15 անգամ, քանի որ կվերանա բուն ծավալային աշխատանքը՝ ձեռագրում գրվածը համակարգչային շարվածքի վերածելը: Ահա այս պատճառով հնարավոր է մի քանի տարվա ընթացքում սերիական արտադրության նման իրականացնել հայկական ձեռագրերում առկա դեռեւս անտիպ բոլոր բնագրերի հրատարակությունը: Եթե ընտրվի թվայնացման ընդունելի ճիշտ տարբերակը, ապա այս ամենը կիրականացվի Հայաստանում, իսկ եթե թվայնացված պատճենները հանձնվեն հիշյալ թանգարանին, ապա հաշվի առնելով մեր եւ նրանց ունեցած միջոցների եւ տեխնիկական հնարավորությունների ահռելի տարբերությունը, դժվար չէ հասկանալ, որ այդ ամենը իսկույն դրսում կարվի, որը պատիվ չի բերի մեր ժողովրդին, էլ չասած, թե ինչ մակարդակով եւ մեկնաբանություններով այն կիրականացվի:

Պատճենների հանձնումը աղետալի եւ անթույլատրելի է հայագիտության մի շարք գիտակարգերի բազմաթիվ այլ հարցերի տեսանկյունից, որոնք նեղ մասնագիտական լինելով, արդեն ակադեմիական գիտության շրջանակում է հարկավոր քննարկել:

Պատճենները դուրս տալը անթույլատրելի է նաեւ ազգային-հոգեւոր առումով, որովհետեւ Մատենադարանը գիտական հաստատություն եւ ձեռագրային արվեստի ընտիր էջեր պարունակող պահոց, հավաքածու եւ թանգարան լինելուց առաջ, մեր ժողովրդի համար միանգամայն այլ մի խորհուրդ ունի:

Մատենադարանը մեր կորցրածի եւ ունեցածի հավաքական արտահայտությունն է: Մատենադարանը այստեղ պահվող ձեռագրերի գրչության կենտրոններով եւ ձեռագրերի հիշատակարաններում հիշվող տեղանուններով մեր պատմական հայրենիքի մանրակերտն ու խճանկարն է, իսկ ձեռագրերում եւ նրանց հիշատակարաններում հիշատակվող իրադարձություններով հայ ժողովրդի պատմության ժամանակային ընթացքն ու ժամանակագրությունն է ամբողջանում: Այսպիսով, Մատենադարանի ձեռագրերով ամբողջանում է մեր պատմական հայրենիքը՝ իր ժամանակային դարավոր ընթացքի մեջ, որով Մատենադարանը դառնում է հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը, եւ Մատենադարանի ձեռագրերի թվային պատճենները վաճառելը կամ հանձնելը տնտեսական գործարք կամ գիտական հիմնախնդիր լինելուց առաջ հավասարազոր է Հոգեւոր Հայաստանը վաճառելուն կամ հանձնելուն:

Թե՛ գիտնականները եւ թե՛ արվեստագետները ամենքս զգացել են այն իրողությունը, որ հայկական ձեռագրերը առանձնանում են հատկապես իրենց գույների զարմանալի պայծառությամբ: Այս պայծառությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայկական ձեռագրերը գիտական անգնահատելի սկզբնաղբյուրներ եւ արվեստի նշանավոր գործեր լինելուց առաջ իրենց գրության ժամանակի խավարի մեջ վառված մի լույս են՝ հայ ժողովրդի գալիքի հավատով:

Ժամանակի խավարի միջից դեպի հայ ժողովրդի գալիքին ուղղված մի-մի լույս լինելն է պայմանավորել ձեռագրերի հանդեպ մեր ժողովրդի անօրինակ, անգամ ենթագիտակցական սերն ու պաշտամունքը:

Արցախյան պատերազմի ընթացքում, որեւէ ռազմերթից առաջ, երբ անտառային արահետներով պետք է խորանալիք դեպ անհայտություն, միշտ քննարկվում էր եւ այն հարցը, թե որպես մեր վրա կրելիք ծանրություն, ինչ հարաբերակցություն պետք է ունենան վերցվելիք ջուրն ու պախիմաքը մի կողմից եւ փամփուշտներն ու մնացյալ ռազմամթերքը՝ մյուս կողմից: Եվ անկախ նրանից, թե այդ պահերն

Տես էջ 6

Հոբելյան

Լուսեղեն հնչյունների տիրակալը

ԷԴՈՒԱՐԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ - 60

«Կոմիտասի անվան հիանալի կվարտետն ասես արեւի պես լուսավորեց ամբողջ հայ երաժշտությունը:

Այդ կվարտետի անկրկնելի գեղարվեստական մաները, նրա պոետիկան եւ էսթետիկան կարելի է համարձակորեն համեմատել Վահան Տերյանի եւ Ավետիք Իսահակյանի պոեզիայի հետ, մեր հնադարյան մանրանկարչության հետ, 20-րդ դարի հայ վարպետների բնանկարների հետ:

Ես շատ եմ համագործակցել կոմիտասցիների հետ, դա ինձ համար ոչ միայն երաժշտության, այլեւ մարդկայնության եւ ազնվության մեծ դպրոց էր»:[1]

Կոմիտասի անվան աշխարհահռչակ քառյակի ղեկավար, միջազգային մրցույթների դափնեկիր, ջութակահար Էդուարդ Թադեւոսյանն իր գրեթե կեսդարյա ստեղծագործական գործունեությամբ զարդարեց հայ կատարողական արվեստը եւ մեր մշակույթի պատմության մեջ գրանցեց իր ոսկե էջը:

Բազմազբաղ ուսուցչարվեստը ղեկավարում է նաեւ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետը, գլխավորում է Ավետ Գաբրիելյանի անվան հանրապետական մրցույթի ժյուրին, մասնակցում Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի ժյուրիի աշխատանքներին: Այս եւ այլ կոչումների տեղատարափում մեկն առանձնանում է. Էդվարդ Թադեւոսյանը կոչումով մարդ է, ով իր կյանքը նվիրել է հայրենի մշակույթի պահպանմանն ու շենացմանը: Համաշխարհային «սիմֆոնիայում» ջութակահարը հնչեցրեց «մեր հին սազի ողբանվագ» արարատյան լարը, Գողթան երգիչների հաղթանվագ խաչատրյանական լարազարկերը: Թադեւոսյանն իր քառյակով օտարներին հաղորդակից դարձրեց սարյանական գույներով շաղախված կոմիտասյան «ձայնանկարներին»: Մեր կարոտակեզ «Կռունկը», սիրավոր «Լորիկը», նախշուն «Կախավիկը» թեւածեցին աշխարհով մեկ: Օտար ուրտերը բաբախեցին մերթ «Վաղարշապատի պարի» խորխոս զարկերակով, մերթ՝ «նահիրյան աղջիկների հեզաձկուն պարի» ելեւէջներով:

«Կոմիտաս» քառյակը աշխարհին դիմել է նաեւ Մոցարտի, Հայդնի, Բեթհովենի, Բրամսի, Դեբյուսիի, Շոստակովիչի եւ այլ մեծերի «լեզվով», նոր խոսք ասել եւ հարստացրել ուրիշների մշակույթը:

Թադեւոսյանի արվեստի հզոր ազդեցության գործոններից մեկը եւ ամենակարեւորը ազգային հենքն է, որ բյուրեղացրել է մեծն Կոմիտասը: Դաշնամուրին հաստեւագրված ժողովրդական պարերի նոտաների վրա Կոմիտասը նշել է կատարման բնույթը՝ թառի, դափի, նայի (դուդուկի) եւ ազգային այլ նվագարանների ոճով: Սիա այդ ոճն է, որ դրսեւորում է քառյակը՝ Սարգիս Ասլամազյանի մանրանվագներում, որոնք հիմնված են կոմիտասյան մեղեդիների վրա:

Ինչպես տեսնում ենք, հիշյալ պարերի թե ազգային, թե դասական նվագարանների տարբերակներում Կոմիտասը դրսեւորել է կվարտետային մտածողություն: Եվ թոթի վրա մնացած Կոմիտասի այս մտահղացումները, ասես, վերհառնել են քառյակի առաջին թավջութակահար Սարգիս Ասլամազյանի մշակումներում, որոնք արդեն 80 տարի է՝ հնչում են ամենուր: Է. Թադեւոսյանն առավել ընդգծեց քառյակի ազգային նկարագիրը եւ ոչ միայն նվագացանկը ընդլայնելով հայ կոմպոզիտորների նորանոր կվարտետներով, այլեւ՝ ներդնելով իր հայեցի հոգու ողջ կարողությունը:

Ազգայինի հանդեպ խոր սերը նրա մեջ արթնացրել է հայրը: Զոհրաբ Թադեւոսյանը մասնագիտությամբ ճարտարապետ էր: Նա նաեւ ինքնուս թառահար էր, եւ փոքրիկ Էդիկի երաժշտական առաջին տպավորությունները թառի հայեցի հնչյուններն էին: Մինչ օրս ջութակահարը հիշում է հոր ուրախ նվագը, ծինչեւ օրս էլ թառը պահպանվում է Թադեւոսյանների օջախում ու շշնջում վաղեմի մեղեդիների արձագանքը...

Ծնողները նրան տարան Ցայկովսկու անվան երաժշտական միջնակարգ դպրոց: Ժամանակ անց տղայի տաղանդը նկատեց մեծ ջութակահար Ավետ Գաբրիելյանը: Էդիկը 6-րդ դասարանի սան էր, երբ տվեց իր առաջին մենահամերգը, որին եւ ներկա էր Կոմիտասի անվան լեգենդար քառյակի հիմնադիրը: Եվ ո՞վ կարդաներ, որ այդ երեխան հետագայում պիտի նստեր Ա. Գաբրիելյանի կողքին, իսկ հետո նրանից ընդուներ կվարտետի անմար ջահը...

1963 թվին Երեւան էին հրավիրվել Արամ Խաչատրյանը եւ մի խումբ անվանի երաժիշտներ՝ մասնակցելու կոմպոզիտորի ծննդյան 60-ամյակին նվիրված հանդիսություններին: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի փորձի ընդմիջմանը Էդիկի դասատու Տատյանա Հայրապետյանը խնդրել էր կոմպոզիտորին լսելու 9-րդ դասարանցի իր սանին: Բավական էր, որ Էդիկը նվագեր մի հատված Ա. Խաչատրյանի կոնցերտից, որպեսզի հեղինակը դիմի Վիկտոր Պիկայզենին. «Վիտյա, դու կնվագես կոնցերտառպտոդիան, իսկ Էդիկը՝ կոնցերտը»:

Դա անսպասելի էր: Հոբելյանական համերգին մնացել էր մեկ օր: Դա մեծ համարձակություն էր եւ կոմպոզիտորի, եւ պատանի երաժշտի կողմից: Եվ Էդիկն արդարացրեց վարպետի վստահությունը: Այս մասին է վկայում նաեւ Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում պահվող այդ նվիրական համերգի բուկլետը, որի վրա կոմպոզիտորը մակագրել է. «Талантливому Эдику с пожеланием успехов. Арам Хачатурян 17. 11,1963 г»:

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ

Դեպի վերելք տանող ճանապարհի հաջորդ «հանգրվանը» Թադեւոսյանի ելույթն էր 1969 թ. Մոսկվայում, Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսությանը: Եվ ահա այստեղ Թադեւոսյանի նվագից տպավորված Ավետ Գաբրիելյանը հրավիրեց նրան Կոմիտասի անվան քառյակ:

Թադեւոսյանի վերելքի բարձրակետերն էին Պոզնանում՝ Վենյավսկու անվան եւ Փարիզում՝ Մարգարիտ Լոնգի եւ Ժակ Տիբոյի անվան միջազգային մրցույթները, որ նա արժանացավ դափնեկրի կոչման: Սա ավարտը չէր, այլ՝ սկիզբը Թադեւոսյանի հաղթարշավի: Մի ջութակահարի, ով իր գեղարվեստական մկրտությունն ու օրհնությունը ստացել է երեք մեծերից՝ Ավետ Գաբրիելյանից, Արամ Խաչատրյանից եւ Լեոնիդ Կոգանից...

Թադեւոսյանը մոսկովյան անվանի ջութակահարների՝ Գիդոն Կրեմերի, Վիկտոր Տրեյակովի, Լիանա Իսակաձեի պայծառ համաստեղությունից էր: Բայց նա գերադասեց վերադառնալ Հայաստան, սակայն չկտրվել նաեւ միջազգային «թատերաբեմից»: Նա ինքն էլ խոստովանում է, որ խոր արմատներ ունեցող «հողի մարդ է»:

Հայտնի է, որ Ա. Խաչատրյանի կոնցերտը հայ ջութակահարների պարտադիր է, որի յուրաքանչյուրի մեկնաբանություն կարծես տվյալ ջութակահարի «տարբերանշանն է»: Հակոբ Վարդանյանի, Ժան Տեր-Մերկերյանի, Ռուբեն Սիրունյանի եւ այլ վարպետների համապատկերում Թադեւոսյանի մեկնաբանությունն իր անկրկնելի «ձայնն ու գույնը» ունի: Ա. Խաչատրյանի՝ կոնցերտն, ասես, է. Թադեւոսյանի ստեղծագործական կենսագրության «լեյտմոտիվն» է: Ուստի փոքր-ինչ մանրամասնենք այդ նշանավոր գործի հետ թադեւոսյանական առնչությունները:

Թադեւոսյանի մեկնաբանության ուժը պայմանավորված է նախ եւ առաջ այն հանգամանքով, որ պատանի երաժշտի առաջին իսկ կատարումը, կարելի է ասել, «բեմադրել է» հեղինակը: Կոնցերտի կատարելագործման, բյուրեղացման հաջորդ քայլն էր, երբ արդեն հասուն վարպետ դարձած, Թադեւոսյանը կրկին դիմեց Արամ Խաչատրյանին՝ ճշգրտելու իր պատկերացումները: Ա. Խաչատրյանը եւ Լ. Կոգանը էդուարդին ցույց տվեցին կոնցերտի երաժշտության «տիեզերքը». կոմպոզիտորը բացահայտում էր իր մտահղացումները, իսկ ուսուցիչն իր օրինակելի նվագով ցույց էր տալիս, թե ինչպես եւ ինչպիսի արտահայտչամիջոցներով կարելի է հասնել այդ մտահղացումների հնչյունային մարմնավորմանը: Այս ամենին գումարվեց նաեւ է. Թադեւոսյանի ինտուիցիան եւ հոգու էներգիան: «Ոչ ոք իմ կոնցերտը այդպես չի նվագում»,- խոստովանել է հեղինակը, այն էլ՝ Լ. Կոգանին, ում հետ, որպես դիրիժոր, Խաչատրյանը ձայնագրել էր կոնցերտը: Կոնցերտի 1-ին մասը է. Թադեւոսյանը կատարում է զուտ, խոշոր «վրձնահարվածներով», իրեն բնորոշ ռիթմի սուր զգացումով ու տարերային ուժով: Այս մոնումենտալ կառույցին հաջորդում է հայ ժողովրդի ճակատագիրը արտացոլող 2-րդ մասը: Ջութակահարը սկսում է քնարական շնչով: Հետզհետե այդ մոնումենտը վերածվում է ողբերգականության եւ վիթխարի ուժերի արթնացման:

Կոնցերտի ավարտը ցնծագին պար է, որում ջութակահարի վիրտուոզությունը ոչ մի պահ չպիտի առանձնանա, այլ պիտի ծառայի այդ համաժողովրդական հաղթական պարի բռնկմանը եւ ծավալմանը... Մեր այս դիտարկումների 2003 թ. անմոռանալի համերգի տպավորությամբ են արվում, որում Թադեւոսյանը Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ էր կատարել կոնցերտը: Մինչ այդ Թադեւոսյանը նույն կոնցերտով հանդես էր եկել Ա. Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված համերգներին: Որպես մի նվաճում, ջութակահարը հիշատակում է Ռիգայի սիմֆոնիկ նվագախմբի հետ ունեցած համերգը: Դիրիժորը Կարլ Էլիասբերգն էր, ով դեռ 1942-ին ռմբակոծվող Լենինգրադում հրագործել էր Շոստակովիչի «Լենինգրադյան սիմֆոնիայի» պրեմիերան: Թադեւոսյանը հանդես էր եկել նաեւ Մոսկվայում՝ Այուսազարդ դահլիճում, Մինսկի սիմֆոնիկ նվագախմբի եւ նրա գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Մնացականովի հետ:

Հիշարժան է նաեւ 1998-ի պետերբուրգյան համերգը, որում սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարում էր է. Թադեւոսյանի նախկին սան Տիգրան Սարգսյանը: Վերը նշվածն անհնարին կլիներ իրականացնել, եթե ջութակահարը կատարելապես չտիրապետեր նվագարանին: Նա իր սաներին եւս հորդորում է մեծ ուշադրություն դարձնելու առողջ «արհեստին», առանց որի չի կարող վեր խոյանալ արվեստը, ինչպես արձանն առանց պատշաճ պատվանդանի:

Մեր զույգներից մեկում անվանի պրոֆեսոր Կարլ Դոմբաեւը Թադեւոսյանի մասին ասել է. «Այն, ինչ մենք ձգտում ենք ձեռք բերել համառ եւ տեւական աշխատանքով, մշակում «սակկատ», «սոիկկատ» եւ այլ շտրիխներ, Էդիկին տված է Աստծո կողմից, նրա աջ ձեռքը նախանձելի է»: Էդիկը երբեմն «օգտվում» էր այդ բնատուր առավելությունից: Եվ պատահական չէ, որ նա առանց տեւական վարժությունների հեշտությամբ էր հաղթահարում բարդ ստեղծագործությունների կատարողական դժվարությունները: Պատմությանը հայտնի են ոչ շատ պարարտող մեծ երաժիշտներ: Օրինակ, Ֆրից Կրայսլերը, Էդվին Ֆիշերը, Հենրիկ Շերինգը եւ այլք: Ի դեպ, վերջինս Էդիկի սիրած ջութակահարներից է, սակայն ոչ այն բանի համար, որ Շերինգը օրական չորս ժամից ավելի չէր պարապում...

...Ուսանողության տարիներին մի քանի օրով մեկնել էի Մոսկվա: Ծանոթներս ցանկացան իմ կատարմամբ լսել հայկական երաժշտություն: Գնացի Մոսկվայի կոնսերվատորիայի հանդիսադարան եւ խնդրեցի Էդիկին մի ջութակ տրամադրել: Նա սիրով տվեց իր ջութակը եւ ասաց, որ հինգշաբթի վերադարձնեմ, քանի որ... ուրբաթ օրը պիտի ելույթ ունենար: Սա իրոք զարմանալի վստահություն է սեփական ուժերին, մանավանդ եթե նկատի ունենանք Մոսկվայի կոնսերվատորիայի բարձրագույն պահանջները: Երբ այս պատմությունը հիշեցրի մաեստրոյին, ժպտալով ասաց, թե այսօր ինքը նման համարձակ քայլի դժվար թե դիմեր, թույլ չէր տա նաեւ իր սաներին...

Մեծապես կարեւորելով տեխնիկայի դերը, վիրտուոզությունը, Թադեւոսյանը ձայնագրել էր կոնցերտը: Կոնցերտի 1-ին մասը է. Թադեւոսյանը կատարում է զուտ, խոշոր «վրձնահարվածներով», իրեն բնորոշ ռիթմի սուր զգացումով ու տարերային ուժով: Այս մոնումենտալ կառույցին հաջորդում է հայ ժողովրդի ճակատագիրը արտացոլող 2-րդ մասը: Ջութակահարը սկսում է քնարական շնչով: Հետզհետե այդ մոնումենտը վերածվում է ողբերգականության եւ վիթխարի ուժերի արթնացման:

Կոնցերտի ավարտը ցնծագին պար է, որում ջութակահարի վիրտուոզությունը ոչ մի պահ չպիտի առանձնանա, այլ պիտի ծառայի այդ համաժողովրդական հաղթական պարի բռնկմանը եւ ծավալմանը... Մեր այս դիտարկումների 2003 թ. անմոռանալի համերգի տպավորությամբ են արվում, որում Թադեւոսյանը Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ էր կատարել կոնցերտը: Մինչ այդ Թադեւոսյանը նույն կոնցերտով հանդես էր եկել Ա. Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված համերգներին: Որպես մի նվաճում, ջութակահարը հիշատակում է Ռիգայի սիմֆոնիկ նվագախմբի հետ ունեցած համերգը: Դիրիժորը Կարլ Էլիասբերգն էր, ով դեռ 1942-ին ռմբակոծվող Լենինգրադում հրագործել էր Շոստակովիչի «Լենինգրադյան սիմֆոնիայի» պրեմիերան: Թադեւոսյանը հանդես էր եկել նաեւ Մոսկվայում՝ Այուսազարդ դահլիճում, Մինսկի սիմֆոնիկ նվագախմբի եւ նրա գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Մնացականովի հետ:

Հիշարժան է նաեւ 1998-ի պետերբուրգյան համերգը, որում սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարում էր է. Թադեւոսյանի նախկին սան Տիգրան Սարգսյանը: Վերը նշվածն անհնարին կլիներ իրականացնել, եթե ջութակահարը կատարելապես չտիրապետեր նվագարանին: Նա իր սաներին եւս հորդորում է մեծ ուշադրություն դարձնելու առողջ «արհեստին», առանց որի չի կարող վեր խոյանալ արվեստը, ինչպես արձանն առանց պատշաճ պատվանդանի:

Մեր զույգներից մեկում անվանի պրոֆեսոր Կարլ Դոմբաեւը Թադեւոսյանի մասին ասել է. «Այն, ինչ մենք ձգտում ենք ձեռք բերել համառ եւ տեւական աշխատանքով, մշակում «սակկատ», «սոիկկատ» եւ այլ շտրիխներ, Էդիկին տված է Աստծո կողմից, նրա աջ ձեռքը նախանձելի է»: Էդիկը երբեմն «օգտվում» էր այդ բնատուր առավելությունից: Եվ պատահական չէ, որ նա առանց տեւական վարժությունների հեշտությամբ էր հաղթահարում բարդ ստեղծագործությունների կատարողական դժվարությունները: Պատմությանը հայտնի են ոչ շատ պարարտող մեծ երաժիշտներ: Օրինակ, Ֆրից Կրայսլերը, Էդվին Ֆիշերը, Հենրիկ Շերինգը եւ այլք: Ի դեպ, վերջինս Էդիկի սիրած ջութակահարներից է, սակայն ոչ այն բանի համար, որ Շերինգը օրական չորս ժամից ավելի չէր պարապում...

...Ուսանողության տարիներին մի քանի օրով մեկնել էի Մոսկվա: Ծանոթներս ցանկացան իմ կատարմամբ լսել հայկական երաժշտություն: Գնացի Մոսկվայի կոնսերվատորիայի հանդիսադարան եւ խնդրեցի Էդիկին մի ջութակ տրամադրել: Նա սիրով տվեց իր ջութակը եւ ասաց, որ հինգշաբթի վերադարձնեմ, քանի որ... ուրբաթ օրը պիտի ելույթ ունենար: Սա իրոք զարմանալի վստահություն է սեփական ուժերին, մանավանդ եթե նկատի ունենանք Մոսկվայի կոնսերվատորիայի բարձրագույն պահանջները: Երբ այս պատմությունը հիշեցրի մաեստրոյին, ժպտալով ասաց, թե այսօր ինքը նման համարձակ քայլի դժվար թե դիմեր, թույլ չէր տա նաեւ իր սաներին...

Մեծապես կարեւորելով տեխնիկայի դերը, վիրտուոզությունը, Թադեւոսյանը ձայնագրել էր կոնցերտը: Կոնցերտի 1-ին մասը է. Թադեւոսյանը կատարում է զուտ, խոշոր «վրձնահարվածներով», իրեն բնորոշ ռիթմի սուր զգացումով ու տարերային ուժով: Այս մոնումենտալ կառույցին հաջորդում է հայ ժողովրդի ճակատագիրը արտացոլող 2-րդ մասը: Ջութակահարը սկսում է քնարական շնչով: Հետզհետե այդ մոնումենտը վերածվում է ողբերգականության եւ վիթխարի ուժերի արթնացման:

Կոնցերտի ավարտը ցնծագին պար է, որում ջութակահարի վիրտուոզությունը ոչ մի պահ չպիտի առանձնանա, այլ պիտի ծառայի այդ համաժողովրդական հաղթական պարի բռնկմանը եւ ծավալմանը... Մեր այս դիտարկումների 2003 թ. անմոռանալի համերգի տպավորությամբ են արվում, որում Թադեւոսյանը Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ էր կատարել կոնցերտը: Մինչ այդ Թադեւոսյանը նույն կոնցերտով հանդես էր եկել Ա. Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված համերգներին: Որպես մի նվաճում, ջութակահարը հիշատակում է Ռիգայի սիմֆոնիկ նվագախմբի հետ ունեցած համերգը: Դիրիժորը Կարլ Էլիասբերգն էր, ով դեռ 1942-ին ռմբակոծվող Լենինգրադում հրագործել էր Շոստակովիչի «Լենինգրադյան սիմֆոնիայի» պրեմիերան: Թադեւոսյանը հանդես էր եկել նաեւ Մոսկվայում՝ Այուսազարդ դահլիճում, Մինսկի սիմֆոնիկ նվագախմբի եւ նրա գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Մնացականովի հետ:

Գիտական ասիճա՞ն, թե ծաղր գիտության հանդեպ

Ի բան փտել է Դանիայի բազավորությունում:

Շեխպիր, «Համլետ», 1-ին, 4:

Հարցը վաղուց է հասունացել, մենք էլ շատ ենք ուզացել: Որտե՞ղ էինք մինչ այժմ, ինչ էինք մտածում: Հարց ենք տալիս ինքներս մեզ եւ արդարանում, թե այնտեղ էինք, ուր մտածել չէր կարելի, եւ...

Չմտածելու արմատացած սովորույթը մեզ հասցրել է այսօրվան:

Քառասուն տարուց ավելի վկա ենք գիտության ու գիտության մարդու արժեզրկմանը եւ լուռ ենք:

Երեկվա բռնությո՞ւնը, թե այսօրվա ազատությունն է պատճառը հասունացող բարոյա-հասարակական աղետի, որ եթե չի էլ պայթելու, գոնե խեղդելու է մեզ եւ արդեն խեղդում է:

Դեռ երեկ էր, որ պատմական գաղափարախոսությունն էր որոշում հումանիտար եւ հասարակական գիտությունների դիմագիծը: Դրան ու դրա հետ քաղաքական նոպատակների էին համարեցվում ժողովրդի պատմությունը, հոգեւոր արժեքները, գիտական միտքը եւ, ըստ այդմ, «ինքդատորեն» էր ներկայացվում այսպես կոչված «բուրժուական» փիլիսոփայությունը: Պատմական ու պարտադրված աբխարհայացքը ստեղծում էր համատարած ճահիճ հասարակագիտության մեջ եւ ասպարեզներում «գիտնականի» մի տեսակ, որը ոչ միայն առաջատար էր լինելու, այլեւ ղեկավարելու էր միտքը՝ մի բան, որ երբեք ղեկավարի կարիք չի ունեցել եւ չունի: Անգրագիտության վերացման շարժումը 20-30-ական թվականներին, որ դրական նախաձեռնություն էր, առաջ բերեց նաեւ բացասական երեւույթներ, ինչպես «բանֆակ»-ային կրթությունը, «կարմիր պրոֆեսուրան», հետագայում՝ բարձրագույն կոմակցական դպրոցը (ՎՊԾ): Գիտության ասպարեզ էր ներխուժում թերուսների մի բանակ՝ զինված մարքս-լենինյան դարձվածաբանությամբ, պլեխանովյան հասարակագիտությամբ ու «գեղագիտությամբ», իսկ թե ուր էր հասել եվրոպական միտքը... Երկաթե վարագույրն իջեցված էր:

«Տգիտությունը դիվային ուժ է, եւ վախենում ենք, թե կարող է պատճառ լինել դեռ շատ աղետների»,- ասել է առաջին մարքսիստը՝ Ֆրիդրիխ Էնգելսը եւ ինչ իմանար, որ իր ու իր վարդապետի մորուքն էր լինելու աղետի աղբյուրը:

Ամեն ինչ սկսվեց կրթության քաղաքականացումից:

Խորհրդային բարձրագույն դպրոցում առաջին տեղը տրված էր մարքսիզմ-լենինիզմ ամբիոններին, նույն ծրագրով, ինչ ՎՊԾ-ում, եւ ամեն ինչի գլխին՝ գաղափարական ոստիկանությունը ագիտացիայի եւ պրոպագանդայի բաժինների տեսքով, որ հետագայում կոչվելու էր «գաղափարական»: Գիտական աշխատությունների գրականության ցանկն սկսվում էր «մարքսիզմի դասականներով»՝ որպես տեսական-մեթոդաբանական միակ ելակետ: Այն մտքին չենք, թե այդ ոամունքն անհեթեթություն էր: Բնավ: Դա ինքնին տրամաբանված ու ամբողջական վարդապետություն էր եւ իր սոցիալ-տնտեսական խարիսխներով եւ միստիկայով, դրանով էլ հրապուրիչ ազնիվ մոլորյալների համար եւ մաքսելի միջակ ուղեղներին: Անհեթեթն ու աղետալին դրա պատճառականացումն էր, որ հանգեցնելու էր պատճառական տգիտության:

Գիտենք, որ 60-ական թվականներին ինչ-որ բան փոխվեց: Մտածող մարդուն կարծես խանգարող չկար, հավի առնող էլ չկար: Կարելի էր թերեւս մեկուսանալ, աղասանել գիտական հասատության ներսում, թաքցնելով աշխարհայացքային ելակետերը կամ ընտրել «չեզոք» բնագավառ, ասենք՝ հնագիտություն, միջնադար: Արդիականությունը հսկողության տակ էր, միջակությունը՝ դա կրողը եւ՝ առաջին գծում: Կային իհարկե որոշ չափանիշներ եւ խիղճ որոշ չափով: Կարելի էր գիտությամբ զբաղվել որոշ բնագավառներում: Թեկնածուական ատենախոսությունները շատ չէին, գովում էին անշատ եւ շատ դեպքերում հավասար էին այսօրվա դոկտորականներին: Պատմություններում լինում էին երբեմն լուրջ առարկություններ, բայց ելը հիմնականում դրական էր, ոչ միշտ միաձայն: «Ջնհալը» բերել էր իր դրական ու բացասական արդյունքները: Երկաթե վարագույրի ճեղքից թույլ լույս էր ճառագում. թվում էր՝ ճշմարտությունը դրսում է, բայց ինչ էր դա... Ժամանակի նորագույն ուղղությունները (սուրռեալիզմ, սեմիոտիկա) հրապուրեցին ոմանց, ոմանք խաղենիացան, ոմանք էլ, իրենց ազատ զգալով, ավելի խորացան իրենց ծխականության մեջ: Պատճառական գաղափարախոսությունը կարծես մերժվում էր լռելյայն, եւ արդյո՞ւնքը... Գաղափարազրկություն եւ սկզբունքների անորոշություն: Գիտական միջավայրն սկսել էր խաղենիանալ: Դա կատարյալ դրսեւորումը ատենախոսությունների պատճառությունները էին՝ մեծարման երեկույթներ՝ խնջույքային վերջաբանով: Ավանդություն ստեղծվեց՝ լուրջ չնայել: Ընդդիմախոսներն սկսեցին ամաչել ընդդիմանալուց, թաց ու չոր խառնվեց իրար, եւ այդպես է մինչ օրս: Զարմանալիորեն ավելի հեշտ էր ոչ գիտական գործի ճանապարհը. ոչ մի վեճ, լռություն, խվեարկության արդյունքը՝ միաձայն եւ կերուխում... «Ամենքն ալ անմեղ են»: Ո՞ւմ էր խանգարում գիտության հետ կապ չունեցողը, մտածում էին ընդդիմախոսներն ու խվեարկողները, եւ ո՞վ էր ընդդիմացողը... «վատ մարդ»:

Հայտնի բան է. խաղենիության դեմ խաղ չկա: Բյուրոկրատական խստությունները ժամանակավոր միջոցառումներ են, եւ խորհրդային իշխանությունն էլ այլ բան չէր կարող անել:

1976-ին հրապարակ եկավ մոսկովյան Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՎԱԿ) նոր կանոնադրությունը, 1978-ին՝ դրա լրացված տարբերակը: Ինչ էր դա: Ճանապարհային արգելափակոցների ավելացում, փշալարերի ամրացում, չափանիշների ու իրավունքների որոշ հստակեցում: Ավելին չէր կարող լինել: Գիտության խնդիրը գիտության մարդիկ պետք է որոշեին, նայած ովքեր էին նրանք եւ ինչ դիրքերում:

Այսպես. խստագույն թվակարգման ենթարկվեցին գիտական համարվող մասնագիտությունները, ըստ այդմ վերակազմվեցին գիտական խորհուրդները եւ դրվեցին պարբերական հսկողության տակ: Սահմանվեցին ընդհանուր ու մասնավոր չափանիշներ, թեկնածուական ատենախոսությունների համար՝ ինքնուրույն գաղափար եւ խնդրի ինքնուրույն լուծում, դոկտորականների համար՝ գիտական խոշոր պրոբլեմի լուծում: Կոնկրետացումն ու փաստարկումը թողնված էր ատենախոսին եւ թեման հստակող գիտական խորհրդին, վիճարկումը՝ ընդդիմախոսող կազմակերպությանն ու ընդդիմախոսներին, վճիռը, դարձյալ կոնկրետ ու փաստարկված, ասիճանաշնորհման խորհրդին: Պատճառվող դրույթը (թեզ) ընդունվելու կամ մերժվելու էր գիտականորեն կոնկրետ հիմնավորումներով, ոչ թե ընդհանուր գնահատականով: Պատճառական ընդդիմախոսության իրավունքը որոշվում էր ոչ միայն ըստ գիտական ասիճանի եւ որակավորման (կվալիֆիկացիա), այլեւ (որ ավելի կարեւոր էր) տրագիր աշխատությունների հիման վրա: Ատենախոսի հիմնական դրույթը պետք է հստակորեն երեւար ոչ միայն սեղմագրում եւ համառոտ ամփոփման մեջ, այլեւ ընդդիմախոսող հաստատության եւ պատճառական ընդդիմախոսների գնահատումներում, ավելին՝ ասիճանաշնորհման խորհրդի փաստարկված եզրակացության մեջ: Վերջապես, պատճառական նիստի սղագրությունը, ռեպլիկներով ու դադարներով հանդերձ, բոլոր փաստաթղթերի եւ ատենախոսության ռուսերեն տեքստի հետ պետք է ներկայացվեր մոսկովյան «արդարամտությանը»: Այդ ծանր թղթապանակում պարտադիր էր տեղեկանքը ընդդիմախոսների տրագիր աշխատությունների մասին, նաեւ՝ նիստի ներկայաթերթիկը մասնակիցների ստորագրություններով: Խստորեն արգելվում էր գիտական խորհրդի անդամների մասնակցությունը հետպատճառական խնջույքներին:

Թվում էր՝ վերջ տնավարությանն ու քաղաքնիությանը:

- Պեդանտ եղեք, բյուրոկրատ եղեք, ընկերներ,- բացորեն կոչ էին անում ՎԱԿ-ի այցելու տեսուչները, որ գալիս էին տարին մեկ-երկու անգամ եւ ժողովներ հրավիրում:

Ռուսական բյուրոկրատիզմն, այսպիսով, ինչ-որ բան ճշտում էր: Արդյունքը պատշաճությունների նվազումն էր, որ գուցե պետք էր: Այսօր թերեւս պարծենալու իրավունք ունեն նրանք, ովքեր դոկտորական վկայագիր են ստացել Մոսկվայից, 80-ական թվականներին: Per aspera ad astra,- կասեր հին հռոմեացին: Բնական էր նաեւ այն հարցը, թե ինչո՞ւ Մոսկվայում պիտի վճռվեին մեր գիտության ու կրթության խնդիրները, ինչո՞ւ Հայաստանը չուներ իր բարձրագույն որակավորման հանձնաժողովը: Այսօր դա մեզ տրված է, եւ ինչ ենք մտածում...

Մեզ տրված է ավելի մեծ բան՝ մտքի ազատություն: Ո՞ւմ է դա պետք, մի քանի հոգու:

Այստեղից սկսվում է մի նոր աղետ:

Աշխարհայացք չունեցող «մտավորականին» եւ գաղափարազրկված հասարակությանը տրվել է մտածելու ազատություն: Ինչ է մտածելու, ինչ հիման վրա, երեկվա կեղծիքի՞, թե այսօրվա քաղաքնիացված ազգայնականության: Քաղաքնին չունի ոչ սեփական միտք, ոչ կարծիք, ոչ սկզբունք. նա գնում է տվորույթի ճանապարհով եւ նայում շուրջը՝ ինչ են հագնում, ինչ են ուտում: Գիտական ասիճանը, որին նա ձգտում է ու հասնում, կապ չունի գիտության հետ, եւ դա այսօր մեզանում բացահայտ է, չթաքցված:

Մոսկովյան ՎԱԿ-ը հեռու էր երկու հազար կիլոմետր, նախագահի մոտ ընկնելն անհնար, հայաստանյան ԲՈՀ-ը մոտ է՝ երկու կիլոմետր, եւ աչքաբաց մարդը գործը բռնում է այդտեղից: Կանոնադրությունը ՎԱԿ-ի կանոնադրության լավ թեթեւացրած տարբերակն է. ճանապարհը կարճ, ոչ փուշ, ոչ փշալար: Մեծ գիտություն ստեղծում է մեծ երկիրը, մենք էլ մեծ երկրի քաղաքացիներ էինք երեկ: Կարո՞ղ ենք հիշել, եթե չենք կորցրել մեր ունեցած-չունեցած խելքը: Բայց կորցրել ենք թե՛ խելք, թե՛ խիղճ եւ հանդուրժում ենք գիտության հետ կապ չունեցող մարդկանց մեր շուրջը: Ամենապարզ հաշվարկով կարելի է պարզել, թե վերջին տասնչորս տարվա ընթացքում, ինչ գործում է Հայաստանի բարձրագույն որակավորման հանձնաժողովը, ասիճանաշնորհվածների քանի տոկոսն է զբաղվում գիտությամբ, հատկապես հասարակագիտության ու հումանիտիկայի բնագավառում: Ինչքան ուզես՝ «քաղաքագետ» ու «տնտեսագետ», չհաշված գավառամիտ բանասերներին ու քաղենի «արվեստաբաններին»: Իսկ ասպիրանտուրա՞ն... զինվորական ծառայությունից ազատվելու միջոց, ասել է՝ դասալքության որջ: Երեսուն տարեկանից ցածր թեկնածուների հազիվ տաս տոկոսը կապ ունի գիտության հետ: Երկուա ու կես տարում, վռազվռազ գրած «աշխատությունները», գիտական խորհուրդներում միաձայն քվեարկված, ո՞ւր են, ինչ են բերել գիտությանն ու կրթությանը: Այո՞, առանց չափազանցումների, կա՞ն ատենախոսությունները... Օ՜, սա արդեն պատճառական ու նրանց հովանավորյալների ասպարեզն է: Ո՞վքանո՞վ է նորմալ, երբ տեխնիկական կրթություն ունեցող պատճառական վստահորեն ներկայանում է փիլիսոփայության գիտական խորհրդին որպես ատենախոս, առանց իրեն հաշիվ տալու՝ ունի՞ տարրական գիտելիքներ փիլիսոփայությունից, թե՞ ոչ: Եվ այսպես, առանց քննություն տալու (դրա համար օրենք չկա) մարդը դառնում է դոկտոր քաղաքագիտության: Բայց քաղաքական պատճառը քաղաքագիտությո՞ւն է, պարոնայք գիտնական այրեր: Այս նույն եղանակով, ինչ-որ հովանավորությամբ, այսինչը հավակնում է արվեստագիտության, իրեն համարելով երաժշտագետ ու կերպարվեստագետ, չունենալով տարրական գրագիտություն, եւ «գիտնականներ»-ի ծերակույտը լռում է: Խորհրդի նախագահը թող գոռա սիրտ պայթեցնելու աստիճան... նա «վատ մարդ է»:

Ինչն է պակասում, գիտական չափանիշների գիտակցո՞ւմը, բարոյականությո՞ւնը, թե՞ կանոնադրության ինչ-ինչ կետեր: Պակասում է ե՛ւ այն, ե՛ւ այն, ե՛ւ մյուսը:

Գիտական չափանիշ ասվածը չի նշանակում անպայման հանճարեղ գյուտ: Դա նշանակում է նախ բնագավառի իմացություն, հարցի շուրջ եղած տեսակետների քննություն, սեփական հարցադրում եւ հստակ դրույթ, հետեւողականություն հղումներում եւ մի թեթեւ եզրակացություն: Սա նվազագույնն է, եւ այս նվազագույնը չենք տեսնում: Իսկ պատճառական նիստերում մարդկանց միայն հայացքներն են լուրջ: Իրականում ոչ ոք լուրջ չի համարում այս «ծեսը»: Լուրջ համարողն ամենաանլուրջն է: Մարդիկ ամաչո՞ւմ են, թե՞ վախենում են ընդդիմանալ, հարց են տալիս զգույշ, ավելի շատ լռում եւ... միաձայն, ամենաշատը՝ մեկ դեմ, վերջում խնջույք եւ ինչ գովեստներ, բոլորը սուտ, կատարյալ ծաղր: Ակամա մտածում ես, թե այս քվեարկողները նույն եղանակով են ստացել իրենց գիտական աստիճանը: Երբեմն ուղղակիորեն (իհարկե՝ միջանցքում) ասվում է՝ «լուրջ մի ընդունեք...»: Այո, բայց ատենախոսը լուրջ նոպատակներ է հետապնդում եւ լրջորեն բանեցնելու է իրեն անլրջորեն տրված վկայականը:

Եվ այսպես, այս խեղկատակության ամենալուրջ պատճառը գիտական չափանիշների բացակայության մեջ է, հաճախ դրանց գիտակցած ոտնահարումը, եւ պատճառների պատճառը՝ գաղափարազրկություն: Սկզբունք ակնկալելը միամտություն է, ոմանց կարծիքով՝ գավառականություն, իսկ պահանջելը՝ անտեղի խստաբարություն: Պետք է «բարի» լինել եւ չընդդիմանալ չար սերմեր ցանողներին:

Այս է մեր գիտական միջավայրի բարոյականությունը:

Իսկ ԲՈՀ-ի կանոնադրությունը հատուկ քննության նյութ է: Նշենք ամենաարտառոց բացերը.

1. Անորոշ է ատենախոսության թեմայի հաստատման սկզբունքը: Գիտական խորհրդի նիստի արձանագրության պարզ քաղվածքը ոչինչ չի ասում: Գիտականորեն փաստարկված հիմնավորում է պետք եւ կոորդինացված մոտեցում. ինչ չափով է հարցադրումը նոր, որքանով պատճառաբանված:

2. Սահմանված չեն հարակից մասնագիտություններով ատենախոսություն պատրաստելու պայմանները:

3. Սահմանված չեն գիտական աստիճանաշնորհման խորհրդի նախագահի իրավունքներն ու պարտականությունները: Նախագահը շատ անգամ ստիպված է ընդունել անգրագետ կազմված գործը, թեմայի անհիմն հաստատումով, չհաշված անգրագետ տեքստը, որ եթե խորհրդի նախնական քննարկմանը դրվեց, գնալու է մինչեւ հրապարակային պատճառության եւ քվեարկվելու միաձայն:

4. Կարետրված չէ նախնական քննարկումը՝ որպես նախապատճառություն, մի բան, որ խիստ կարեւոր էր համարվում ՎԱԿ-ի կանոնադրությամբ:

5. Թույլատրված է գիտական հաստատության տնօրենի պատճառությունը իր ղեկավարած հիմնարկի ասիճանաշնորհման խորհրդում: Դա արգելված էր ՎԱԿ-ի կանոնադրությամբ: Ի դեպ, արգելված էր նաեւ պետական պատճառական նիստերի պատճառությունը: Հիմա արգելված չէ:

6. Սահմանված չէ հրապարակային պատճառության կանոնը (ոչ ժողով կամ խորհրդակցություն, այլ ասյան), ուր պետք է բացառվեն պատճառական ընդդիմախոսին քննադատելը (դա ատենախոսի իրավունքն է), ատենախոսին օգնության հասնելը, ժամանակի կամ ելույթների սահմանափակում պահանջելը եւ այլն: Բոլոր հարցերին ու ելույթներին պատասխանելու է ատենախոսը, ոչ երբեք ընդդիմախոսը կամ որեւէ մեկը դահլիճից: Կա հնուց եկող կարգ եւ ավանդություն, որ պետք է կանոնակարգվի:

Սրանք ամենաընդհանուր առաջարկներ են, որ կարող են մանրամասնավորվել: Բոլոր դեպքերում անհրաժեշտ է մշակել նոր կանոնադրություն եւ հիմնավոր քննարկման դնել: Լուրջ սահմանափակումներ են պետք: Գիտական ասիճանների առատությունը գիտության զարգացման ցուցանիշ չէ: Սա պետք է մեկընդմիշտ իմանալ:

25 մայիսի, 2007 թ.

Պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ է, արվեստի ինստիտուտի գիտական ասիճանաշնորհման մասնագիտական խորհրդի նախագահ:

Մտահոգություն

Հայկական մշակույթի քրիստոնյա ինքնությունը

Զրույց Հայր Հարություն Պզտիկյանի հետ

- Մարդկության մշակութային պատմության մեջ հայկական մշակույթի դերը ինչպե՞ս կբնորոշեք, ո՞րն է մեր առանձնահատկությունը:

- Հայկական մշակույթը անտարակույս ունի իր հատուկ տեղը: Նախ որպես երկրագնդի վրա ապրող հնագույն ժողովուրդներեն մին ան կայսերապաշտական չէ եղած. Մեծն Տիգրանի «արկածախնդրությունները» շատ փոքր փակագիծ մը եղած են հայոց բազմահազարամյա պատմության մեջ եւ մասնավոր մշակութային նշանակություն չեն ունեցած: Երբեք իր տարողությամբ կարելի չէ բաղդատել ասորաբաբելական, սումերական, հելլենիստական եւ հռոմեական մշակույթներու հետ: Առնենք փարավոններու պարագան: Մշակույթը կ'ուրվագծվի փարավոն անհատին, անձին շուրջ: Նույնը միջագետքյան քաղաքակրթություններու մոտ կկրկնվի: Մեռելապաշտական մշակույթ մըն է, որ կդառնա փարավոնի դիակին շուրջ. բուրգեր, տաճարներ, գաղտնի դամբարաններ, քուրմեր, գուշակներ, զոհեր... մեծ բացական ժողովուրդն է: Հայերու պարագային մշակույթը ըմբռնված է որպես մտային հարստություն, գիտություն, զարգացում. ուսումի եւ զարգացումի տենչը զիրենք մղած է Աթենք, Հռոմ, Աղեքսանդրիա, Անտիոք, Կեսարիա, Կոստանդնուպոլիս, եւ գրոց գյուտի ստեղծումեն վերջ մայր հողին վրայ ստեղծված են Հոգիի եւ Միտքի տաճարներ, դպրոցներ, վանական համալիրներ, վարդապետարաններ. մեր հզօր արքաները կամ լուսամիտ կաթողիկոսները չեն ունեցած բուրգեր որպես դամբարան... լավագույն պարագային դամբանաքար մը, խաչքար մը եւ վերջ... բայց անդադար եւ արագորեն վերանորոգած են թշնամիին կործանած վանքերն ու վարդապետարանները, չզրկելու համար հարազատ ժողովուրդը հոգեւոր սնունդեն, իր մշակույթեն: Սա՛ է հայ ժողովուրդի յուրահատկությունը եւ գաղտնիքը իր հզօրության, հակառակ իր փոքր չափերուն:

- Ինչ եք կարծում, մեր մշակույթը իր բուն խորքում արեւմտյան կողմնորոշման չէ՞ արդյոք:

- Հայաստանի աշխարհագրական դիրքը ընդմեջ հին աշխարհի Արեւելյան եւ Արեւմտյան զանգվածներուն, դարերու ընթացքին կերտած է երկակենցաղ ժողովուրդ եւ մշակույթ մը, որ իրեն հատուկ է միայն: Ան ոչ Արեւելյան է, ոչ Արեւմտյան, այլ է հայկական: Ֆրանսացի մեծ պատմաբան Ռընե Կրոսե ատոր մեջ կը տեսնե հայ ժողովուրդին յուրահատկությունը, դիմացկունության գաղտնիքը, եւ այն հզոր ստեղծագործական ուժը, որ կհակասե իր փոքր չափերուն: Հայը նույն ուժգնությամբ կրցած է մշակույթ ստեղծել եւ հեռավոր Մադրասի, Իսպահանի, Մանջուրիայի եւ Արեւմտյան Վենետիկի, Ամստերդամի, Լիվորնոյի կամ Իռլանդայի մեջ, եւ Սեւ ծովի ափերուն եւ Եգիպտոսի ավազներուն եւ Եվքոմիայի լեռներուն մեջ հավասարապես:

- Ինչպիսի՞ վերաբերմունք ունեք Երեւանի Մատենադարանի ձեռագրերի թվայնացման՝ ԱՄՆ Hill թանգարանի առաջարկին:

- Ընդհանուր առումով Երեւանի Մատենադարանը ներկա իրականություններուն ամենեն անտեսած հիմնարկն է: Շատ ափսոս է, որ անոնք նույնիսկ գիտակից չեն հոն պարունակված համամարդկային գանձերու արժեքին, հակառակ անոր, որ երկրի նախագահն է, որ ականատես կ'ըլլա արտասահմանյան զանազան ցուցահանդեսներու առիթով, մանավանդ այս տարի Ֆրանսայի մեջ, օտար մշակույթի պատասխանատուներու հիացմունքին եւ մինչեւ իսկ բարի նախանձի զգացումներուն... սփյուռքահայերուս համար ան է մեր դրոշը, մեր Հայաստանը, եւ երբ կտեսնենք մսխված միլիոնները պարապ-սարապ հրապարակային արվեստակյալ տոներու համար, եւ մեր Մատենադարանի ճակատագիրը հանձնված խումբ մը նվիրյալ անձերու ամենօրյա զոհողության, միայն ցավ կզգանք: Ինչպե՞ս կարելի է ընդունիլ, որ 17.000 հատվող (մոտավորապես) ձեռագիրներեն միայն մի որոշ մասը գրավոր նկարագրված են: Մը՛ է պետությունը իր գումարներով. ինչ եղած է գլխավոր պատասխանատուին դերը մինչեւ հիմա... Այս պայմաններուն մեջ բնական կթվի փորձվիլ օտար ծանոթ հաստատության հանձնել թվայնացման գործը... պարապը լեցնելու համար: Ես ճիշտ չեմ գտներ. սա առիթ պետք է ծառայե, որ մեր լուրջ գիտաշխատողները գործի լծվին եւ պատրաստեն Մատենադարանի ձեռագիրներու լիակատար ցուցակը... եւ նոր կառավարությունը անմիջապես հարկ եղած գումարը քվեարկե այդ ծրագրին համար:



Վստահ եմ, ցնցիչ եւ շատ հաճելի անակնկալներ պիտի հայտնվին մնացյալ բազմահազար ձեռագիրներու մեջ:

- Մխիթարյան հարուստ ձեռագրապահոցը ունեցե՞լ է նման առաջարկ:

- Առաջարկներ եղած են եւ պարբերաբար կկրկնվին. սակայն մենք 10 հատորով (վերջինը ընդ մամլով) տված ենք արդեն լիակատար ցուցակը Մխիթարյան ձեռագրական հավաքածուին, մատչելի համաշխարհային հասարակության:

- Ներկայումս որպես տնօրեն Սամուել-Մուրադյան վարժարանի եւ Մխիթարյան մշակութային կենտրոնի, պատասխանատու եք Փարիզում: Մասնակցում եք Հայաստանի տարվա կարեւոր բոլոր միջոցառումներին, ի՞նչ է ձեր տպավորությունը:

- Հայաստանի տարին Ֆրանսիայի մեջ, ամենամեծ պատիվն է, որ մեծ պետություն մը կրնար ընել Հայաստանի: Ժակ Շիրակի Ֆրանսան ըրավ այդ մեկը. պետք ենք երախտագետ ըլլալ: Պատասխանատու սկսավ 21 սեպտ. 2006-ին եւ արդեն փակումի թվականը մոտալուտ է՝ 14 հուլիս 2007- խորհրդանշական թվական մը:

Շուրջ 600-700 ձեռնարկներ նախատեսված են, որոնց մեծագույն մասը արդեն կատարված: Նման ծովածավալ միջոցառումներու ընթացքին բնականաբար որակը ամեն անգամ նույնը չըլլար: Քիչ մը մեր Երեւանի մշակութային պատկերին կրկնօրինակն է կարծես Պեսական թանգարանի, պատկերասրահի, Փարաջանովի, Սարյանի, Մատենադարանի, Ակադեմիայի, Ազգային գրադարանի կամ Գրականության եւ արվեստի թանգարանի կողքին հաճախ հայտնվեցան մանր-մունր երգիչուկներ, պարողներ, դերակատարներ, զանազան եւ զարմանազան խումբեր, հաջողությամբ սարդած միջոցառումներուն մեջ, որ խոսոր կհամեմատեին հայ մշակույթի եւ արվեստի իսկական ներկայացումներուն հետ: Անոնք ցույց կու տային, որ մենք ալ գեշ-աղեկ կրնանք արեւմուտքը կապկել, մեր երգերով, պարերով, բայց ավելի հայ հասարակությունը ուրախացուցին քան տեղացիները:

Տեղացին ցույց տվավ ավելի բարձր ճաշակ, տասնյակ հազարներով այցելեց մեր մշակութային իսկական գանձերը եւ հրաշալի տպավորություններ արձանագրեց:

Հարկ է ըսել, ի պատիվ ամբողջ կազմակերպիչ հանձնախումբին, որ միջազգային բարձր չափանիշներով ցուցահանդեսները հրարտության իսկական առիթներ ընծայեցին հայության, անոնց արձագանքը լսեցինք մամուլեն, ռադիոկայաններեն, հեռատեսիլի հաղորդումներեն, քաղաքական եւ մշակութային պատասխանատուներու ելույթներեն եւ հրատարակված գեղարվեստական հատորներեն:

Հիմնականորեն տպավորիչ էին Հայաստանի քրիստոնյա ինքնությունը եւ այն բացառիկ սրբազան պատմությունը հանդեպ գիրին, այբուբենին: Կարեւոր ցուցահանդեսներուն առանցքը կդառնար այս երկու հիմնական կետերուն շուրջ. ձեռագիր, խաչքար, տպագիր, եկեղեցական սպաս կամ մետաղյա առարկաներ դրոշմված են հայ գիրով եւ քրիստոնյա հոգիով: Այս տեսակետով շատ մեծ ընդունելություն գտան Ֆրանսայի ազգային գրադարանի հայկական հավաքածուի ցուցադրությունը, «Հայաստանի 12 մայրաքաղաքները», «Ժէ դարու Նոր Ջուղան», «Ոսկիներ եւ գանձեր Հայաստանի» (Լիոն), «Հնատիպ գիրքերը» (Սթրասբուրգ), «Սրբազան Հայաստան» (Լուվր), «Հայ գիրին մոգական ուժը» (Մարսել): Վերջին երկուքը այցելության բոլոր մրցանիշները գերազանցեցին՝ եվ Այվազովսկի, եւ Սարյան, եւ Գառզու, եւ Փարաջանով: Եվ շուտով Ֆրանսայի արվեստի «Փոքր պալատին» մեջ պիտի ունենանք ուրիշ մեծ ցուցահանդես մը նվիրված հայ նկարչության:

- Հայկական հեռուստատեսության երկրորդ ալիքով հաճախ հետեւում ենք Հայաստանի հոգեւոր ճարտարապետությանը, պատմական վանքերին նվիրված Ձեր պատրաստած հաղորդաշարին: Հնարավոր չէ՞ այդ արժեքավոր փաստաֆիլմերը ընդգրկել եվրոպական հեռատեսիլի ծրագրերում:

- Արեւմտյան աշխարհին մեջ մշակույթն ալ դրամի հսկայական աղբյուր է: Պատրաստ ֆիլմ օգտագործելը, որքան ալ կատարյալ ըլլա, հաստաբեր չէ գնողին. հեռատեսիլի կազմը պիտի ուզե անձամբ պատրաստել այդ փաստաֆիլմերը. անոնց համար կտրամադրվին մեծամեծ գումարներ, որոնք կ'օգտվին ամենքը: Այստահանդեսի ամիս մը առաջ, 40 հոգեանոց հատված մը, իտալերենի վերածված, հաջողեցա սփռել TV-ն՝ կարեւոր բանախոսութենե մը վերջ, Վերոնա քաղաքին մեջ:

- Մեր կյանքում տեղի ունեցող շատ իրողություններ եւ առհասարակ տիրող ընդհանուր մթնոլորտը, բարքերը վտանգում են հայ հասարակության առողջան: Այս առիթով ի՞նչ խոհեր, մտահոգություններ ունեք:

- Վերեւ ակնարկեցի արդեն թե դարերու ընթացքին գիրը եւ քրիստոնյա ինքնությունը պահած է հայ ժողովուրդը: Անցյալի կոտորածներն ու տեղահանությունները չկրցան խախտել զանոնք: Եկավ համայնավարությունը, որ 70 տարի անդադար պայքարեցավ փչացնելու մեր ինքնության զույգ արմատները. փոխեց ուղղագրությունը, խոցեց հավատքը, գնդակահարեց անոր պաշտոնյաները, բայց իր ավարտին չհաստատված եկավ փրկարար անկախությունը: Փրկարա՞ր արդյոք... Կկասկածիմ, որ մեր իշխանությունները անմիջապես կվերադառնան մեր քրիստոնյա ակունքներուն եւ գիրի միասնական պաշտամունքի, շարունակած պիտի ըլլան կոմունիզմի սկսած ավերը: Առ այժմ դժբախտաբար այդ ճամփով առաջ կերթան. չկա մեկը, որ զգաստացնե զիրենք: Հայաստանյայց եկեղեցին պետք էր կատարեր այդ դերակատարությունը: Ինք պառակտված է իր կարգին զույգ կաթողիկոսություններու՝ այլեւս անտեղի բաժանումներով: Ռուսաստան, այս օրերուս, հաջողեցավ ստեղծել միասնականություն իր սփյուռքի եւ Մոսկվայի մայր աթոռին միջեւ շնորհիվ իր նախագահ Պուտինի քաղաքականության: Մերինը, որ տակավին խաչակնքել չի գիտեր, չէ ըմբռնած հայ ժողովուրդին գիրին եւ քրիստոնյա ինքնության միացնող ուժին հզորությունը, սփյուռքի մեծահարուստներուն եւ վաղանցուկ կազմակերպություններուն դիմելով՝ կկարծե ամրապնդել միայն իր իշխանությունը... մինչ այդ Հայաստանը օրե-օր կդարձվի իր բնակիչներեն, եւ հավատքեն, եւ մշակույթեն:

Մյուս կողմեն սխալ է իշխանություններուն վրա միայն բեռցնել այս պարտականությունը: Ընդդիմության եւ ժողովուրդին բոլոր ցույցերն ու բողոքները կենտրոնացած են նյութական բարօրության վրա, ընկերային անարդարություններու մասին: Ամենամեծ անարդարությունը հայոց լեզվի աղճատումն է: Չտեսա ո՛չ մի ցույց, որ վերաբերի հայերեն լեզվին կամ քրիստոնյա ինքնության վերադարձին նվիրված... Հոս է ամենախոցելի կետը. չի բավեր մի քանի տարվայ անձերու երկչոտ միջամտությունը. այս ցույցը պետք է համաժողովրդական դառնա, նույն օրը միլիոնավոր հայեր հայրենիքի մեջ եւ սփյուռքի հայկական դեսպանատուներու առջեւ պահանջեն վերադարձը մեր ակունքներուն... թոթափել վերջնականապես համայնավարության նկարագիր ժառանգությունը եւ կատարել հաջարի վերադարձ դեպի հայկականության ակունքները. ես միայն այն ատեն կրնամ լավատես ըլլալ:

Հարցազրույցը՝
ՄԵԼԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆԻ

Մատենադարանը...

Բ էջից

օրերուս իրավիճակի առումով որքան են լարված եղել եւ կամ պարուրված մահաբեր անորոշությամբ, ես միշտ ակամայից հիշել եմ Մշո Ճառընտիրը մեջտեղից կիսած եւ իրենց ոտերին կրելով Արեւելյան Հայաստան հասցրած մշեցի երկու կանանց եւ ընդհանրապես՝ բոլոր նրանց, ովքեր գաղթի ճանապարհներին մի քիչ ավելի այլուրի եւ հացի փոխարեն մի-մի ձեռագիր են վերցրել եւ ուժահաս ընկնելուց առաջ այդ ձեռագրերը փոխանցել դեռեւս քայլողներին, որով նրանք իրենց մարող կյանքերով հայ ժողովրդի գալիքի լույսն են իրար փոխանցել գաղթի ճամփաներին: Եվ այսօր Մատենադարանում սերունդների հավաքական կամքով հավաքված ձեռագրային այս ողջ ժառանգության թվայնացված ամբողջությունը ի պահ տալ Հայաստանից դուրս, նշանակում է օտարին հանձնել կամ վաճառել հայ ժողովրդի՝ գալիքի ընթացքը լուսավորող այս լույսը:

Ավելին, հանձնելով ձեռագրերի թվային կրկնօրինակները՝ մենք հավաքական կամք ունեցող եւ մեր մշակույթի տերը եղող ժողովրդից կվերածվենք աբորիգենների զանգվածի, որովհետեւ միայն աբորիգեններն են, որ պարզապես տվյալ տարածքի բնիկներն են եւ իրենց մշակույթի՝ սոսկ կենցաղային մակարդակով կրողները, բայց ոչ երբեք՝ այդ մշակույթի գիտակցված իմաստավորողները, այն որոշակի համակարգով ներկայացնողներն ու տեսական առումով արժեւորողները:

Այնինչ, եթե այս գործարքից ակնկալվող նյութական ինչ-ինչ անձնական շահագրգռություններուն գերին դառնալու փոխարեն իրապես համաազգասխան հաշվարկ կատարվեր եւ ըստ այդմ կազմվեր աշխատանքային ծրագիր եւ արդեն այն կազմակերպական ճիշտ ձեւի մեջ դրվի, արդեն համազգային առանց ոչ մեծ ջանքերի եւ նյութական հատկացումների կարելի է սկսել թվայնացման աշխատանքները:

Այս հարցում մենք արդեն իսկ ունեցել ենք մի էական թերացում: Ինչպես Hill թանգարանի ներկայացուցիչներն են նշում, նրանք արդեն նույն պայմաններով՝ վերցնելով թվային պատճենները, թվայնացրել են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության եւ Զմմառի հայոց կաթողիկե պատրիարքության հավաքածուների ձեռագրերը: Մատենադարանից հետո, ինչպես իրենք իսկ հայտարարում են, ծրագրում են նույն ձեւով թվայնացնել նաեւ Երուսաղեմի հայոց պատրիարքության, Մխիթարյան միաբանության Վենետիկի եւ Վիեննայի հավաքածուների ձեռագրերը, որով հայ ձեռագրային աշխարհի մեծագույն մասը կկենտրոնանա իրենց մոտ:

Եվ այսօր մենք, փաստորեն, համակերպվում ենք այն ամոթալի մտքի հետ, որ աշխարհասփյուռ հայկական ձեռագրերի համահավաք կենտրոնը Հայաստանում չէ, որ պետք է լինի: Թե որտեղ կկենտրոնանան հայկական ձեռագրերի լուսանիշ պատճենները, առաջին հերթին պայմանավորված է այս պայմանագրով: Եվ եթե մենք, որպես ժողովուրդ, հասարակություն եւ մտավորականություն ի զորու լինենք վերջնականորեն չեղյալ հայտարարել այս պայմանագիրը, արդեն վերը հիշված մեր մյուս հոգեւոր կենտրոնները եւս կմերժեն այն, քանի որ հիմա սպասում են, թե ինչպես կորոշվի Մատենադարանի ձեռագրերի հարցը: Այնպես որ, Մատենադարանի ձեռագրերի թվայնացումը հայության ուժերով իրականացնելուց հետո, ավելի ճիշտ վերջինին զուգահեռ, հաջորդ քայլը պետք է լինի հայկական հիբրիդ ձեռագրային կենտրոնների ձեռագրերի թվայնացումը եւ պատճենները արդեն հայրենիքում կենտրոնացնելը, որով Հայաստանը կդառնա ոչ միայն հայկական հայության հայրենիքը, այլեւ հայության նման աշխարհասփյուռ հայկական ձեռագրերի կենտրոնը:

Ինչպես տեսանք, Մատենադարանը մեր հոգեւոր հայրենիքի խորհրդանիշն է, եւ Մատենադարանով է այսօր հոգեւոր մի ամբողջություն կազմում մեր ողջ պատմական հայրենիքը: Քանի որ հայրենիքի պաշտպանության համար միայն պետությունը եւ իշխանությունները չէ, որ պատասխանատու են, այլեւ ողջ ժողովուրդը, ուստի մենք՝ որպես ժողովուրդ եւ որպես ազգային հավաքականություն, դառնանք մեր հոգեւոր հայրենիքի պաշտպաններն ու զինվորները եւ բացառենք Հոգեւոր Հայաստանը մեր հայրենիքից օտարելու որեւէ կեղտոտ գործարք:

Մատենադարանի ավագ գիտաշխատող

ՀԱՅ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Դիտես յոթանասուն տարի առաջ, 1937-ի ապրիլին Երեւանում, ծնունդ առավ հայ երաժշտական իրականության մեջ առաջին պրոֆեսիոնալ երգչախումբը՝ 25-30 երգիչներից բաղկացած Հայաստանի պետական կապելլան: Երգչախումբ, որը պիտի հետագայում հզորանար ու աշխարհին ներկայանար հայ եւ համաշխարհային խմբերգային երաժշտության անգին գոհարների բարձրարժեք կատարումներով, խլեր աշխարհի նրբաճաշակ եւ խստապահանջ ունկնդիրների bravo-ներն ու bis-երը: Երգչախումբ, որն այսօր էլ, 70-ամյա փառահեղ ճանապարհ անցած եւ կատարողական վարպետությունը կատարելության հասցրած, իր գրեթե կեսդարյա անփոփոխ գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր, Խորհրդային Միության եւ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, Խորհրդային Միության եւ ՀԽՍՀ Պետական մրցանակների դափնեկիր, անզուգական մաեստրո Հովհաննես Չեփիջյանի հմուտ առաջնորդությամբ բարունակելով կրել հայ դասական խմբերգային երաժշտության լավագույն թարգմանի դերը՝ հայ երգչախմբային արվեստի անգերազանցելի գագաթն է, հայրենական երաժշտարվեստի փառքերից մեկը:

Հարուստ ավանդույթներ ունի հայ խմբերգային երաժշտությունը:

Իսկ մինչ այդ՝ 19-րդ դարում, հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի ձեւավորմանը զուգընթաց տեղի էր ունենում բազմաձայնության արմատավորման դժվարին գործընթացը: 1868-ին հայոց անդրանիկ՝ Տիգրան Չուխաջյանի «Արտակ Բ» օպերայի ծնունդով եւ հիշ անց Կարա-Մուրզայի՝ բազմաձայնության արմատավորմանը միսված գործունեության շնորհիվ հայ երաժշտությունը դուրս եկավ դարեր տեւած արհեստական մեկուսացումից եւ մտավ համաշխարհային երաժշտական մշակույթի հուն:

Եվ պատահական չէ, որ հայ երաժշտարվեստի բոլոր խոշոր գործիչներն իրենց գործունեության կարեւոր ու անբաժան մասն են համարել մի կողմից՝ բազմաձայն երգչախմբերի կազմակերպումը, խմբերգերի կատարումը եւ խմբերգային երաժշտության քարոզումը ժողովրդի լայն զանգվածներում, իսկ մյուս կողմից՝ ազգային բազմաձայն երկացանկի ձեւավորումը (երգչախմբերի համար բազմաձայնում էին թե՛ ժողովրդական եւ թե՛ հոգեւոր երաժշտության նմուշները): Բնականաբար, 19-րդ դարի երկրորդ կեսերից մինչեւ 1920-ականները, այդ երգչախմբերը հիմնականում սիրողական էին, որովհետեւ Հայաստանում չկային երաժշտական կադրեր պատրաստող կրթօջախներ, եւ հայ երաժշտության երախտավորները ստիպված էին բավարարվել ոչ պրոֆեսիոնալ, սիրողական ուժերով: Խմբերգային երգարվեստի զարգացման բնագավառում իրենց ծանրակշիռ խոսքն են ասել հայ երաժշտության գրեթե բոլոր երախտավորները:

Այսպես, ազգային պրոֆեսիոնալ երաժշտական դպրոցի սկզբնավորող, հայկական առաջին օպերաների («Արտակ Բ», «Արիֆի խորամանկությունը», «Քյոսե Քեհյա», «Լեբլեբիջի Հոր-հոր աղա», «Չեմիրե»), ռոմանսների եւ գործիքային ստեղծագործությունների հեղինակ, արեւմտահայ իրականության մեջ երաժշտական առաջին թատրոնի կազմակերպիչ Տիգրան Չուխաջյանի խմբերգային երաժշտությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի. առաջին խմբերգերը, հայոց պատարագի երգերից մի քանիսի խմբերգային մշակումները եռաձայն երգչախմբի համար, երգեհոնի ընկերակցությամբ եւ «Արտակ Բ» օպերայում առատորեն հանդիպող մեծ վարպետությամբ գրված խմբերգային տեսարանները, որոնցում առավելագույնս բացահայտվում է Չուխաջյանի օպերայի հայրենասիրական ոգեղվածությունը: Հիշարժան են նաեւ կոմպոզիտորի մյուս օպերաների խմբերգային տեսարանները եւ:

Քչերին է հայտնի, որ Չուխաջյանի ղեկավարած երգչախմբերից մեկում երգել է Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի աշակերտ Հայյա Սմառյանը. «Դպրոցի ամֆիթատրոնում ամբողջ աշակերտներս հավաքվեցինք եւ Չուխաջյանը մեզ խմբերի վերածելով, սովորեցրեց քառաձայն երգը: Ես սոպրանոների մեջ էի. մինչեւ հիմա հիշում եմ Չուխաջյանին, որ հայ կաթոլիկ լինելով «ր»-ի տեղ «ղ» էր արտասանում եւ երեք խմբերին դիմելով կոչում էր՝ «Պատղաստ, պատղաստ, պատղաստ»: Ի դեպ, Կարա-Մուրզայի վկայությամբ, երբ նա տարբեր տեղերում գոյություն ունեցող հայկական երգեցիկ խմբերին լսելու նպատակով 1887-ի ամռանն ուղեւորվել է Իտալիա (Վենետիկ) եւ այցելել Արեւմտյան Հայաստան, ապա նրան հանդիպած եկեղեցական, դպրոցական եւ մասնավոր 27 խմբերից երկու ձայնով երգել են միայն Կ. Պոլսում Տ. Չուխաջյանի ղեկավարած դպրոցական երկու խմբերը եւ Մխիթարյան Միաբանության Սուրբ Ղազարի վանքի՝ Բիանկիանի ղեկավարած աշակերտական խումբը: Մնացած 24 խմբերը երգել են միաձայն:

1885 թվականի մարտի 15-ին Թիֆլիսում տեղի է ունենում հայ երաժշտության պատմության մեջ քառաձայն խմբերգային անդրանիկ համերգը՝ խմբավար, կոմպոզիտոր, երաժշտական հասարակական գործիչ Քրիստափոր Կարա-Մուրզայի ղեկավարությամբ: Երգչախումբը բաղկացած էր ընդամենը 15 երգիչներից, ծրագրում հիմնականում ընդգրկված էին հայ ազգային-հայրենասիրական երգերի բազմաթիվ մշակումներ: «Վարագույրը բարձրանում է կամաց-կամաց եւ հասարակության առաջ պատկերանում է բեմի վրա մի փոքրիկ խումբ պատմական հայկական հագուստներով, տպավորությունը մեծ է լինում: Հասարակությունը հավանում է նրա երգերը եւ մի քանիսը կրկնել է տալիս... Հանդիսականները բացագանչություններով թնդացնում են թատրոնը: Դուրսը Կարա-Մուրզային դիմավորում է երիտասարդների մի խումբ եւ օվացիաներով ճանապարհ է դնում: Հասարակությունը, ցրվելով տները, շատերը ճանապարհին արդեն փորձում են երգել այն երգերը, որոնք ավելի դուր էին եկել եւ ավելի հետ էին: Այդ օրը Կարա-Մուրզայի կյանքի ամենաուրախ օրերից մեկն էր»:*

1887-ին Կարա-Մուրզայի ծննդավայրում՝ Ղարասու-Բազարում, տեղի է ունենում հայ իրականության մեջ առաջին երկսեռ՝ 20 հոգուց բաղկացած երգեցիկ խմբի անդրանիկ համերգը: Իր համերգային գործունեության 17 տարիների ընթացքում (1885-1902) Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս ավելի քան 50 քաղաքներում (այդ թվում՝ Թիֆլիս, Բաքու, Էջմիածին, Նոր Նախիջեւան, Օդեսա, Ախալցխա, Բաթում, Վլադիկավկազ, Արմավիր, Եկատերինոդար, Քիշնեւ, Մոսկվա, Գորի, Բորժոմի, Գանձակ, Սիմֆերոպոլ, Կերչ, Ղարս, Շուշի) Կարա-Մուրզան կազմակերպել է շուրջ 90 երգեցիկ խումբ, տվել ավելի քան 250 համերգ՝ ներգրավելով 6000 հոգու: Որպես երաժիշտ Կարա-Մուրզայի երգչախմբերում են ձեւավորվել նշանավոր երգիչներ՝ դրամատիկ տենոր Ներսես Շահլամյանը, բարիտոն Բեգլար Ամիրջանյանը, լիրիկական տենոր Մակար Վարդիկյանը, բարիտոն Ծովակը, նրա սաներն էին Ազատ Մանուկյանն ու Ստեփան Դեմուրյանը: Շուշիում կազմակերպած 100 հոգուց բաղկացած երգչախմբի կազմում երգել է տաղանդավոր հայ արձանագրագիր Հակոբ Գյուրջյանը: Կարա-Մուրզայի խմբերից մեկում է երգել նաեւ բանաստեղծ Հակոբ Հակոբյանը:

Հիրավի, Կարա-Մուրզայի գործունեությունը նշանավորեց բազմաձայնության հաղթանակը: Ըստ էության, իր ողջ կյանքը Կարա-Մուրզան նվիրաբերեց հայ ժողովրդական լայն զանգվածներում բազմաձայնության արմատավորմանն ու բազմաձայն երգեցողության տարածմանը: Զրկված լինելով միեւնույն երգչախմբի հետ աշխատելու հնարավորությունից՝ նա ամեն անգամ ստիպված էր կազմել նոր երգեցիկ խումբ՝ դրանում ընդգրկելով անգամ երաժշտական տարրական գիտելիքներից զուրկ մարդկանց: Եվ զարմանալ կարելի է, թե ինչպես էր նրան հաջողվում սեղմ ժամկետներում ստանալ ցանկալի արդյունքներ: Նա ուներ նպատակ եւ քայլ առ քայլ հասնում էր իր նպատակին՝ հայ մոնոդիկ երաժշտությամբ դարերով դաստիարակված հայ մարդու ականջն արդեն զգում էր եւ հասկանում եվրոպական բազմաձայնության ողջ հմայքն ու անհրաժեշտությունը:

Հայկական խմբերգային երգարվեստի զարգացման գործում հաջորդ կարեւոր ու հաստատուն քայլը կատարեց կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հայ երաժշտության մեջ օրատորիա-կանտատի ժանրի հիմնադիր Մակար Եկմալյանը: Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ Եկմալյանը 1891-ին հրավիրվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոց՝ որպես երաժշտության դասատու եւ երգեցիկ խմբի ղեկավար: «Նրա պահանջով երաժշտության դասերը բոլոր դասարաններում լինում են պարտադիր, շաբաթական երկու ժամ: Եկմալյանը հիմնովին վերակազմում ու մեծացնում է դպրոցի արական երգեցիկ խումբն ու պարապմունքների ժամերը հասցնում շաբաթական վեց ժամի: Եկմալյանի առաջին գործերից մեկն է լինում ընտրել երաժշտականորեն առավել ընդունակ տղաներին եւ առանձին խնամքով ու հոգատարությամբ վերաբերվել նրանց, հատուկ ծրագրով արտադասարանային պարապմունքներ անցկացնել եւ առհասարակ ուղղություն տալ նրանց»:**

Ներսիսյան դպրոցի քառաձայն երգեցիկ խումբն արագորեն ձեռք է բերում պրոֆեսիոնալ բարձր մակարդակ, եւ 1894-1895 թվականներին նրա հռչակը տարածվում է Անդրկովկասում ու նրա տահմաններից դուրս: «Հայությունը իր բովանդակ կյանքին մեջ,- հետագայում կհիշի հայ երգը համաշխարհային համերգային էստրադա դուրս բերած պրոֆեսիոնալ առաջին երգիչ, իր արվեստը հայրենի երգարվեստի լավագույն նմուշների տարածմանն ու ժողովրդականացմանը նվիրած «հայկական Կառուզոն», Փարիզի Grand-Opera-ի երգիչ, «Տարոնի սոխակ» Արմենակ Շահմուրադյանը,- Եկմալյանի Ներսիսյան վարժարանի խումբի պես նմանը ունեցած չէ: Ռոա կրիթիկները գրած են, թե «Եկմալյանի խումբը ամբողջ մայր կայսրության եկեղեցական խումբերեն Էն աղեկներեն է»: Ամեն կիրակի Թիֆլիս վանքի եկեղեցին ու բակը խռնված էր ամեն ազգի երկսեռ բազմությամբ, իր՝ Եկմալյանի քառաձայն խումբը կերգեր»:

Եկմալյանը նաեւ պատրաստեց հայ երաժշտարվեստի երախտավորների մի ամբողջ համաստեղություն՝ խմբավար Արամ Տեր-Հովհաննիսյան, մանկավարժ-խմբավարներ Ազատ Մանուկյան եւ Անտոն Մայիլյան, երգիչ-երաժշտագետ Մուշեղ Աղայան, երգիչներ Արմենակ Շահմուրադյան, Տիգրան Նալբանդյան եւ Շարա Տալյան:

Եկմալյանի ջանքերով բազմաձայնությունը մուտք գործեց նաեւ Հայաստանյայց առաքելական եկեղեցի: Հայտնի է, թե իր բազմաձայնած «Պատարագը» կատարելու եւ տարածելու գործում ինչ անհաղթահարելի խոչընդոտների էր հանդիպում Կարա-Մուրզան, որին առարկում էին, թե «Աստված մեկ է, երգեցողությունն էլ պետք է միաձայն լինի» կամ՝ «Այդ երաժշտությունից լութերականության հոտ է գալիս» (նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կարա-Մուրզան կաթոլիկ էր եւ ամուսնացել էր երկրորդ անգամ), մինչդեռ Եկմալյանի բազմաձայնած երկսեռ «Պատարագն» ընդունվեց եկեղեցու կողմից՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի 1895թ. հունիսի 7-ի N 325 կոնդակով, իսկ 1896-ին հրատարակվեց Լայպցիգում: Պատարագի մասին Կոմիտասը շուտով գրեց. «Յարգելի երաժիշտ Պ.Մակար Եկմալեանը մեր երգեցողութեան ամայի անդաստանի մէջ ներդաշնակութեան անդրանիկ բուրաստանը տնկեց: Սրանց ուրախ ենք, որ հայերս այժմ կարող ենք պարծել, թէ մենք էլ յեր չենք մնացել վսեմ գեղարուեստի եւ կատարելագոյն երաժշտութեան զարգացումից»:

Հայ խմբերգային երաժշտության պատմության մեջ մեծ դեր խաղաց կոմպոզիտոր, երաժիշտ-բանահավաք, երաժշտագետ, երգիչ, խմբավար եւ մանկավարժ, հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասը՝ իր բազմակողմանի ու արգասավոր գործունեությամբ: 1899թ. ավարտելով Բեռլինի կոնսերվատորիան եւ վերադառնալով Էջմիածին, նա սանձնում է Գետրգյան ճեմարանի երաժշտության ուսուցչի եւ երգչախմբի ղեկավարի պարտականությունները: Ճեմարանի երգչախումբը, արագորեն ձեռք բերելով պրոֆեսիոնալ բարձր մակարդակ, Կոմիտասի ղեկավարությամբ ելույթներ է ունենում Էջմիածնում, Երեւանում, Թիֆլիսում, Բաքվում՝ ամենուր արժանանալով ջերմ ընդունելության եւ արձանագրում ընդալից հաջողություն: Կոմիտասի երգչախմբում են երաժշտական մկրտություն ստացել երգիչներ Արմենակ Շահմուրադյանը, Վահան Տեր-Առաքելյանը...

1910-ին Կոմիտասը տեղափոխվում է Կ. Պոլիս, ստեղծում 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը, որի անդրանիկ համերգը տեղի է ունենում նոյեմբերի 21-ին, Կ.Պոլսի «Պրտի Շանի» ձմեռային թատրոնում: Համերգի ընթացքում դաշնամուրի եւ երգեհոնի նվագամասը կատարում է Կոմիտասը: Մեներգիչ՝ Կոմիտաս: Առաջին բաժնում երգչախումբը կատարում է հոգեւոր ստեղծագործություններ, իսկ երկրորդում՝ Կոմիտասի մշակած ժողովրդական երգերը: «Գուսանի» քառամյա արգասաբեր գործունեությունը խոշոր պատմական իրադարձություն էր: Այստեղ որպես ազգային երաժշտարվեստի նվիրյալներ ձեւավորվեցին Կոմիտասի 5 սաները՝ Բարսեղ Կանաչյանը, Վաղարշակ Սրվանձտյանը, Վարդան Սարգսյանը, Միհրան Թոմաճանը եւ Հայկ Սեմերճյանը, որոնք հետագայում սրբորեն կատարեցին իրենց Ուսուցչի պատգամները եւ շարունակեցին նրա գործը:

Կոմիտասի ստեղծագործական ժառանգության կարեւոր մասն են կազմում նրա խմբերգերը, արական երգչախմբի համար գրված «Պատարագը»:

Ի տարբերություն նախորդների, ովքեր բազմաձայն ստեղծագործություններում համատեղում էին հայկական երաժշտությունն ու եվրոպական մաժոր-մինոր համակարգը, Կոմիտասն իր խմբերգերում ստեղծեց ազգային բազմաձայնությունը:

Պրոֆեսիոնալ կատարողական կոլեկտիվների բացակայության պայմաններում կարեւորվում էր սիրողներից կազմված երգչախմբերի դերը: Կոմպոզիտորներ Գրիգոր Սյունին, Եղիշե Բաղդասարյանը, Անտոն Մայիլյանը, Դանիել Ղազարյանը, Ստեփան Դեմուրյանը եւ ուրիշներ, շարունակելով Կարա-Մուրզայի ավանդույթները, շրջում էին քաղաքից քաղաք կազմակերպում երգչախմբեր եւ հանդես գալիս համերգներով:

Ասիճանաբար հասունանում էր պետական պրոֆեսիոնալ երգչախմբի ստեղծման անհրաժեշտությունը:

Հայաստանի պետական երգչախմբի ստեղծումը հնարավոր դարձավ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո, երբ թվարությունն ասիճանաբար թոթափող մեր հայրենիքում պետության բարձր հովանավորությամբ եւ ակտիվ աջակցությամբ սկիզբ առավ մշակութային կյանքի աշխուժացման աննախադեպ ալիքը: Հայրենիքից հեռու ապրող եւ արարող արվեստագետները՝ Հովհաննես Թումանյանն ու Եղիշե Չարենցը, Թորոս Թորամանյանն ու Ալեքսանդր Թամանյանը, Փանոս Թեղենեանը ու Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Սպենդիարյանն ու Ռոմանոս Մելիքյանը, վերադառնում են հայրենիք՝ այլեւս իրենց գործունեությամբ ծառայելով միմիայն սեփական ժողովրդի մշակույթի զարգացմանը: Կարճ ժամանակում բացվում են մշակութային օջախներ, որոնց մասին երկար տարիներ երազել էին հայ դասական երաժշտության սկզբնավորողները. 1921-ին ստեղծվում է Երեւանի երաժշտական ստուդիան, որի հիմքի վրա 1923-ին հիմնադրվում է Երեւանի կոնսերվատորիան՝ Կոմիտասի փափագը: ՀՍՍՀ ժողկոմխորհի 1932-ի մայիսի 13-ի որոշման համաձայն 1933-ի հունվարի 20-ին Երեւանում Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ իր դռներն է բացում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական թատրոնը:

1932-ին հիմնարկվում է Հայֆիլհարմոնիան՝ երաժշտական համերգային կազմակերպությունը, նպատակ ունենալով պրոպագանդել ազգային ու համաշխարհային դասական եւ ժամանակակից երաժշտական ստեղծագործությունն ու կատարողական արվեստը: Շուտով՝ 1930-ականների վերջերին, ստեղծվում են Հայֆիլհարմոնիայի կատարողական կոլեկտիվները՝ Հայաստանի կապելլան, Հայկական ժողովրդական գործիքների նվագախումբը, Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը, Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը, Հայաստանի ջազ նվագախումբը, Կոմիտասի անվան լարային կվարտետը եւ այլն:

Հայաստանում են հաստատվում Ռուսաստանի՝ Մոսկվայի եւ Լենինգրադի կոնսերվատորիաներում կրթություն ստացած մեր հայրենակիցները՝ երգիչներ Հայկանուշ Դանիելյանը, Շարա Տալյանը, դիրիժորներ Կոնստանտին Սարաջեւը, Գեւորգ Բուդաղյանը, Սուրեն Չարեֆյանը, Միխայել Թավրիզյանը, Ալեքսանդր Մելիք-Փաշայանը եւ այլք: Հայ երաժշտության մեծագույն երախտավորների գործունեությամբ աշխուժանում է նաեւ խմբերգային ասպարեզը: Սա կապված էր առաջին հերթին կոմպոզիտոր, խմբավար, Երեւանի երաժշտական ստուդիայի հիմնադիր Ռոմանոս Մելիքյանի, Կոմիտասի սան, կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հասարակական գործիչ Սմբատ Մելիքյանի, Կարա-Մուրզայի սան, կոմպոզիտոր, մանկական երգչախմբերի կազմակերպիչ Ազատ Մանուկյանի, կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, 1929-ից Երեւանի պետական կոնսերվատորիայի խմբավարական դասարանի ղեկավար, Երեւանի ռադիոկոմիտեի երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր (1938-1945) Կարո Զաքարյանի, կոմպոզիտոր, Երեւանի ուսուցչի տան երգչախմբի խմբավար, մանկավարժ Մարտին Մազմանյանի եւ Հայաստանի պետական երգչախմբի եւ Հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար, Հայաստանի երգչախմբային նորաստեղծ ընկերության առաջին նախագահ եւ ընկերության երգչախմբի հիմնադիր, Երեւանի կոնսերվատորիայի խմբավարական ամբիոնի հիմնադիր Թաքուշ



Տես էջ 5

Նոր հրատարակություն

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԿՅԱՆՔԸ

ԳՐԻԳՈՐ ԱՃԵՄՅԱՆ

Գուրգեն Մահարին իր «Ինքնակենսագրությունն» ավարտում է բնորոշ մի պատկերով. «...**եթե այս տողերին ներս մտներ ահեղ եւ ամենակարող Եհովան, նստեր իմ դիմաց, մի ծխախոտ վառեր եւ ասեր- Տալիս եմ քեզ երկրորդ կյանք, գծիր քո երկրորդ կյանքի ուղին օրորոցից մինչեւ գերեզման, ինչպես որ ցանկաս, եւ կկատարվի քո կամքը... ինչպե՞ս կուզեիր ապրել: Ես նրան կպատասխանեի, առանց վարանելու.**

- Ճիշտ այնպես, ինչպես ապրեցի»:

Ինքնատիպ այս հնարանքն իր էությամբ հնարվածք չէր, այլ՝ զուտ ճշմարտություն: Եթե Գուրգեն Մահարին շեղվեր ապրած կյանքի բախտորոշ մի կետից, այսօր մենք չէինք ունենա ստեղծագործական իր կոչումին եւ գրականությանը հավատարիմ գրողին, այլ եւս մեկին այն կենդանի դիակներից, որոնք կյանքի մայրամուտին դժվարությամբ են մտաբերում, թե երբ եւ ինչու են հայտնվել գրողական կոստյումում: Կամ եւս մեկին այն գրողներից, որոնց երկրային կյանքն ուղեկցվում է հնչեղ զանգուլակներով, ընթերցողին ոչինչ չասող դրական-քաղաքական-դիվանագիտական գրախոսականներով, բազմաշիրաժ հրատարակություններով, նշանակովի ու ընտրովի «սուրբ տեղերը» զբաղեցնելով, բայց որոնց ստեղծագործական մահը համընկնում է ֆիզիոլոգիականի հետ՝ հենց որ նրանք փակում են իրենց աչքերը:

Գուրգեն Մահարին ապրեց բարդ ժամանակաշրջան. «...**քանի՞ պետականություն տեսա,- սուլթանական, ժեռն-թուրքական, ցարական, մենշեւիկյան, սոցիալիստական, Սեյմի, դաշնակցական, Լենինի, Ստալինի, Խրուշչովի, եկանք էլանք Բրեժնեւ ու Կոսիգին... Վանից մինչեւ Սիբիր... Հարավի շոգից դողալով, հյուսիսի գրից քրտնելով...**»: Նման ժամանակաշրջանն իր կնիքը դրեց եւ նրա կենսագրության վրա: Նա ռոմանտիկ ննջադասության ամենաթեթեւված գրողն էր, որը երկու անգամ վտարվեց պրոլետարական գրողների շարքերից, տասնմեկ տարի կորցրեց ստալինյան գուլագում, վեց տարի՝ ցմահ կոչված ախտորում: Եվ գոյատեւեց: Գոյատեւեց, որովհետեւ ուներ հոգետր հենարան՝ հավատարմությունը գրական ճշմարիտ չափանիշներին: Վերադառնալով գրական կյանք՝ նա, ֆիզիկապես կես մարդու վերածված, ապրեց լիարյուն ստեղծագործական կյանքով՝ ձեռք բերելով ժամանակի եւ հայ ժողովրդի ողբերգական կյանքի զարկերակի վրա:

Եվ որքան էլ լուրջ, բայց ամենազոր ժամանակն այսօր հաստատում է նրան ապրած երկրային կյանքի փորձությունների դիմաց: Նա ոչ մի տող չէր կասկածում «Այրվող այգեստանների» վերջնական ճակատագրի վրա. «**Ես մնում եմ իմ տեսակետի վրա.- այս գիրքը իմ ամենալավ գիրքն է իր բոլոր թերիներով հանդերձ**»: Չի կարելի ասել, թե գրքի շուրջը բարձրացած ոտղոռդվող, արհեստական աղմուկը չդադարեցրեց նրան, այն էլ ինչպե՞ս. «**Ես խաչից չեմ վախենում, իմ կյանքը խաչելություն է եղել, բայց իմ կյանքի վերջալույսին ենթարկվել նման անճիշտ եւ իրականության հետ կապ չունեցող վերագրումների, չափազանց ծանր է**»:

«Այրվող այգեստաններ» վեպն ունեցավ նույնքիսի ճակատագիր, ինչպես Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը եւ իզուր չէր Մահարու հիշեցումը. «**Ով՝ ով, դուն շատ լավ գիտես գինը դատափետումներու եւ ծափողջույններու. «Նահանջ»ը հիշենք, քո «Նահանջ»ը, որը դատափետվեցավ իր ժամանակին. մոռացության ջուրը տարավ դատափետողներին, իսկ «Նահանջը առանց երգի»ն մնաց ափը մարգարիտի նման... Գրական արտադրանքը միշտ հաղթեր է «արտա-գրական» ընկալումներ հետապնդող ննջադասությանը: Անհեղլի օրե՛նք**»:

Օրերս Քեմբրիջի «Ջերմինալ փրոդաքշընս» հրատարակչությունում լույս տեսավ Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպն անգլերեն լեզվով: Վեպի թարգմանությունը կատարել են Տիգրան Թախթան, Հայկ Թախթան եւ Հասմիկ Գազարյանը: Թարգմանության հիմքում ընկած է վեպի առաջին հրատարակությունը: Անոտացիայում խոսվում է այն բարդ ճանապարհի մասին, որով անցել է վեպը մինչեւ իր միջազգային ճանաչումը:

Սա վեպի առաջին հանդիպումը չէ օտարերկրյա ընթերցողի հետ: 2001 թվականին Գ. Կուբաթյանի եւ Ն. Մկրտչյանի թարգմանությամբ այն լույս տեսավ ռուսերեն՝ «Դուժբա նարոդով» հրատարակչությունում:

Մի գրողը չի երազում ներկայանալ միջազգային ընթերցողին: Ցփոթեմք քաղաքական կոնյուկտուրայի պահանջներից բխող այն ներկայացումների հետ, որոնց հետեւանքով մենք ունենք տասնյակ լեզուներով թարգմանվող գրողների մի ամբողջ թաբուն, որոնք մեր օրերում դադարեցին ոչ միայն թարգմանվելուց, այլեւ մայրենի լեզվով հրատարակվելուց:

Գուրգեն Մահարին հույս չուներ «Ծաղկած փշալարերն» իր կենդանության օրոք տպագրված տեսնելու, սակայն գիտակցում էր դրա համամարդկային արժեքը. «...**վիպակս վերջացուցի: Պատմվածքի ծրագիր ունեի, վիպակ դուրս եկավ: Վեպ չէ՛, վիպա՛կ: Միակ գործս, որով կարող եմ ներկայանալ միջազգային ընթերցողին, եթե... եթե տպվի՛ եւ եթե չմնա զզրոցիս մեկ անկյունը... Գոհ եմ եւ ուրախ, ինչ կուզե ըլլա՛, գործը կատարված է. տաքած քարը գետին չի մնար, կըսե առածը**»:

Եվ չմնաց: 1990 թվականին Պիեր Տեր-Սարգսյանի թարգմանությամբ Փարիզի «Մեսիդոր» հրատարակչությունում ֆրանսերեն լեզվով լույս տեսավ «Ծաղկած փշալարեր» սիբիրյան վիպերգը, իսկ 2002 թվականին Փարիզի մեկ այլ հրատարակչությունում այն լույս տեսավ երկրորդ հրատարակությամբ:

ԽՍՀՄ փլուզումից հետո Գուրգեն Մահարին ամենաթարգմանվող եւ տպագրվող հայաստանյան գրողն է: Նա շարունակում է զարմացնել անգամ հայ ընթերցողին, որի համար նորություն էին «Երգիծանք եւ հումոր» (2004) եւ «Արտամետյան գիշերներ» (2006) ժողովածուները: Ավելացրեք դրանց «Այրվող այգեստաններ» վեպի գիտական հրատարակությունը (2004) եւ «Անանձնական» բանաստեղծական ընտրանին: Ավելացրեք հրատարակության պատրաստ երկհատոր «Նամականին», որը կլինի վերջին մահարիական ինքնատիպ խոսքն ինտերնետի դարում մարող նամակագրական ժանրում, ինչպես նաեւ նույնպես երկհատոր գրական հրապարակությունը: Լույս կտեսնի նաեւ «Գուրգեն Մահարու կյանքի եւ ստեղծագործության տարեգրությունը» ծավալուն աշխատությունը: Օրվա հարց է գրողի Երկերի տասհատորյակի հրապարակումը:

Գուրգեն Մահարու հետմահու գրական ճակատագիրն ինչ-որ չափով հատուցում է քաղաքական եւ գրական այն խաչելությունները, որն ունեցավ գրողն իր երկրային կյանքում:

Առանց կեղծ համեստության:

Արձագանք

«Ազգ» մշակույթ-հավելվածի 19 մայիսի թիվ 10-ում տպագրված Գրիգոր Աճեմյանի «Մահարի-Կապուտիկյան-Չարյան եռանկյան մութ անկյունները» հրապարակման

Հարգելի խմբագրություն,

Տիաճությամբ կարդացի Գրիգոր Աճեմյանի (Մահարու որդու) հոդվածը՝ Մահարի-Կապուտիկյան-Չարյան հարաբերությունների մութ ծալքերի վերաբերյալ («Ազգ» մշակույթ, թիվ 10. 2007): Գրականագետ չեմ, սակայն գրվածի մեծ մասը գոնե ինձ արդեն հայտնի էր, բացառությամբ տիկին Սիլվայի անձնականի հետ կապված որոշ ծալքերի ու անհամ «կասակների», որոնք իմ կարծիքով, որեւէ իսկական տղամարդ իրեն չպիտի թույլ տա: Վերջիվերջո, որքանով է տեղին, որ մեր ազգի կողմից արժանիորեն հարգված Տիկնոջ հիշատակին ցեխ շպրտի շահագրգիռ (ազգական) մեկը: Արդյոք սա անձնական վրեժ չէ: Մահարին մի կողմ, մեծն Սեւակն է ասել. «Գողների Միությունում մի տղամարդ կա, էն էլ Սիլվան է»:

Գրվածի մի մասն է իրականություն (նույն ոճով պամֆլետներ կարելի է գրել նաեւ Չարենցի, Շիրազի, Իսահակյանի եւ այլոց մասին, ո՞վ է անմեղ) եւ Կապուտիկյանն ինքն այդ ամենն խոստովանել է իր հուշերում (լավ է Աճեմյանը մեծահոգորեն չի մեջբերում, թե ինչպես Կապուտիկյանն այրել է հոր ձեռագրերն ու Չարենցի մակագրությամբ գիրքը): Ուրեմն ինչու կրկին քունոտ գչով բարձրացնել այդ հարցերը. «Ինտերնացիոնալիստ» այդ տիկինն Արցախի հարցի գլխավոր ջատագովներից էր, մեծ հայրենասեր բանաստեղծուհի (հարգարժան Մահարուց ավելի շատ բան է գրել այդ թեմայով): Շիրազի նախկին կինն ու Արա Շիրազի մայրը, գոնե վերջին իշխանությունների առջեւ գլուխ չխոնարհեց (ինչը չէի կարող ասել ոչ ինտերնացիոնալիստ Մահարու էստոնուհի, այո, բազմաչարչար կնոջ մասին, որ Քոչարյանի ընտրարավի ժամանակ հեռուստատեսային «ատող» էր դարձել):

Ինչեւէ: Չեմ դատում: Բոլոր դեպքերում «Ազգն» այնքան հետաքրքրական թերթ է, որ նույնիսկ նման հրապարակումները միչ բանով կարող են վնասել նրա վարկին:

Հաջողություն ձեզ:

Հարգանքներով՝ **Ատոմ Գրիգորյան**

Երիտասարդ ստեղծագետ

Հ.Գ. Եթե հնարավորություն լինի իմ այս համեստ նամակը փոխանցել որդի Աճեմյանին, խնդրում եմ իմ կողմից հարցնել. «Մահարին, եթե կյանքում կրքոտ ու սիրաշաս հայ տղամարդ էր, արդյոք կմերժեր իր սիրելի էստոնուհի կնոջը զուտ որոշես գեղեցիկ ալեգորիա «նվիրել» ամենաթանկագինը՝ Արարատը...

Խմբ. կողմից. - Գնահատականների մեջ լինենք չափավոր եւ առհասարակ որեւէ մեկին անխոցելի կուռքի չվերածենք: Իսկ նշանավոր անձերի կյանքի մանրամասները մշակույթի եւ գրականության պատմության համար հետաքրքրական էջեր են: Մեծերն էլ մարդկային թուլություններից ու թերություններից զերծ չեն, գուցեեւ՝ հակառակը: Հավելենք նաեւ, որ Գուրգեն Մահարու կինը՝ Անտոնինա Մահարին ազգությամբ ոչ թե էստոնուհի է, այլ լիտվուհի:

Էջ էջից

ՀԱՅ ԽՄԲԵՐԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ...

Ալթունյանի գործունեության հետ. նրանք էին, որ մեծապես խթանեցին հայկական խմբերգային երաժշտության զարգացումը:

* * *

Եվ այսպես, Հայֆիլհարմոնիայի կազմում 1937 թվականին սկսում է գործել Հայաստանի պետական երգչախումբը, որի ստեղծումը դարակազմիկ նշանակություն ունեցավ եւ ունի հայ մշակութային կյանքում: Առաջին անգամ հայ իրականության մեջ սկսում է գործել պետական պրոֆեսիոնալ երգչախումբ, որի դիրիժորական վահանակի մոտ առաջին անգամ կանգնում է պրոֆեսիոնալ խմբավարը՝ Լենինգրադի կոնսերվատորիայի խմբավարական եւ փողային բաժինների շրջանավարտ, հետագայում՝ ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Թաթուլ Ալթունյանը:

Հայաստանի պետական երգչախմբի ստեղծագործական առաջընթացի, պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման, երկացանկի հարստացման գործում մեծ է ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Արամ Տեր-Հովհաննիսյանի վաստակը, որը ղեկավարեց երգչախումբը 1940-41 եւ 1954-64 տարիներին:

Կատելյան անցավ 70-ամյա հիրավի փառապանծ ուղի: Եվ այսօր էլ, չնայած իր «պատկառելի» տարիքին, երգչախմբի կոլեկտիվը լի է երիտասարդական նախանձելի ավյունով, նորանոր ծրագրերով, հայ ու օտար հանդիսատեսին ներկայացնելու անակնկալներ ու փայլուն կատարումներ պարգեւելու պատրաստակամությամբ:

Եվ պատահական չէ. որ սեփական հոբելյանական կատակցությամբ Կատելյան՝ մաեստրո Չեքնի կատակցությամբ իր արվեստի բազիքյանի ղեկավարությամբ իր արվեստի բազիքյանի ղեկավարությամբ հատուցեց հերթական անակնկալը՝ ապրիլի 19-ին մենք բացառիկ հնարավորություն ունեցանք Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի եւ վաստակավոր կոլեկտիվ պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի (գեղ. դեկ.՝ Էդուարդ Թոփչյան) կատարմամբ՝ ըմբոշխնելու Ջ. Վերդիի՝ սակավ հնչող «Նաբուկո» օպերայի՝ հայաստանում անդրանիկ համերգային փայլուն կատարումը՝ մասնակցությամբ Դավիթ Բաբայանցի, Մագդա Մկրտչյանի, Վազգեն Ղազարյանի, Զեմֆիրա Դանիելյանի եւ Սուրեն Մկրտչյանի: Շնորհիվ մաեստրո Չեքիջյանի «Նաբուկոն» առաջին անգամ ներկայացավ հայ հանդիսատեսին, ներկայացավ իր իտալական առաջնախաղից ճիշտ 165 տարի անց:

Պատահա՞կան էր արդյոք ստեղծագործության ընտրությունը: Բնավ՝ ոչ: Հայտնի է, որ օպերան Վերդին գրեց՝ դրժելով այլեւս երբեք չստեղծագործելու սեփական խոստումը. դրանից առաջ տպալվել էր նրա առաջին կոմիկական օպերան, ինչը տրամաբանական էր, քանզի կոմպոզիտորը ստիպված էր կատակերգական օպերա գրելու իր պատվերը կատարել այն ժամանակ, երբ իրար եռեւեց հուղարկավորել էր իր երկու սիրասուն բալիկներին ու տիկնոջը՝ 1840 թվականն իր կյանքում համարելով անհիշալի տարի: Սակայն երջանիկ ասպրի տակ ծնված «Նաբուկոյի» 1842 թվականի մարտի 9-ի պրեմիերայի շնորհալից հաջողությունը, երբ առաջին գործողության ֆինալում ողջ հանդիսատեսը մեկ մարդու պես ոտքի ելավ, Վերդիին վերադարձրեց երաժշտական թատրոնի կախարդող աշխարհը՝ նշանավորելով կոմպոզիտորի հիասքանչ երաժշտության հետագա հաղթարշավն ու անվախճան երթը աշխարհի տարբեր երկրների օպերային բեմահարթակներում: «Այս օպերայով, ըստ էության, սկսվեց իմ արտիստական կարիերան»,- հետագայում կխոստովանի Վերդին:

Այսօր եւս Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբն իր գործունեությամբ եւ վերջին համերգով հավաստեց, որ մենք, մաեստրո Չեքիջյանի ժամանակակիցներս, դեռեւս բազում առիթներ կունենանք վայելելու մեր հիասքանչ կոլեկտիվի կատարմամբ համաշխարհային եւ հայ խմբերգային երաժշտության ինչպես հանրահայտ, այնպես էլ սակավ կատարվող գոհարները:

Շնորհավոր ձեր տարեդարձը՝ թանկագին մաեստրո:

Շնորհավոր տարեդարձդ՝ սիրելի կատելյա:

Հոդվածագիրը ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրենն է, արվեստագիտության թեկնածու:

* *Մաքենս Մուրադյան. «Քրիստափոր Կարա-Մուրզա. Կյանքը եւ երաժշտական-հասարակական գործունեությունը», Երեւան, 1950, էջ 29:*

** *Նիկողայոս Թահմիզյան. «Մակար Եկմալյան. Կյանքն ու ստեղծագործությունը», Երեւան, 1981, էջ 21:*

Քանդակի իսկությունը վեճի առարկա

Պրաքսիտելեսը չի հայտնվել Լուվրում

Կլիվլենդի արվեստի թանգարանի հավաքածուի մեջ բրոնզից պատրաստված Ապոլլոնի հնագույն մի քանդակի ծագման շուրջ տարաձայնությունը լուրջ խնդիրներ է առաջացրել Փարիզի Լուվր թանգարանի եւ Հունաստանի կառավարության միջեւ:

Ըստ «ARTnews» պարբերականի այս տարվա ապրիլյան համարի տեղեկությունների, Հունաստանի իշխանությունները չեն թույլատրել, որ այդ քանդակը ներկայացվի այս գարնանը Լուվրում կազմակերպված 4-րդ դարի հունական քանդակների ցուցահանդեսում, որը տեւելու է մինչեւ հունիսի 18-ը:

Մոտ 1,5 մետր բարձրությամբ քանդակը, որի թեւերը բացակայում են, արվեստագետ-մասնագետների հավաստմամբ, ներկայացնում է հունական աբեւի Ասվածը, որը փորձում է մի ձեռքով հասնել դափնու ճառի ճյուղերին, իսկ մյուսով՝ նետահարել մողեսին:

Ըստ Լուվրի աշխատակիցների մեկնաբանության, Հունաստանի մշակույթի նախարարությունը «սպառնացել» է չեղյալ համարել ցուցահանդեսին 19 ստեղծագործություններով մասնակցելու պայմանագիրը, եթե Լուվրը ցուցադրի Կլիվլենդի թանգարանից բերված այդ քանդակը, որն աշխարհին ծանոթ է որպես «Ապոլլոն Սաուրոկտոնոս» կամ «Մողեսասպան Ապոլլոնը» անունով եւ վերագրվում է Պրաքսիտելեսին:

«Հունաստանի այդ պայմանը հաշվի առնելով՝ Լուվրը ստիպված էր հրաժարվել Կլիվլենդից այդ քանդակը փոխ առնելու մտադրությունից», գրված է այդ առթիվ հրատարակված բացատրագրում: Հունաստանի մշակույթի նախարարության աշխատակից, հնեաբան Մարիա Վոլիոտին, սակայն, անդրադառնալով «սպառնալիք» բառին նշել է, որ Հունաստանը պարզապես «սկեպտիկ» վերաբերմունք է դրսեւորում այդ քանդակի ծագման վերաբերյալ, կասկածում է, որ կարող է կեղծ կամ կողոպտված լինի եւ չի ցանկանում, որ այն տեղ զբաղեցնի իսկականների շարքում: «Անորոշությունները չպետք է զեղեցնել իսկականների կողքին», հաստատեցրել է նա:

Կլիվլենդի թանգարանը, ըստ պարբերականի հոդվածագիր Սթիվն Լիթի, «Ապոլլոնի» այդ քանդակը 2004-ին գնել է Ժենեւի «Ֆենիքս Հին Արվեստի» պատկերասրահից, որը պատկանում է Ալի եւ Հիշամ Աբութաամներին: Թե քանիսո՞վ է ձեռք բերվել քանդակը, լրագրողին չի հաջողվել ճշտել:

Վոլիոտին նշել է, որ Աբութաամ եղբայրներն անցյալում մեղադրված են եղել մախանենգությունների մեջ: Նյու Յորքի դատարաններից մեկում, օրինակ, Հիշամը մի անգամ իրեն մեղավոր է ճանաչել հին արծաթե մի թաս Մ. Նահանգներ մտցնելու համար փաստաթղթեր կեղծելու գործում: Դրանից առաջ Եգիպտոսի դատարաններից մեկում թանկարժեք հին իրերի մախանենգության համար Ալի Աբութաամին իր բացակայությամբ մեղավոր են ճանաչել: Ալին ինքը հերքել է հանցանքի գործած լինելը:

Անցյալ դեկտեմբերին «Ֆրանսպրես» գործակալության տարածած մի պատմություն դարձյալ «Ապոլլոնին» էր վերաբերել: Անանուն մի աղբյուր մեջբերելով՝ տեղեկությունն այն մասին է, որ իբր Հունաստանի մշակույթի նախարարը ասել է, որ այդ քանդակը «հավանաբար անօրինական կերպով վաճառվել է 1990-ական թվերին Իտալիայի եւ Հունաստանի միջեւ ընկած միջազգային ջրային տարածքում իտալական մի նավի անձնակազմի կողմից»:

Իր հերթին Կլիվլենդի թանգարանի տնօրեն Թիմոթի Ռաբը պնդում է, որ իր հաստատությունը այդ քանդակը ձեռք է բերել օրինական միջոցով այն բանից հետո, երբ պատմական եւ գիտական ուսումնասիրությունները պարզել են, որ «Ապոլլոնը» մոտ 100 տարի առաջ է հայտնաբերվել պեղումների ժամանակ, ուստի չէր կարող ենթարկա լինել հնավայրի ավարառությունը արգելող մեր օրերի օրենքներին:

«Ավելին, քանդակի հետազոտությունը ոչ մի ապացույց չի ներկայացնում, որ այն հայտնաբերվել է բաց ծովում», ավելացրել է Ռաբը: Թանգարանը նաեւ իր տրամադրության տակ ունի գրավոր մի փաստաթուղթ գերմանացի փաստաբան Էռնստ Ուլրիխ Վոլտերից առ այն, որ այդ քանդակը իր ընտանիքի հավաքածուի մաս է կազմել մինչեւ երկրորդ համաշխարհային պատերազմը:

Վոլիոտին հարցականի տակ է դրել փաստաբանի վարկածը, միաժամանակ չհաստատելով, որ քանդակը հայտնաբերվել է «միջազգային ջրերում»: «Նման բան հաստատող ոչ մի ապացույց չունենք», ասել է նա:

Ռաբի պնդումներով Հունաստանի կառավարության չհիմնավորված արգելքը «անարդար» է: Նա ընդգծում է, որ Կլիվլենդի թանգարանը պատրաստ է համապատասխան երկրներին վերադարձնելու ամեն մի ստեղծագործություն, որի համար բավականաչափ հիմնավոր ապացույցներ կտրամադրվեն կողոպտված լինելու վերաբերյալ: Նա օրինակ է բերել այն, որ վերջերս Իտալիայի կառավարության հետ նման խոսակցություններ են տեղի ունեցել թանգարանի որոշ ցուցանմուշների վերաբերյալ, որոնք ենթադրվում են, որ անօրինական ճանապարհներով են մուտք գործել Մ. Նահանգներ: Նրա կարծիքով «Ապոլլոնի» ցուցադրումը կնպաստեր դրա վերաբերյալ առավել ճշգրիտ տեղեկությունների ձեռք բերմանը:

Ցարդ, մասնագետները հավատացած են, որ քանդակը պատրաստված է մ. թ. ա. 4 դարից մ. թ. 300 թվականը ընկած ժամանակահատվածում: Հիմնավոր ապացույցներ չկան, թե այն իրականում հունական բնօրինակն է, թե հետագայում արված հռոմեական մի տարբերակ:

«Չկարողանալ ցուցադրելը մեծ վնաս է հասցնում արվեստասեր գիտական հասարակությանը, որը բաց է թողնում մի հրաշալի առիթ՝ արժեւորելու եզակի մի ստեղծագործություն», նշվել է Լուվրի պաշտոնական հայտարարության մեջ»:

Ծանոթագրություն

1. Ըստ ՀՍՍՀ ԳԱ Հայկական սովետական հանրագիտարանի (հատոր 9, Երեւան, 1983 թ.) Պրաքսիտելեսը ծնվել է մ. թ. ա. մոտ 390-ին Աթենքում եւ մահացել մ. թ. ա. մոտ 330-ին: Դասական արվեստի ուշ շրջանի հույն քանդակագործ է, Կեփիսոդոտոսի որդին եւ աշակերտը: Հիմնականում օգտագործել է մարմարը: Պահպանվել է միայն Օլիմպիայում գտնված «Հերմեսը եւ մանուկ Դիոնիսոսը» (մ. թ. ա. մոտ 340): Մարմարի նրբագույն մշակման, լուսաստվերային էֆեկտների վիրտուոզ օգտագործման շնորհիվ նա իր կերպարներին հաղորդել է հոգվերազական-զգայական ոգեշնչվածություն:

Թարգմանությունը
ՀԱԿՈԲ ՕՈՒԼԻԿՅԱՆԻ

Նա իր ինքնադատությունն էր նկարում

Կյանքին հրաժեշտ տվեց գերմանացի նկարիչ Յորգ Իմմենդորֆը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Այսիսի 28-ին Դյուսելդորֆի իր տանը 61 տարեկանում նկարիչ, գեղարվեստի պրոֆեսոր Յորգ Իմմենդորֆը կնքեց մահկանացուն: Իմմենդորֆին դասում են հետպատերազմյան Գերմանիայի ամենածանաչված նկարիչներից մեկը:Հասարակությունը նրան սիրում էր. նրա ագիտ-պրոպ (քարոզչական) արվեստը, գերմանա-գերմանական ուսոտիաները ինքնարկման առարկա էին դառնում ոչ միայն մամուլի էջերում:Իր վերնախավային պատկանելությանը նա «հակադրում» էր ինքնադատական այնպիսի հայացք, որ անհրաժեշտ է բարոյականության սահմաններին մերձ լինելու համար: Վերջին շրջանի մանր ֆիգուրներով նկարչությունը նրան մերձեցնում էր գերիրապաշտությանը, բայց, ինչպես նրա արվեստի գիտակներն են վկայում, ամենից առաջ նա իրապաշտ էր, որովհետեւ թղթին՝ կտավին էր փոխանցում ինքնադատությունը: Նա հենց ինքնադատությունն էր նկարում: Փնտրածը կարեկցությունը չէր, ուշադրությունն էր: Դրա պահանջն անսպառ էր: Ի հեճուկս անբուժելի, մահագույժ հիվանդության Յորգ Իմմենդորֆը նկարում էր: Կոկաինն ու կանցլերի ոսկե պատկերները ժամանակը մոռացության գզրոցներին պահ կտա, իսկ հիշողությունը պատմությանը կփոխանցի ինքնադատ արվեստագետի մնայուն արժեքը:

Ծնվել էր 1945-ի հունիսի 14-ին Ներին Սաքսոնիայում: 16 տարեկանում առաջին ցուցահանդեսն է ներկայացնում, աշակերտում է Բոյսին, արվեստի ակադեմիայի դեմ բողոքը առիթ է տալիս նոր ծնունդի՝ հիմնում է հակաակադեմիա, վոնդում են, «դառնում» է մարիս, ակցիոնիս, դադրցի ուսուցիչ , ի վերջո անուն հանած նկարիչ:

Նրան փառք բերեց «Cafe Deutschland»-ը , որի թեման Գերմանիայի վերամիավորումն էր:Յորգ Իմմենդորֆը Արեւմտյան Գերմանիայի կարետրագույն քաղաքական նկարիչն է: Արտասահմանում ավելի վաղ են նկատում նրան, սկսում են ցուցադրել: 1996-ին նրա ստեղծագործության հետահայաց առաջին մեծ ցուցադրությունն է կայանում Վոլֆսբուրգի գեղարվեստի թանգարանում:

Հիվանդությունը կաթվածահար էր արել նրա մարմինը, բայց առողջ սահմաններում ապրստանած նրա կամքն ու ցանկությունները չէին հաշվում այն վիճակի հետ, որ այլեւս արարել- ստեղծել-արտադրելն անհնարին էր:Արվեստանոցում մենակ չէր: Ասիստենտ-սաներն նրա կողքին էին, ավելի ճիշտ աշխույժ ձեռքեր էին վարպետի համար: «Ինչպե՞ս եմ նկարում ինքս ձեռքերով: Նկարչի իմ այժմյան աշխատանքը շատ նման է երգահանի ստեղծածին: Ամեն օր այստեղ կամերային համերգներ են: Ես մի բան եմ մոգոնում, ու հետո դա համերգի մասնակիցները՝ օգնականներս պիտի կատարեն՝ իրականության վերածեն», վերջին շրջանում իր աշխատակերպն այսպես էր բացատրել Իմմենդորֆը հարցազրույցներից մեկում:

Իր 24 նկարներով ձեւավորված «Աստվածաշունչը» վերջին ստեղծագործություններից էր: Թերեւս ամենաշատ հարցականներ հենց այս «կապն» էր հարուցել մամուլի էջերում՝ Իմմենդո՞րֆ ու.. Աստվածաշո՞նչ: Իմմենդորֆի ստեղծածը շատ հեռու է Ս.Գրքի պատկերազարդ՝ մեր «տեսած» օրինակներից: «Ես ոչ Շագալ, ոչ էլ Ռեմբրանդտ եմ: Հիմա ժամանակներն այլ են: Նույնիսկ Հռոմի պապի մահն էլ վերածվեց PR միջոցառման: (Մարդիկ իրենց բջջային հեռախոսներով լուսանկարում էին Պապին): Ուրեմն ուրիշ չափորոշիչներ, ուրիշ տեսողություն է հարկավոր. պարզապես վերցնում եմ աստվածաշնչյան տեքստն ու իմ նկարը կցում դրան, դնում կողքին, առանձին, ասես մեկն ուզեցել է գրքում դրանք, այսպես ասենք՝ մախանենգ ձեւով թաքցնել: Իհարկե, տիպիկ աստվածաշնչյան էսթետիկայից բխող նկարներ են դրանք: Ինձ դուր է գալիս, երբ հարցնում են՝ այս նկարներն այս գրքի մեջ ինչ գործ ունեն»:

4 տարի առաջ բուլվարային մամուլը «նրանով» էջեր լցրեց՝ «Սեքս-պրոֆեսոր», «Կոկս-նկարիչ» վերնագրերը պատմում էին Դյուսելդորֆում հյուտանոցային մի երեկույթի մասին, որ գրոհած ոստիկանները հայտնաբերել էին Իմմենդորֆին՝ թմրադեղերի ու 9 մարմնավաճառ կանանց ընկերակցությամբ: Նկարչի նրա հոչակը դրանից չտուժեց: Նրա արվեստի գինը բարձրանում էր, ցուցահանդեսներն առավել շատ էին գնահատվում, նա իր լեռպն գագաթն էր մագլցում: Ծանր հիվանդության ճիրաններում (տառապում էր ALS նյարդային հիվանդությամբ՝ Amyotrophe Lateralsklerose: Գերմանիայում 8000 մարդ տառապում է նյարդային նույն հիվանդությամբ: Նա ստեղծեց մի հիմնադրամ, որը զբաղվում է այդ հիվանդության հետազոտմամբ) գտնվող նկարչին, ում հաշված տարիներ էին մնացել ապրելու, ազատազրկում չէր սպասվում: Դյուսելդորֆի արվեստի ակադեմիայում էլ նրան չզրկեցին դասավանդելու պարտականություն-իրավունքից: Տոգանը դրամական բավականին կլորիկ մի գումար էր: Այս պատմությունը չխանգարեց, որ 2006-ին նրան արժանացնեն գերմանական պատվավոր Goslarer Kaiserring պարգեւին (արվեստագետն անձամբ չկարողացավ այն ստանալ՝ ծանր թոքաբորբի պատճառով):

Նա սիրով էր հանրության «սեփականությունը» դարձնում իր կյանքը՝ մամուլում հրապարակված հարցազրույցներում անկաշկանդ պատմում էր իր հիվանդության, երիտասարդ կնոջ, իր փոքրիկ դստեր, սիրո մասին: Նա մի արվեստագետ էր, ով սիրում էր հրապարակայնություն ու կատարելապես տիրապետում էր «փառահեղի» կեցվածքին՝ ավտոմեքենաներ, շքեղ զարդեր, սիրային կարքեր, բայց նաեւ՝ բողոք ու ընդվզում, քաղաքականության մեջ մասնակցություն կամ ավելի ճիշտ՝ միջամտություն ու ինքնադատական արվեստ: Նրան գնահատողների բանակն ընդգծում է՝ նա միշտ բարձր բարոյականության սահմանը չի խախտել. Գերմանիայի վերամիավորման երազը նա պահ է տվել «Cafe Deutschland» 23 նկարներից կազմված շարքում, որը նկարչի ամենամեծ հետքն է:

Իմմենդորֆն իր ինքնադատությունն էր նկարում, իսկ երբ ոչինչ չէր զգնում ինքնադատելու, որոշում էր, ասենք, նախկին կանցլեր Շրյոդերին ուղեկցել Չինաստան ու Վրաստան:

2006-ին նա կանցլերի ոսկե դիմանկարը ստեղծեց: Տարիներ հետո սրա մասին էլ կմոռանան կամ էլ անեկդոտի ժանրը կհարստանա եւ մի պատմությամբ:

Որեւէ մեկը նրան չգերազանցեց. դարձավ թե՛ կանցլերի, թե՛ հասարակության սիրելին:



Շատերը նրան կանցլերի արվեստագետ էին անվանում: Դա, ասում են, նրա համար առավել հաճելի էր, քան մեկ ուրիշ արտահայտություն՝ «պետության, պետական արվեստագետը»: Իրականում նա հպարտ էր, որ Դաշնային նախագահ Ռիխարդ ֆոն Վայցեկերը վերամիավորմանը նվիրված ճառը «Cafe Deutschland»-ի նկարներից մեկի ֆոնին էր արտասանել: Այդ պատճառով էլ շատ էր նեղտրել, որ Ռայխստագում ուրիշների կողքին իրենից որեւէ նկար չկար: Չէ՞ որ Գերմանիան նրա մշտական թեման էր: Նրա առաջին ցուցահանդեսը հենց այդպես էլ վերնագրված էր՝ «deutsch, deutsch, deutsch», երկրորդը՝ «vietnam, vietnam, vietnam»: Այդ ժամանակ նա դեռ մարիս էր: Չինացիները նրան շատ են սիրում ու կնքել են «նկարչության Պավարոտտի» անվամբ: Իմմենդորֆի ցուցահանդեսները բազմիցս են բացվել Չինաստանում:

«Ուզում էի նկարիչ լինել: Երազում էի, որ թերթերը գրեին իմ մասին, որ շատ ցուցահանդեսներ ունենայի ու բնականաբար ուզում էի արվեստում մի «նոր» բան անել: Ինձ առաջ մղողը էգոիզմն էր», 1972-ին մի նկարի վրա գրել էր Իմմենդորֆը: Բոլոր ցանկություններն իրականացրեց: Կյանքի մայրամուտին բոլորը չէ, որ նույնը կարող են փաստել:

Գերմանիա

Սահմանադրական փոփոխությունների հարցում Էրդողանի կուսակցությունը հասավ նպատակին

Աբդուլլահ Գյուլին վերստին նախագահ առաջադրելու համար նա այլեւս բանակի բարեհաճության կարիքը չունի

Չնայած Սահմանադրական դատարանի որոշմանը, թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի հուշագրին, այդ ուժերի խոսափող ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության հակազդեցությանը, լիազորությունների ժամկետն ավարտված նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի սպառնալիքներին, Բարձրագույն ուսումնական խորհրդի միջամտությանը, ինչպես նաեւ ֆեմալական մտածողության միությունների գլխավոր նախագահ, գեներալ Էրույգուրի Անկարայում, Ստամբուլում, Իզմիրում եւ Սամսունում կազմակերպած միլիոնավորների ցույցերին, վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը եթե ոչ նախագահական ընտրությունների, ապա երկրի նախագահին համաժողովրդական քվեարկությամբ ընտրելու հարցում հասավ նպատակին:

Ինչպես հայտնի է «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը նախագահի պաշտոնում առաջադրել էր արտգործնախարար Աբդուլլահ Գյուլին: Թեեւ Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի ապրիլի 27-ի նիստում Գյուլն ստացել էր 357 ձայն, որը կազմում է ընդհանուր ձայների 64,9 տոկոսը, իսկ Սուլեյման Դեմիրելը նախագահ էր ընտրվել ձայների 54, Թուրգութ Օզալը՝ 57, Սեզերը՝ 60 տոկոսով, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանն ընդառաջեց Ժողովրդա-հանրապետական կուսակցության դիմումը: Այսպիսով, քվորումի բացակայության պատճառով չեղյալ հայտարարվեցին քվեարկության արդյունքները:

«Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը դրան հակադրել էր սահմանադրական փոփոխությունների փաթեթը, որը ներառում է նաեւ երկրի նախագահի համաժողովրդական քվեարկությամբ 5 տարվա համար կառավարման երկու ժամկետով ընտրությունը: Այն ուժերը, որոնք հակադրվել էին նախագահի պաշտոնում Գյուլի առաջադրմանը, սկսեցին համառորեն հակադրվել նաեւ սահմանադրական փոփոխությունների փաթեթին, թե Թուրքիայում գործում է խորհրդարանական համակարգ, ուստի ժողովուրդը երկրի նախագահ ընտրելու իրավունքը վերադարձել է Մեջլիսին:

Ավելին, Սեզերը ոչ միայն Թուրքիայի աշխարհիկ հանրապետական կարգերի համար վտանգավոր համարեց հաջորդ նախագահի համաժողովրդական քվեարկությամբ ընտրվելը, այլեւ վետոյի ենթարկեց Մեջլիսում մինչ այդ ընդունված փաթեթը: Նա դրանով մեկ անգամ եւ ընդարկելու համար փաթեթը վերադարձրեց Մեջլիս: Այսպիսով, փոփոխությունների փաթեթի ընդունման գործընթացը վերադարձավ ելման կետ:

Վերստին ընդարկումը տվյալ դեպքում ենթադրում էր քվեարկության երկու փուլ, որպեսզի բավարար ձայներ ապահովելու դեպքում, համաձայն գործող սահմանադրության, նախագահ Սեզերը զրկվի փոփոխությունների փաթեթին առարկելու իրավունքից: Մայիսի 28-ին քվեարկության առաջին փուլում Մեջլիսի նիստին մասնակից 368 պատգամավորներից 363-ը քվեարկեց սահմանադրական փոփոխությունների օգտին:

Վճռորոշ երկրորդ փուլը կայացավ Մեջլիսի մայիսի 31-ի նիստում: Պատգամավորները ձայների 370 կողմ, 21 դեմ հարաբերակցությամբ ընդունեցին փոփոխությունների փաթեթը: Ահմեդ Նեջդեթ Սեզերին մնում է երկրի նախագահին համաժողովրդական քվեարկությամբ ընտրելու հարցը դնել հանրաքվեի կամ էլ հաստատել սահմանադրական փոփոխությունների մասին Մեջլիսի ընդունած որոշումը:

Բոլոր դեպքերում էլ հուլիսի 22-ին Թուրքիայում խորհրդարանական վաղաժամկետ ընտրությունների հետ կկատարվի նախագահի ընտրությունը: Ամենեւին չի բացառվում, որ առաջիկա ընտրություններում հաղթանակի գլխավոր հավակնորդ վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը վերստին նախագահի թեկնածու առաջադրի Աբդուլլահ Գյուլին:

Մինչդեռ ապրիլի 27-ի հուշագրի բնույթ կրող հայտարարությամբ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը ազդարարել էր, որ Գյուլին կամ «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության որեւէ այլ գործչին չի ցանկանում տեսնել Չանքայայի պալատում եւ առանց բանակի հավանության ոչ ոքի տրված չէ դառնալ Թուրքիայի նախագահ:

ՀԱՅՈՐ ՉԱՔԲԵՏ

Ռայսը Մոսկվա եկավ նոր «սառը պատերազմը» կանխելու

ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը երեկ երկօրյա այցով Մոսկվա է ժամանել ռուս-ամերիկյան հարաբերություններում վերջերս նկատվող լարվածությունը մեղմելու եւ հնարավոր «սառը պատերազմը» կանխելու նպատակով:

Երկկողմ հարաբերությունները վերջերս վատացել են Կոսովոյի անկախության խնդրի հետ կապված տարաձայնությունների եւ Արեւելյան Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի տեղաբաշխման պատճառով: Ռայսի երկօրյա այցի շրջանակներում նախատեսված են հանդիպումներ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի, արտգործնախարար Սերգեյ Լավրովի, պաշտոնական այլ անձանց հետ:

Փետրվարին Մյունխենում ՌԴ նախագահը խստիվ քննադատել էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը: Այն ժամանակ ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը հայտարարել էր, թե Պուտինի ելույթը հիշեցնում է «սառը պատերազմի» ժամանակները:

ՌԴ իշխանություններն այժմ ասում են, որ պատրաստ են Ռայսի հետ «հանդարտ ու դրական» բանակցությունների: Ոչթեր գործակալությունն արձանագրում է, որ նման բանակցությունները կարող են արմատապես բարելավել երկկողմ հարաբերությունները:

Մոսկվան ընդգծում է, որ մտադիր չէ ենթարկվել ամերիկյան կողմի թելադրանքին: ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Կամինինի խոսքերով, Ռուսաստանին պետք են «ոչ թե հրահանգներ, այլ համատեղ աշխատանք եւ լուծումների համատեղ որոնում»:

Ռայսի տեղակալ Դենիել Ֆրիդն իր հերթին հայտարարել է, որ վերջերս ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում եղել են «խիստ տրավորիչ տարաձայնություններ»:

Դրանցից գլխավորները կապված են Կոսովոյի անկախության խնդրի եւ ամերիկյան հակահրթիռային համակարգի տեղաբաշխման հետ: Արդարեւ Պետերբուրգի վերին պալատին հղած դիմումի մեջ Պուտինն սպառնաց Ռուսաստանը դուրս բերել Եվրոպայի սովորական սպառազինությունների պայմանագրից: Մեկնաբաններից շատերը դա գնահատեցին որպես Մոսկվայի պատասխան Վաշինգտոնի ծրագրերին:

Ինչ վերաբերում է Սերբիայի նահանգ Կոսովոյին փաստական անկախություն տալու ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւի նախագծին, ՄԱԿ-ում ՌԴ ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը շաբաթ օրը չբացառեց Մոսկվայի վետոյի հնարավորությունը:

Ամերիկացիներն իրենց հերթին դժգոհ են Ռուսաստանում խոսքի ազատության եւ ժողովրդավարական կառույցների վիճակից, ինչպես նաեւ ԱՊՀ արեւմտյան որոշ հանրապետությունների նկատմամբ Մոսկվայի վերաբերմունքից:

Միխայիլ Կամինինը BBC-ին տված հարցազրույցում կարծիք է հայտնել, թե հիշյալ տարաձայնություններն այնուամենայնիվ հաղթահարելի են: «Մենք ռուս-ամերիկյան հարաբերությունների ներկա փուլը դրամատիկ չենք համարում: Տարակարծությունը բնականոն երեւույթ է: Կարեւոր է, որ երկու կողմերը նկատի ունենան, թե աշխարհում որքան շատ բան է կախված մեր երկրների հարաբերություններից», ընդգծել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը:

Պ. Ք.

Բաղդադում սպանվել է Ասոշիեյթեդ Պրեսի օպերատորը

Բաղդադում հինգշաբթի օրը սպանվել է Ասոշիեյթեդ Պրես գործակալության լրատվական հեռուստաալիքի օպերատոր Սեիֆ Ֆահրին: 26-ամյա օպերատորին գնդակահարել են նրա հանգստյան օրը, երբ նա տնից գնում էր մոտակա մզկիթ:

Ֆահրին աշխատում էր նաեւ որպես Դուբայի հեռուստատեսության, CNBC եւ «Ալ Մաջ» հեռուստաալիքների օպերատոր: Այս ամիս նա պետք է հայր դառնար: Ֆահրին Իրաքի պատերազմի ընթացքում զոհված Ասոշիեյթեդ Պրեսի արդեն հինգերորդ աշխատակիցն է:

Ավելի վաղ՝ չորեքշաբթի օրը, Իրաքի Ամարա քաղաքում զոհվել էր «Ազատություն» ռադիոկայանի տեղական բաժանմունքի թղթակից Աբդուլռահիդ ար Ռադիին:

Սարկոզին առաջարկում է ստեղծել Միջերկրածովյան միություն

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին «Պոլիտիկ էնտերնասիոնալ» հանդեսին տված հարցազրույցում արտահայտվել է Միջերկրածովյան պետությունների միության ստեղծման օգտին:

Նրա կարծիքով, Միջերկրածովյան միությունը կկարողանա սերտորեն գործակցել Եվրոմիության հետ եւ ապագայում նույնիսկ հիմնել ընդհանուր կառույցներ: Հնարավոր է, որ նոր միավորումը Եվրոպայի խորհրդի նմանությամբ ունենա վերազգային քաղաքական մարմին՝ Միջերկրածովի խորհուրդ:

Միջերկրածովյան միության գլխավոր խնդիրները պետք է դառնան ներգաղթի ընդհանուր քաղաքականության մշակումը, տնտեսության եւ առեւտրի զարգացումը, իրավական պետությունների ստեղծումը, շրջակա միջավայրի պահպանությունը:

Համատեղ տնտեսական զարգացմանը կարող է նպաստել Միջերկրածովյան ներդրումային բանկի ստեղծումը:

Միջերկրածովյան միության գոյությունը նաեւ այլընտրանք կլինի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը: Ինչպես հայտնի է, Սարկոզին դեմ է այդ անդամակցությանը, քանի որ Թուրքիան «ասիական երկիր է»:

Ժնեւի «Լը Տան» թերթի տեղեկությունների համաձայն, Սարկոզին մտադիր է տվյալ հարցի վերաբերյալ կոնկրետ առաջարկություններով հանդես գալ 2007 թ. հունիսի 21-22-ը Բրյուսելում կայանալիք ԵՄ գագաթաժողովում:

ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւը պառակտել է լիբանանցիներին

Բանակի եւ արմատականների բախումները վերսկսվեցին

Երեկ առավոտյան վերսկսվեցին Լիբանանի բանակի եւ «Իսլամական Ֆաթհ» պաղեստինյան ծայրահեղական խմբավորման կազմի բախումները: Այդ խմբավորման գրոհայինների հենակետերը պաղեստինցի գաղթականների «Նահր էլ Բարեդ» ճամբարն է, որն արդեն 13 օր բանակի շրջապատման մեջ է: Մինչեւ ուշ գիշեր կազմի փոխհրաձգությունը շարունակվեց: Ոմանց կարծիքով, դա բանակի վճռական հարվածին նախորդող ճակատի «մշակումն» է:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ չորեքշաբթի օրը «Իսլամական Ֆաթհ» խմբավորմանն է միացել «Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատ» շարժումը, էլ ավելի սրելով Լիբանանում վերջերս ստեղծված բարդ իրադրությունը:

Իսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հինգշաբթի օրը թիվ 1757 բանաձեւն ընդունեց Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործը քննող միջազգային դատական ատյան հիմնելու մասին: «Ազգի» երեկվա համարում նշվում է, որ բանաձեւի ընդունումը միանշանակ չի ընդունվել: Սիրիան հայտարարել է, որ չի համագործակցի տվյալ ատյանի հետ: Լիբանանում եւս բնակչությունը կիսված է երկու մասի. կան բանաձեւը ողջունողներ եւ կան ընդդիմախոսներ:

2005 թ. փետրվարի 14-ին Բեյրութում հուժկու պայթյունից Հարիրիի եւ 21 այլ անձանց զոհվելուց հետո մեղադրանքների թիրախ էին դարձել Սիրիայի հատուկ ծառայությունները: Ժողովրդական հուզումների ալիքը եւ միջազգային ճնշումները Սիրիային ստիպել էին իր զինծառայողներին դուրս բերել Լիբանանից:

Լիբանանում ներկայումս կառավարող կոալիցիայի առաջնորդ Սաադ Հարիրին՝ Ռաֆիկ Հարիրիի որդին, բանաձեւի ընդունումը համարում է «ճնշված Լիբանանի հաղթանակ»:

Վարչապետ Ֆուաադ Սինիորան եւս ողջունել է ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւի ընդունումը: Նա միաժամանակ ընդգծել է, որ հունիսի 10-ին ուժի մեջ մտնող փաստաթուղթը «ուղղված չէ որեւէ մեկի եւ մասնավորապես եղբայրական Սիրիայի դեմ»:

Սիրիան բանաձեւը համարում է Արեւմուտքի միջամտություն Լիբանանի ներքին գործերին եւ «վրեժխնդրության գործիք»: Սիրիական մամուլը ընդունված փաստաթուղթն անվանում է «իսրայելա-ամերիկյան բանաձեւ»:

Դեռ բանաձեւի ընդունումից առաջ Լիբանանի սիրիամետ ուժերը ի դեմս նախագահ Էմիլ Լահուդի, շիաների ազդեցիկ «Հզբոլլահ» խմբավորման եւ ԱԺ նախագահ Նաբիհ Բերրիի երկրում ճգնաժամի պատճառ էին դարձել, ընդդիմանալով միջազգային դատական ատյանի ստեղծմանը եւ ձգտելով Սինիորայի կառավարության անկմանը:

Լիբանանցիներից շատերը վախենում են, որ ներկա իրավիճակում բռնարարքները եւ քաղաքական սպանությունները կարող են վերսկսվել:

Սուդանն պատրաստում է ԱՄՆ-ին զրկել Coca-Cola-յից

Վաշինգտոնում Սուդանի դեսպան Ջոն Ուկես Լուեսն Ուկեսը սպառնացել է ԱՄՆ-ին եւ մնացյալ աշխարհին զրկել կոկա-կոլայի եւ այլ ըմպելիքների բաղադրության մեջ մտնող բուսական խեժից՝ գումմիարաբիկից: Այդ մասին հաղորդում է «Վաշինգտոն փոստ» թերթը:

Մամլո ասուլիսում դեսպանը լրագրողներին հիշեցրել է, որ գումմիարաբիկի համաշխարհային արտադրության 80 տոկոսն ընկնում է Սուդանին: «Ես կարող եմ ձեզ գումմիարաբիկ չտալ, եւ դուք կզրկվեք կոկա-կոլայից», ասել է սուդանցի դիվանագետը:

Դեսպանի հայտարարությունն արվել է Սուդանի նկատմամբ մայիսի 29-ին ԱՄՆ-ի ձեռնարկած պատժամիջոցներին ի պատասխան: Պատժամիջոցները վերաբերում են սուդանցի որոշ ղեկավարների, ինչպես նաեւ սուդանական մի շարք ընկերությունների:

ԱՄՆ-ը Սուդանի իշխանություններից պահանջում է միջոցներ ձեռնարկել Դարֆուրի նահանգում ազգամիջյան հակամարտությանը վերջ դնելու համար: Դարֆուրում կառավարական զորքերը եւ սուդանամետ արաբական զինված կազմավորումները կռվում են տեղացի աֆրամբների դեմ:

Պ. Ք.

Լուսինե՞

Մեծն Կոմիտասի, հայ հոգեւոր երգերի ու տաղերի անզուգական կատարող Լուսինե Զաքարյանը հունիսի 1-ին կդառնար 70 տարեկան, եթե չառագույժ մահը 15 տարի առաջ չխլեր նրա կյանքը: Ազգային գրադարանի անձնակազմը երաժշտության բաժնի նախաձեռնությամբ երեկ առավոտյան այցելեց Էջմիածին, Սբ. Գայանե եկեղեցի, որի բակում իր վերջին հանգրվանն է գտել Լուսինե Զաքարյանի աճյունը: Տեր Գրիգոր ավագ քահանա Տերտերյանի ձեռամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ սիրված երգչուհու հիշատակին՝ ծննդյան 70-ամյակի առիթով: Լուսինե Զաքարյանի վաստակը բարձր է գնահատվել սերունդների կողմից: Նա այն բացառիկ երգչուհիներից էր, որի անսուտ ձայնը եւ բեմական բարձր կատարողական արվեստը մատչելի է հասարակության բոլոր խավերին: Մի առիթով Վազգեն Ա կաթողիկոսի մայրը Լուսինե Զաքարյանին բնորոշել է այսպես. «Երբ Լուսինեն երգում է «Սուրբ-սուրբը», ամբողջ հրեշտակները բազմությամբ իջնում են Մայր աթոռ ու փառաբանում Աստծուն իր այդ երգեցողության ու նրան ի վերուստ տրված շնորհի համար»:

«Հայ եկեղեցու սոխակ», անմոռանալի Լուսինե Զաքարյանի հիշատակը ներկաները հավերժացրին լռակյաց: Քիչ անց սոիսակ մարմարյա տապանաքարը ծածկվեց սոիսակ մեխակներով ու ներկաները խնկարկեցին անկրկնելի երգչուհու հիշատակը:

Կեսօրին ազգային գրադարանի միջնասրահում, ուր մի քանի ցուցափեղկերում ցուցադրված էին մեծանուն երգչուհու կյանքին վերաբերող մեկ տասնյակ ցուցանմուշներ, հոդվածներ, էլեկտրոնային սկավառակներ, նոտային գրականություն, սկսվեց հուշ-ցերեկույթը: Խղճուկ-տնավարի կազմակերպված ցերեկույթի ընթացքում Լուսինեի մասին հուշեր ու հանդիպումներից դրվագներ պատմեցին գրադարանի երաժշտության բաժնի պատասխանատու Ա. Հայրապետյանը, գրող Հ. Մաթևոսյանը, Դանիել Երաժիշտը, դոցենտ Մ. Նավոյանը եւ ուրիշներ: Ելույթ ունեցողները մեկ անգամ եւս շեշտեցին Լուսինե Զաքարյանի կատարողական փայլուն արվեստի մասին, որով նա ժողովրդականացրեց հայ հոգեւոր երգը: Պարույր Սեւակը ահա այսպես է բնորոշել երգչուհուն. «Լուսինեն հայ երգարվեստի մեջ նույն դերն ունի, ինչ ճարտարապետության մեջ՝ Թորոս Թորամանյանը»: Պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը Լուսինեին այսպես բնորոշեց. «Անզուգական երգչուհի, հոգեւորի փայլուն զգացողությամբ, որը գերել ու «գրավել» է ոչ միայն հայ, այլեւ այլազգիների սրտերն ու փառոով ներկայացրել Կոմիտասի, հայ ժողովրդական երգերը, տաղերը եւ շարականները»:

Ցավալի է, որ մեր կառավարությունը առայժմ չի անդրադարձել ամենասիրված ու հարգված երգչուհու հոբելյանին:

Նյութը եւ լուսանկարը՝
ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆԻ

Հայազգի սոպրանոն փայլում է «Անանա Ֆրանկում»

«Լոս Անջելես թայմսից» արտատպելով լուրը, «Արմինյն միրոր սփեֆթյեր» թերթը մայիսի 5-ի համարում տեղեկացնում է, որ Ուեսվոտի «Սինայ տաճարի հանգստավետ եւ մտերմիկ» գառաժում Լոնգ Բիչի օպերան ներկայացրել է ռուս երգահան Գրիգորի Ֆրիդի «Աննա Ֆրանկ» օպերան, որտեղ գլխավոր մենակատարի դերում հանդես է եկել 24-ամյա հայազգի սոպրանո Անի Մալճյանը:

«Չգիտեմ սոպրանոներին քանի անգամ է վիճարկվել լուսարձակի պայծառ լույսի ներքո երգել եւ արտահայտել խորը ցավ ու թախիծ, բայց երբ Մալճյանն էր եզրափակում նագիստների շրջափակման էպիզոդը՝ այդ թախիծն ու ցավն այնքան արտահայտիչ էին, որ գառաժում հայտնվածների արյան հավանական ճնշումը պետք է որ վտանգավոր աստիճանի բարձրացած լիներ», գրում է հոդվածագիր Մարկ Սուեդը, որի գառաժում հայտնվելու առաջին տպավորությունն անմիջապես փարատվել է «զարմանալիորեն գեղազանց ակուստիկայի եւ մտերմիկ մթնոլորտի առկայության» հետեւանքով:

Անի Մալճյանը հանդես է գալիս Սեաթլի եւ Սան Ֆրանցիսկոյի օպերաների երիտասարդ արվեստագետների ծրագրերում: Ըստ հոդվածագրի բեմադրության գլխավոր տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Անդրեա Միտիսեկը ճիշտ ընտրություն է կատարել Մալճյանին վստահելով մենակատարի դերը: Բեմադրության դրամատիկական երանգը առավել շեշտելու համար «Միտիսեկը հրավիրել է նաեւ Հոլոքոսթը վերապրած բանաստեղծուհի Լորա Հիլմանին, որը մերթընդմերթ ընթերցել է հատվածներ իր բանաստեղծություններից»:

Հ. Օ.

Լուվրում ներկայացված 200-ից ավելի ցուցանմուշներ մինչեւ հունիսի 20-ը կվերադառնան Հայաստան

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայր աթոռ Սբ.Էջմիածնի գանձարանի, Հայաստանի պատմության թանգարանի եւ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տրամադրած 200-ից ավելի բացառիկ ու խորհրդանշական ցուցանմուշները Լուվրի թանգարանում «Սուրբ Հայաստան» խորագիրը կրող ցուցահանդեսում ներկայացվելուց հետո մինչեւ հունիսի 20-ը կվերադարձվեն Հայաստան: 4-18-րդ դարերը ներկայացնող վեց բաժնից բաղկացած ցուցադրությունը Լուվրում գործել է փետրվարի 17-ից մինչեւ մայիսի 15-ը:

Ինչպես հունիսի 1-ին հայտնեց ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Հասմիկ Պողոսյանը, ցուցանմուշների մեծ մասն արդեն ապամոնտաժվել է եւ հուլիսի 19-ին դրանք ինքնաթիռով կբերվեն Հայաստան: Նախարարի խոսքերով, Լուվրի թանգարանի տնօրինության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որպեսզի Հայաստան վերադառնալուց հետո այդ ցուցանմուշները օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներին ցուցադրվեն նաեւ Հայաստանի պատմության թանգարանում: Ըստ Հ. Պողոսյանի, ցուցահանդեսը կունենա նույն տեսքը, ինչպիսին եղել է Լուվրում:

Մերիալների սերիա՞լ, «Կրեոս կանա՞յք»...
Ի վերջո՝ ի՞նչ է ձեր ուզածը

Հենց էն գլխից ասեմ, որ չգիտեմ, թե ինչ է կոնկրետ ձեր ուզածը, բայց որ հաջողել եք իսկա մի լսարանի սերիալախտով վարակել, ջմեցնել ու գամել հեռուստէկրանին, փաստ է: Ինչպե՞ս են մարդիկ (ախր, նաեւ խելքը գլխին մարդիկ) գամվում էկրանին, ի՞նչ ադրումներով, ինչպե՞ս են փորձում գուշակել յուրաքանչյուր հաջորդ կադրի... «անկանխատեսելի» բովանդակությունը, ինչպիսի՞ ենթադրություններ, քաջալերանքի, անեծք-օրհնանքի ի՞նչ հեղեղ... Թե հյուր ես (անգամ՝ սպասված հյուր) նման՝ սերիալադաշտ մի ընտանիքում, հավատա, որ գոյությունը չեն զգա այնքան ժամանակ, քանի դեռ անվերջ՝ մեկը մյուսի ամուսնուն կամ կնոջը սիրահետող հերոսները էկրանին են...

Եվ՝ իբր եղածը քիչ է, հիմա էլ գալիս է սերիալների սերիալը՝ հավաստիացումով, որ օրվա մեկ ժամը դառնալու է ամենաբովանդակալիցը: Բա գովազդողի ձայնի պաթոսը, արտաբերումի էներգիան...

Վա՛յ, ձեր տունը չքանդվի, ինչ եք ուզում էս մոլորված ժողովրդից: Թե՞ վաղուց արդեն դրա չեք ուզում, նրանք են սերիալ փափագում...

Ի վերուստ՝ միամիտ մի հարց՝ ձեր գործը, գործի ձեր շահը շա՞տ կտուժեն, եթե մի «սերիալ»-հաղորդաշար սկսեք, ասենք, ձեր կաղամբն ու կարտոֆիլը արտադրող կանանց մասին... Թե նրանք արեւից շատ են սեւացած... Թե էկրանը միայն կրեոսներինն է...

Դուք գիտե՞ք, որ հենց ձեր շլինքին են ծանրանալու ազգային նկարագրի բարոյականության կոդի թվերը խառնելու ձեր ադազգային, արեւմտակամ, սատանայահաճ ճիգերը...

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գորիս

ՕՐ ՀՐՇԱՏԱԿԱՑ

«Կնոջ արվեստը որպես գեղեցկության չափանիշ եւ այդ իսկ պատճառով նաեւ ինչ-որ բան չանելու ակտ»

Բանաստեղծուհի Սոնա Վանի թվով երրորդ, «Ես ձայն եմ լսում» վերնագրված գիրքն է ընթերցողի սեղանին: Երեկ մտավորական շրջանակների բազմաթիվ երեւելի, նաեւ ոչ այնքան երեւելի ներկայացուցիչներ էին հավաքվել գրքի շնորհանդեսին՝ շնորհավորելու եւ ծաղիկներ նվիրելու բանաստեղծուհուն: Հիրավի ամեն գրքի լույսընծայում նման է մանկան աշխարհ գալուն: Թերեւս նաեւ այս հուզումով էր բանաստեղծուհին պատասխանում լրագրողներիս հարցերին եւ փորձում ավելի բացել փակագծերը, քան դա արել էր իր գրքում:

«Համարձակություն եւ ավելի անկեղծ, առանց կոմպլեքսների հաղորդակցվելու հնարավորություն, մայրության ֆենոմենի բացահայտում», այսպես բնութագրեց իր պոեզիան բանաստեղծուհին կանանց հեղինակած պոեզիայի մեջ իր արվեստի դերի մասին խոսելով: «Իմ ժողովածուում իմ խոհերն են, «Ազգի» հետ առանձնազրույցում ասաց օրվա հերոսուհին: Ու եթե ինչ-որ բան էլ թարգրել եմ, ապա գեղագիտական չափը պահպանելու համար: Յուրաքանչյուր արվեստ ինքնին արդեն ինչ-որ բան զսպելու, չափի մեջ դնելու ակտ է, հետեւաբար հնարավոր չէ բանաստեղծություն արարել առանց ձեւի գեղագիտական կողմի մասին մտածելու», ասաց նա:



Իսկ նրա նորահայտ գրքում, բանաստեղծություններից բացի կարդում ենք նաեւ մի քանի հարցազրույցներ, որոնցից մեկում հանդիպում են այսպիսի տողեր. «Գեղեցկությունը, իրոք, պոեզիայի միակ օրինական պարտականությունն է: Խոսքը միայն էսթետիկական, արտաքին գեղեցկության մասին չէ: Գեղեցկություն, որը ոչ թե մտքի ու հոգի ծնունդ է, այլ... հոգու»:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄՏԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ

Ոտնահարվող արքություն

Հայ երաժշտության դասական Ալեքսանդր Սպենդիարյանի անունը կրող օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը, որ նախագծել է մի ուրիշ մեծ Ալեքսանդր՝ ճարտարապետ Թամանյանը, դեռ հեռվից է ձգում մեզ: Թվում է, ուր-որ է, շուրջբոլորը տարածվելու են «Ալմաստի» հնչյունները, եւ մարդկանց հոգիները լցվելու են հերոսահայրենասիրական, ճնարական, դրամատիկ մեղեդիներով: Իսկ շենքի մոտակայքում նշանավոր կոմպոզիտորի արբազան շիրիմն է՝ «Ալեքսանդր Սպենդիարյան. 1871-1928»: Ընդամենը երկու տարեթիվ, բայց այս երկու թվերի միջեւ եղած գիծը դառնում է նրա կյանքի մի յուրօրինակ հանրագիտարան, որը կարող է «հատորներ» ընդգրկել...

Ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանն էր, երբ 1924 թ. վերադարձավ Հայաստան՝ իր աստվածային շնորհը հայրենիքին ծառայեցնելու: Նա, որ երկար տարիներ իր կոմպոզիտորական, երաժշտական, դիրիժորական գործունեությունն էր ծավալում Ղրիմում ու Մոսկվայում, իր առջեւ խոնարհեցնում դահլիճները, վերադարձավ իր լուման ներդնելու հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի, նրա գեղագիտական սկզբունքների, ոճերի ձեւավորման գործում: Եկավ, որ մնար...

Այսպես կլիներ միշտ, եթե... Եթե սրճարանախեղդ եղած տարածությունից հնչող միալար, նյարդեր սղոցող տարաբնույթ «մեղեդիները» չփշրեին ոգեղենիկ մթնոլորտը: Իսկ արգելոցի դեր կատարող տգեղ ագրեգատները ոչնչով չեն տարբերվում նույն այդ սրճարանները շրջապատող ցանկապատներից: Հարկավոր է շատ մոտենալ, որպեսզի տեսնես, որ այնտեղ շիրիմ կա. այն էլ ինչպիսի՞ շիրիմ: Մոտենում ենք. ի՞նչ գործ ունես այստեղ, շնի՛կ... Իսկ թղթե՞ր ովքեր են նետել... Սարսափելի տխրություն է իջնում ճշմարիտ արվեստագետին գնահատողի հոգում եւ մի պահ մտածում ես. մի՞թե նման վերաբերմունքի արժանանալու համար նա վերադարձավ: Չէ՛, պիտի գար՝ առանց դույզն-ինչ կասկածելու, որ իր ժողովրդի զավակները սկսելու են հեռանալ դասական արվեստից, եւ իր շիրիմը մատնվելու է անտարբերության... Բայց ավելի լավ է մեր չորոտանի բարեկամները իրենց անարատ դնչիկներով հոտվեն ու ճնեն, քան թե հերթական սրճարանը անգղի պես կուլ տա այդ թանկ մասունքը:

Ուրեմն, խոնարհվենք նաեւ այս մեծության առջեւ եւ ժամ առաջ կանխենք մեր իսկ մեղավորությամբ ձեւավորվող լկտիությունը եւ բռնենք հանցագործի ձեռքը (չնայած սա միակ դեպքը չէ): Ավելի լավ է մենք չներենք, քան՝ շիրիմները:

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԾԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ

«Ինչից դուրս իսկական Queen եմ»

Մայիսի 25-ին Քյոլնում Ֆրանսիան ներկայացնող ծագումով ալժիրցի 29-ամյա Նադյա Հոմմիի մասին WBA վարկածով բոնցֆամարտի թեթևաքայլինների աշխարհի՝ Գերմանիան ներկայացնող 19-ամյա չեմպիոնուհի Սյուզի Քենտիկյանը մրցելույթից առաջ այսպես էր ասում. «Հոմմին կարող է շատ վտանգավոր լինել: Ուզում եմ ամենալավերի հետ մրցել, որ ցույց տամ, որ ես ավելի՛ լավն եմ: Նա ուժեղ մարզիկ է: Բայց ես գոտին չեմ տա, ուզում եմ աշխարհի բացարձակ չեմպիոն լինել»:

Պրոֆեսիոնալ ռինգում 17 մրցամարտից 17-ը հաղթանակով (13-ը տեխնիկական նոկաուտով) ոչսկած չեմպիոնուհին իր խոսքի տերը եղավ՝ 10 ռաունդանոց մրցաոայքարն ավարտվեց Սյուզիի վաստակած միավորների առավելությամբ՝ 97:93, 98 :92, 93: 97:

Նադյա Հոմմին, արդարեւ, ոչ միայն երկար հասակ ու երկար ձեռքեր ուներ, այլեւ 6-րդ ռաունդում ամրացրեց իր երկրպագուների հույսն ու հավատը, ֆրանսարաբերեն բացականչությունները թնդացրին արենան: Սա իհարկե տիրապետող չեղավ: Pro 7-ի մեկնաբանի իրազեկմամբ, մնացած բոլոր ռաունդներում Սյուզիի առավելությունն էր ընդգծվում՝ «19-ամյա Քենտիկյանը շատ մեծ տաղանդ ունի, լավ ռեֆլեքսներ, արագ արձագանք, պատրաստվելով առաջ է գնում ու հասնում նպատակին»:

«Շնորհակալություն Հոմմիին. նա ինձ ցույց տվեց, որ ավելի շատ պիտի աշխատեմ: Զարգացնելու տեղ դեռ շատ ունեմ», մրցամարտի ավարտին մի փոքր տխուր երանգով հեռուստադիտողներին դիմեց չեմպիոնության գոտին երկրորդ անգամ պաշտպանած Սյուզի Քենտիկյանը:

Մրցաոայքարից 4 օր անց էլ մեր հեռախոսազրույցում նրա ձայնը մեզ ծանոթ առույգ երանգը չուներ. «Կարող էի ավելի լավ հանդես գալ: Պիտի պարապեմ ու 2-3 ամսից նոր մրցաշրջանում ասածս ապացուցեմ»: Ինչ վերաբերում է վերջին՝ 93:97 արդյունքին, ինքն էլ բացատրություն չունի՝ «շատերն են զարմացած, տեսնես ինչ ակնոցով են գնահատել»:

Համբուրգում բնակվող մեր հայրենակցուհու մրցելույթներին **«Ազգի»** էջերում անդադար ենք հետևել: Խոստացել էինք առավել մանրակրկիտ ծանոթություն պրոֆեսիոնալ ռինգի ամենափորձառու գերմանական մամուլի գնահատականով «ամենաթարմ» տիրուհու հետ: Մեր անկեղծ զրույցը՝ սեղրեւ:

- 11 տարի է ապրում եմ Համբուրգում: Հայաստանի դժվար տարիներին եկանք Գերմանիա, լեզու չգիտեինք, մտածեցինք Ռուսաստանում ավելի հեշտ կլինի, գնացինք, բայց երկու տարի ապրելուց հետո նորից Գերմանիա եկանք Համբուրգ: Ես 6 տարեկան էի, Հայաստանը լավ չեմ հիշում: Հիմա, երբ լուսանկարներ եմ տեսնում, ուզում եմ գնալ, տեսնել: Գերմանացիներն էլ, ովքեր եղել են Հայաստանում, ասում են՝ շատ սիրուն երկիր է: Հաջորդ մրցելույթից հետո երեւի Հայաստան կգնամ:

Մեր Քենտիկյան ազգանունը Հայաստանում միակն է: Հայրս՝ Լետն Քենտիկյանը 48 տարեկան է, մայրս՝ Մարուտի Քենտիկյանը՝ 44, եղբայրս՝ Միխայելը՝ 23: Ունենք մի շուն: Բոլորս միասին ենք ապրում: Հայրս ու եղբայրս աշխատում են, Միխայելն իմ ինտերնետային նամակագրության պատասխանատուն է:

- Հայաստան վերադառնալու, այնտեղ ապրելու ցանկություն ունե՞ս:

- Գերմանիային սովորել եմ: Հայերեն լավ գրել, կարդալ չեմ կարող: Բայց մի մեծ կարոտ կա Հայաստանի հանդեպ: Եթե այնտեղ լինեի, աշխարհի չեմպիոն, կարծում եմ, չէի լինի՝ ինձ չէին կարող ֆինանսավորել:

- Ընտանիքդ ինչպե՞ս ընդունեց այն փաստը, որ դու բոնցֆամարտն ընտրեցիր:

- Հայրս դեմ էր՝ բոնցֆամարտն աղջկա սպորտ չէ: Սկսեցի համոզել՝ մի քիչ պարապեմ, հետո կտեսնենք: Մարզիչս շատ գոհ էր, հորս ասաց՝ լավ արդյունքի կհասնի: Հայրս համոզվեց: 7 տարի առաջ՝ առաջին մրցելույթիցս հետո ասաց՝ եթե սիրում ես, գնա, պարապիր: Բայց եթե պարտվես, բոնցֆամարտը թողնելու ես: Հայրս միշտ ինձ հետ է, եղբայրս գալիս է իմ մրցելույթները դիտելու, մորս սիրտը չի տանում՝ երբեմն հեռուստացույցով էլ չի կարողանում հետեւել:

Փոքր ժամանակ շատ չար էի, հանգիստ չէի կարողանում նստել: Ծնողներիս շատերն էին բողոքում՝ «Ձեր աղջիկը մեր տղային ծեծել է»: Ինձ մարմնամարզության տվեցին՝ բան դուրս չեկավ: Եղբայրս բոնցֆամարտի գնաց: Հետո ես էլ սկսեցի, շատ դուր եկավ: Ու երբ արդյունքներն էլ գոհացնող էին, էլ չկարողացա թողնել:

- Եթե նորից ընտրելու լինեիր, դարձյալ բոնցֆամա՞րտը կնգեր:

- Իհարկե: Բոնցֆամարտն ինձ համար ամեն ինչ է: Դպրոցում դեռասանություն, պարել, երգել փորձել եմ, ամենաշատը այս մարզաձեւը սիրեցի:

- Ո՞վ է քո մարզիչը:

- Ազգությամբ տաջիկ Մագոմեդ Շաբուտովը: Շատ լավ մարզիչ է, լավ փորձառություն ունի: Իրար հետ ուսերեն ենք խոսում:

- Չե՞ս վախենում պարտվել:

- Դրա մասին չեմ մտածում: Գիտեմ, որ շատ եմ պարապել, անհնարին է, որ պարտվեմ:

- Գերմանական դպրոցում ինչպե՞ս էիր սովորում:

- Ոչինչ: 2 տարի առաջ էլ ես իմ մեջ, ինձ համար աշխարհի չեմպիոն էի: Գիտեի, որ դառնալու եմ, ե՞րբ՝ դա չգիտեի: Պիտի պարզապես ուժերին ապացուցեի:

- Սյուզի, Գերմանիայում ապրեն հանրահայտ ես դարձել. հաճելի՞ զգացողություն է:

- Իհարկե: Գիտեի, որ մի բան դառնալու եմ՝ մեջս խայծ կար: Դեռ վարպետական իրավունք, ավտոմեքենա չունեմ, ոտքով եմ մեր գալիս, փողոցում բոլորը ճանաչում են: Շատերի համար օրինակ եմ դարձել՝ երկրպագուներիս նամակներից գիտեմ, ուրախ եմ դրա համար:

-Կուզենայի՞ր, որ Հայաստանում էլ աղջիկները բոնցֆամարտն ընտրեին:

-Հայաստանում շատ աղջիկներ կան, որ ուժ ունեն, որ կարող են դառնալ, բայց նրանց չեն ոգեւորում, հակառակն՝ ասում են՝ աղջկա սպորտ չէ: Հիմա ինձ տեսնելով, միգուցե ասեն՝ թե տաղանդ ունես, գնա, փորձիր:

- Տղաներն ինչ կարծիք ունեն:

- Երբ գերմանացի տղաները տեսնում են, որ ես իրենցից ավելի լավ մարզիկ եմ, ուժեղ եմ, հարգում են:

-Ոչ լավ, ոչ վատ: Մաքեմաթիկայից 3 էի ստանում: Եթե մարզիչս ասում է՝ 4 անգամ հարվածիր, այդքան հաշվել կարողանում եմ: (Ծիծաղում է):

- Գերմանական մամուլում հաճախ են շեշտում, որ «դժվար կյանքը» քեզ կոփել է:

- Եթե դժվարություններ ունեմ, ոչ մեկին ցույց չեմ տալիս՝ միշտ ուրախ եմ ու ծիծաղում եմ: Իսկ լրագրողներն իհարկե երբեմն չափազանցնում են՝ ասան եմ լվացել, ընտանիքիս եմ պահել եւ այլն... Հայրս ու եղբիս եմ պահել եւ այլն... Հայրս ու եղբայրս միշտ են աշխատել, իսկ ես 15 տարեկանում որոշեցի պարզապես հեռուստացույց դիտելու փոխարեն մարզիչս առաջարկն ընդունել՝ մեր մարզադահլիճի սարքերի փոշին էի մաքրում՝ մի քիչ գրպանի փող վաստակում:

- Ռինգում ի՞նչն է քեզ ամենաշատն օգնում:

- Կենտրոնացումը: Նաեւ այն, որ օրինակ, դահլիճը լիքն է, եւ անունս են վանկարկում: Երբ երկրպագուներս վանկարկում՝ «Սյուզի, հուպ տուր», օգնում են, ուժ են տալիս: Գիտես, որ քեզ համար են եկել: Ու հենց դրա համար ուզում եմ ավելի կենտրոնացած խաղ ցույց տալ:

- Օրական քանի՞ ժամ ես պարապում:

- 4: Առավոտյան 10-ին, երեկոյան՝ 5-ին: Կիրակի օրերին հանգստանում եմ՝ ուժերս վերականգնելու համար:

- Քեզ երես չե՞ն տալիս: Մայրիկդ առանձնահատուկ հոգատար չէ՞:

- Ասում է՝ լավ կեր: Միս, մակարոն շատ եմ ուտում, որ ուժ ունենամ: Բայց ամենաշատը մամայիս ու տատիկիս խաղողի թփով տոլման եմ սիրում:

- Հոբբի ունե՞ս:

- Սիրում եմ հիփ-հոփ, արնբի, եթե ժամանակ կա, սիրով կինո եմ գնում: Դպրոցում դաշնամուր, ֆլեյտա ու քիթ էի նվագում, հիմա նվագելու ժամանակ չունեմ: Շատ եմ սիրում առուտուր անել՝ նոր, մոդեռն հագուստներ գնել ինձ համար:

-Ի՞նչ երազանքներ ունես:

-Ամենամեծ երազանքս աշխարհի չեմպիոն դառնալն էր՝ եղավ: Բայց դեռ լիքը երազանքներ ունեմ՝ ուզում եմ իմ քաջային կարգի բոլոր գոտիները նվաճել: Բայց ամեն ինչ իր ժամանակն ունի՝ եթե բոլորը 19-20 տարեկանում ունենամ, հետո ինչ պիտի անեմ: Ուզում եմ նաեւ մի մեծ տուն, ավելի շուտ՝ պալաս ունենալ:

- Աշխարհի չեմպիոն դառնալուց հետո քո մեջ ինչ փոխվեց:

- Ոչինչ: 2 տարի առաջ էլ ես իմ մեջ, ինձ համար աշխարհի չեմպիոն էի: Գիտեի, որ դառնալու եմ, ե՞րբ՝ դա չգիտեի: Պիտի պարզապես ուրիշներին ապացուցեի:

- Սյուզի, Գերմանիայում ապրեն հանրահայտ ես դարձել. հաճելի՞ զգացողություն է:

- Իհարկե: Գիտեի, որ մի բան դառնալու եմ՝ մեջս խայծ կար: Դեռ վարպետական իրավունք, ավտոմեքենա չունեմ, ոտքով եմ մեր գալիս, փողոցում բոլորը ճանաչում են: Շատերի համար օրինակ եմ դարձել՝ երկրպագուներիս նամակներից գիտեմ, ուրախ եմ դրա համար:

-Կուզենայի՞ր, որ Հայաստանում էլ աղջիկները բոնցֆամարտն ընտրեին:

-Հայաստանում շատ աղջիկներ կան, որ ուժ ունեն, որ կարող են դառնալ, բայց նրանց չեն ոգեւորում, հակառակն՝ ասում են՝ աղջկա սպորտ չէ: Հիմա ինձ տեսնելով, միգուցե ասեն՝ թե տաղանդ ունես, գնա, փորձիր:

- Տղաներն ինչ կարծիք ունեն:

- Երբ գերմանացի տղաները տեսնում են, որ ես իրենցից ավելի լավ մարզիկ եմ, ուժեղ եմ, հարգում են:

- Ընկեր, երկրպագու ունե՞ս:

- Ոչ, դրա ժամանակը դեռ չի եկել: Ասված տա լավ լինի, դեռ մի 10 տարի ուզում եմ բոնցֆամարտով զբաղվել: Նախ՝ կարիերա, հետո՝ ընտանիք:

- Ի՞նչ մասնագիտություն կուզենայիր, որ ապագա երեխաներդ ընտրեին:

- Ինչի մեջ որ հաջողություն կունենան, թող դա ընտրեն:

- Սյուզի, ինչ-որ բանից վախենո՞ւմ ես կյանքում:

- Կյանքի վախը կա: Ուզում ես միշտ անփոփոխ, առողջ լինել: Ռինգում ամեն բան հնարավոր է: Միշտ աղոթում եմ, որ ամեն բան լավ անցնի:

- Սնահավաս ե՞ս:

-Ոչ: Բայց աչխատանքով մի շոգ ու մի ձեռնոց ունեմ, որ միշտ ինձ մոտ են: Միայն ելույթի պահին եմ դրանցից բաժանվում:

- Killer Queen անվան ո՞ր մասն ես առավել շատ սիրում:

- Ռինգում Killer եմ, ռինգից դուրս՝ Queen: Pro 7 հեռուստալիքն ինձ «տվեց» այդ անունը: Ասում են ռինգից դուրս երկար մազերով իսկական Queen ես: Երկար մազ շատ եմ սիրում, ելույթից առաջ հյուսում են, ու ռինգում խաղին չի խանգարում:

- Արթուր Աբրահամի մասին ի՞նչ կարծիքի ես:

- Նա շատ-շատ ուժեղ բոնցֆամարտիկ է: Էդիսոն Միրանդայի դեմ խաղը, տարած հաղթանակը շատ տպավորեց՝ իսկական հայ: Շատ հպարտ եմ, որ կարող ենք Գերմանիային ցույց տալ, թե ինչքան ուժեղ ենք:

- Համբուրգում բնակվող բոնցֆամարտիկ Խորեն Գեւորգյանի մասին ի՞նչ կասես:

- Նա էլ շատ լավն է՝ բարյացկամ, ուժեղ, դեռ աշխարհի չեմպիոն չէ, բայց այս կամ մյուս տարի կարող է դառնալ:

- Գերմանիայում կանանց բոնցֆամարտի թագուհին՝ Ռեգինա Հալմիխը շատ բարձր կարծիքի է քո մասին: Ի՞նչ ես կարծում՝ կարո՞ղ ես նրան գերազանցել:

- Ես Ռեգինայից շատ տարբեր եմ, իմ մրցելույթներում ուզում եմ ցույց տալ իմ անհատական ոճը: Չգիտեմ իհարկե նա 19 տարեկանում ի՞նչ էր անում, բայց մի բան պարզ է՝ նա է մեր ճանապարհը բացել, կանանց բոնցֆամարտը զարգացրել, մեր գործը հեշտացրել:

- Բոնցֆամարտիկները շատ հարուստ կարո՞ղ են լինել:

- Եթե հեռուստատեսային շոուներում լինեն, այո: Եթե շոու, օրինակ՝ 6 միլիոն հեռուստադիտող նայեց, ուրեմն հաջողությունը հեռու չէ՝ պայմանագիր կկնքեն: Առայժմ ավելի շատ իմ մենեջերներն են հարստանում, բայց կգա ժամանակը, եւ ամեն ինչ էլ կլինի:

-Հաճախ են շեշտում, որ դու մրցելույթից հետո մարդկանց համակրանքը շահում ես նաեւ քո խոսքով: Նախապես պատրաստվո՞ւմ ես:

- Ոչ, ոչ: Ռինգից հետո գլխիս մեջ միայն շնորհակալություն բառն է, դա չպիտի մոռանամ, մնացածն ինքնըստինքյան ստացվում է:

ԼՈՒԻԶԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ՀԱՄԱՌՈՏ

Երկրորդ փուլն էլ հաղթահարվեց

Թենիսի Ֆրանսիայի բաց առաջնության երկրորդ փուլի արգելքն էլ հաջողությամբ հաղթահարեց Դավիթ Նալբանդյանը՝ հաղթելով իսպանացի Իվան Նավարռ-Պասսորին (7-5, 6-4, 6-4): Հաջող հանդես եկավ Ռոջեր Ֆեդերը՝ պարտության մատնելով Թյերի Ասյոնին: Ուղեգիր նվաճեց նաեւ Նիկոլայ Դավիդենկոն՝ առավելության հասնելով Վերներ Նկատմամբ: Իսկ ահա Մարատ Սաֆինը դուրս մնաց հետագա պայքարից՝ չկարողանալով հաղթահարել Յանկո Տիխսարեվիչի դիմադրությունը: Պայքարը շարունակում են նաեւ Միխայիլ Յուժնին, Խուան Կառլոս Ֆերերոն, Թոմի Ռոբրեդոն, Ֆիլիպո Վոլանդրին, Միխայել Լլոդրան, Գիլերմո Կանյասը:

Կանանց մրցաոայքարում հաջորդ փուլ են մտել Վինուս Ուիլյամսը, Ելենա Դեմենտեւան, Ելենա Յանկովիչը, Դինարա Սաֆինան, Ժյուստին Էնենը, Սիբիլ Բամերը, Տատյանա Գարբինը:

Լիսենկոն նոր ռեկորդ սահմանեց

Սոչիում կայացած թեթեւ ատլետիկայի մրցումներում ռուսաստանցի Տատյանա Լիսենկոն մուրճի նետման հատվածում համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց: Նա մուրճը նետեց 78 մետր 61 սմ: Նախկին ռեկորդը եւս պատկանում էր Լիսենկոյին (77 մ 80 սմ):

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՍՊՈՐՏ

Հաշիվը հավասարվեց

Էլիտայում շարունակվում են չախմատի աշխարհի առաջնության հավակնորդների մրցախաղերը: 5-րդ տուրում նորվեգացի Մագնուս Կառլսենը սպիտակներով 49-րդ քայլում հաղթեց Լետն Արոնյանին, ռեանշի հասնելով նախորդ պարտիայում կրած պարտության դիմաց: Այսպիսով, մրցախաղի ավարտից մեկ տուր առաջ Արոնյան-Կառլսեն մրցախաղում հաշիվը հավասարվեց (2,5-2,5): Այսօր կկայանա վերջին պարտիան: Եթե դա հաղթողին չորոշի, ապա մրցակիցները լրացուցիչ մրցախաղ կանցկացնեն:

Հավակնորդների 8 զույգերից 3-ում հաղթողներն արդեն հայտնի են: 4-րդ տուրում Պետեր Լեկոն, հերթական հաղթանակը տոնելով Միխայիլ Գուրեւիչի նկատմամբ, մրցախաղը շահեց 3,5-0,5 հաշվով: Բնականաբար, այլեւս հարկ չկար անցկացնելու մնացած 2 պարտիաները: Նույնպիսի հաշվով Գատա Կամսկին առավելության հասավ Բաքրոյի նկատմամբ: 5-րդ տուրում իրենց մրցավեճն ավարտվեցին Ալեքսանդր Գրիշչուկն ու Վլադիմիր Մալախովը: Պարտիան ավարտելով ոչ-ոքի, Գրիշչուկը մրցախաղը շահեց 3,5-1,5 հաշվով:

Մայքլ Ադամսը 3-2 հաշվով շահում է մրցախաղն Ալեքսեյ Շիրովից: 5-րդ պարտիայում նրանց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Նույնպիսի հաշվով Եվգենի Բարեեւն առջեւից է ընթանում Հոտիթ Պոլգարի հետ մրցավեճում, թեեւ 5-րդ պարտիայում պարտվեց: Սերգեյ Ռուբլյովսկին էլ նույն հաշվով հաղթում է Ռաուլան Պոնոմարյովին: Նրանց պարտիան էլ ավարտվեց ոչ-ոքի:

Ղազախների հետ հանդիպումը մեր հավաքականի 100-րդ խաղը կլինի

Առաջիկա շաբաթը բավական հագեցած է լինելու Հայաստանի հավաքականների համար, որոնք ընտրական մրցախաղեր կանցկացնեն: Հայաստանի ազգային հավաքականը այսօր կիյուրընկալվի Ղազախստանի ընտրանուն, իսկ չորս օր անց Երեւանում ուժերը կչափի Լեհաստանի ֆուտբոլիստների հետ:

Ի դեմ, 1992 թ. կազմավորված Հայաստանի ազգային հավաքականի համար ղազախների հետ առաջիկա հանդիպումը կլինի հոբելյանական՝ 100-րդ խաղն ազգային հավաքականների մակարդակով: Իհարկե, շատ հաճելի կլինի, եթե հոբելյանական հանդիպումը մեր ֆուտբոլիստների համար հաղթական լինի: Ցավոք, Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում առայժմ մեր ֆուտբոլիստները շատ անհաջող են հանդես գալիս՝ մեկ միավորով եզրափակելով «Ա» խմբի աղյուսակը: Մեր ֆուտբոլիստներին առայժմ չի հաջողվում բացել գոլերի հաշիվն ընտրական մրցաշարում: Հուսանք, որ գոնե այս անգամ հավաքականում գոլային երկարատեւ երաշտը կընդհատվի:

Ղազախստանի հավաքականի հետ մեր ընտրանին առայժմ միայն մեկ անգամ է հանդիպել՝ կիրոսյան մրցաշարի շրջանակներում: 2004 թ. փետրվարի 19-ին Պաֆոս քաղաքում կայացած այդ մրցախաղն ավարտվել է ոչ-ոքի (3-3), թեեւ խաղի ընթացքում երկու անգամ մեր ֆուտբոլիստները հաշվի մեջ առջեւում էին: Հայաստանի հավաքականից գոլերի հեղինակներ էին դարձել Գալուստ Պետրոսյանը եւ Քարամյան եղբայրները:

Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Իան Պորտերֆիլդն ընտրական մրցախաղերին նախապատրաստվելու համար հավաքի էր հրավիրել 24 ֆուտբոլիստի: Մեր ընտրանին հանդվանել էր «Ռեջինա» հյուրանոցում՝ մայիսի 28-ից սկսելով մարզումները: Երեկ վաղ առավոտյան ՀՀ հավաքականը մրցավայր մեկնեց չարտերային չվերթով: Հանդիպումից անմիջապես հետո մեր ընտրանին կվերադառնա Երեւան՝ սկսելով նախապատրաստությունը լեհերի հետ մրցախաղին: Նշենք, որ ղազախների հետ խաղին որակազրկման պատճառով չեն մասնակցի Լետն Փաչաջյանն ու Ռոմիկ Խաչատրյանը: Հավաքականի գլխավոր մարզիչ Իան Պորտերֆիլդը Ղազախստան մեկնած թիմի կազմում ընդգրկել է հետեւյալ 20 ֆուտբոլիստներին. դարպասապահներ՝ Ռոման Բերեզովսկի, Գեւորգ Կասպարով, պաշտպաններ՝ Սարգիս Հովսեփյան, Կարեն Դոխոյան, Եղիշե Մելիքյան, Ալեքսանդր Թադեւոսյան, Ռոբերտ Արզումանյան, Վահագն Մինասյան, կիսապաշտպաններ՝ Համլետ Մխիթարյան, Արթուր Ոսկանյան, Դավիթ Նալբանդյան, Աղվան Մկրտչյան, Լետն Փաչաջյան, Սամվել Մելիքոնյան, Արթուր Մինասյան, Արարատ Առաքելյան, հարձակվողներ՝ Արմեն Շահգելդյան, Արման Քարամյան, Արամ Հակոբյան, Ռոբերտ Զեբելյան:

Մայիսի 26-ից «Երեբունի» հյուրանոցում ուսումնամարզական հավաք են անցկացնում Հայաստանի երիտասարդական հավաքականի ֆուտբոլիստները, որոնք ընտրական առաջին խաղում 1-0 հաշվով հաղթեցին Լիխտենշտեյնի ֆուտբոլիստներին: Հունիսի 6-ին մեր ընտրանին կիյուրընկալվի ուկրաինացիներին:

Հաջողություն մաղթենք մեր հավաքականներին առաջիկա դժվարին ընտրական մրցախաղերում:

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ

առաջարկում է բացառիկ պայմաններ

HYUNDAI

մակնիշի ավտոմեքենաների ադառիկ վաճառքի համար

Հայաստանում «Հյունդայ» ավտոմեքենաների ուղղակի ներկրող եւ միակ դիստրիբյուտոր՝
«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ

Պայմաններ՝ «Հյունդայ»-ի բոլոր մոդելների համար

Կանխավճար՝	*10 %*
Մարման ժամկետ՝	*6 տարի*
Տոկոսադրույք՝	*14 %*

«ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ

հասցե՝ Աճառյան 60 հեռ/ֆաքս՝ (374-10) 581607 բջջ.՝ 091-419238, 093-659004
e-mail: magas@arminco.com

«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹՐԵՅՆԻՆԳ ԿԵՆՏՐՈՆ

- ✓ *կազմակերպությունների ղեկավարներ, հաշվապահներ, իրավախորհրդատուներ,*
- ✓ *աուդիտորներ, ֆինանսիստներ, հարկային ոլորտի եւ կադրերի գծով մասնագետներ,*
- ✓ *մենեջերներ եւ մարկետոլոգներ*

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԸՆԴՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
«Էկոնոմիկա եւ Իրավունք» կենտրոն, Մ. Բաղրամյան 24դ., 54-24-81, 54-74-81

«ԻՆՆԱ-Գրուպ» ՍՊԸ-ն Երեւանի աղրանեհումային բորսայի հարթակում կազմակերպում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառք՝

Հասարակական տարածքներ

- մակերեսը՝ 160 մ2, հասցե՝ Երեւան, Տերյան փ. 91 շ. եւ Կորյունի փ. 19ա շ.
- մակերեսը՝ 30,2 մ2, հասցե՝ Երեւան, Կորյունի փ. 19ա շ. եւ 19 բ շ.

Մեկնարկային գինը՝ 185.000.000 դրամ:

Աճուրդի փոկերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով 02.07.2007 թ.-ից յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13.00, մինչեւ 30.12.2007 թ.-ը՝ Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Բորսա՝ հեռ. 56-31-15:

Նորարար փորձառական արվեստի կենտրոնը
ներկայացնում է
«ՏԵՔՍՏ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆ»
խորագրով
Արարատ Սարգսյանի
անհատական ցուցահանդեսը
Հունիսի 5-ից - հունիսի 30-ը,
բացումը ժ. 17-ին
Դիտման ժամերը. երկուշաբթի-
ուրբաթ օրերին՝ 11:00-17:00,
շաբաթ օրը՝ 11:00-15:00

www.azg.am
www.azgdaily.eu
www.azgdaily.com

Statistics 10 - Supply of IT Equipment for the National Statistical Service of Armenia EuropeAid/125643/L/Sup/AM

European Commission intends to award a supply contract for providing with IT equipment for National Statistical Service of Armenia with financial assistance from the TACIS programme of the European Communities. The tender dossier is available from the Delegation of the European Commission to Armenia 375025, 34 Sayat - Nova st., Yerevan, Armenia. Postal address: 375025, 12/6 Aigestan st., Yerevan, Armenia and will also be published on the EuropeAid website: **http://ec.europa.eu/europeaid/work/procedures/index_en.htm**

The deadline for submission of tenders is 02/07/2007, 16:00. Possible additional information or clarifications/questions shall be published on the EuropeAid website: **http://ec.europa.eu/europeaid/work/procedures/index_en.htm.**

Supply of Vehicles for Reforms in Childcare and Child Protection in Armenia Statistical Service of Armenia EuropeAid/125669/L/SUP/AM

European Commission intends to award a supply contract for providing 7 sedan vehicles and one 4WD vehicle for childcare and child protection reforms in Armenia with financial assistance from the TACIS programme of the European Communities. The tender dossier is available from the Delegation of the European Commission to Armenia 375025, 34 Sayat - Nova st., Yerevan, Armenia. Postal address: 375025, 12/6 Aigestan st., Yerevan, Armenia and will also be published on the EuropeAid website: **http://ec.europa.eu/europeaid/work/procedures/index_en.htm**

The deadline for submission of tenders is 03/07/2007, 15:00. Possible additional information or clarifications/questions shall be published on the EuropeAid website: **http://ec.europa.eu/europeaid/work/procedures/index_en.htm.**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
2006 թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 30.04.2004 թ., պետական գրանցման վկայական՝ 03 Ա 064892
2. Գտնվելու վայրը՝ ՀՀ ք. Երեւան 0047, Արմենակյան փողոց 250, «Նախիր» հյուրանոց, 2-րդ հարկ, հեռ. 650 929, 655 359

Աուդիտոր՝

Հ. Դանիելյան

22.05.2007 թ.

(աուդիտորի ռոակավորման վկայական թիվ 111)

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԱՌ 1.2007 թ.

(հազար դրամ)

ԱԿՏԻՎ	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու ժամանակաշրջան
Ոչ ընթացիկ ակտիվներ	Գումար	Գումար
Հիմնական միջոցներ	686	14399
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ*	-	63748
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	-	150
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	686	78297
Ընթացիկ ակտիվներ		
Նյութեր	105	-
Առագաստ ակտիվներ	7	-
Կարճաժամկետ դեբիտորական պարտք	385469	64831
Կարճաժամկետ դեբիտորական պարտք բյուջեի գծով	89	3550
Այլ դեբիտորական պարտքեր	1576	-
Դրամական միջոցներ	172071	209006
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	559317	277387
ՀԱՇՎԵԿՇԻՌ	560003	355684

ՊԱՍՍԻՎ	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու ժամանակաշրջան
Սեփական կապիտալ	Գումար	Գումար
Կուտակված շահույթ	505578	345146
Ընդամենը սեփական կապիտալ	505578	345146
Ընթացիկ պարտավորություններ		
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք	144	10538
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին	54186	-
Կրեդիտորական պարտք աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	95	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	54425	10538
ՀԱՇՎԵԿՇԻՌ	560003	355684

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2006 թ.)

(հազար դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1	2	3
Աշխատանքների ծառայությունների իրացման մասին	22022	3269
Վարչական ծախսեր	(19191)	(26940)
Աշխատանքների ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	2831	(23671)
Գործառնական այլ եկամուտ	1184	14842
Գործառնական շահույթ (վնաս)	4015	(8829)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	629413	36579
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	633428	27750
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	633428	27750
Շահութահարկի գծով ծախս	126686	16960
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	506742	10790

*- 2006 թ. հիմնադրամն իրականացրել է իր սեփականություն հանդիսացող Ստեփանավանի տուրիստական հանգրվանի արդիականացման ծրագիրը, ծախսելով 63,75 մլն դրամ: Տուրիստական հանգրվանի արդիականացման ծրագրի իրականացումը կավարտվի 2007 թ. երկրորդ կեսին:

- Հիմնադրամի ֆինանսներն առաջացել են նրա սեփականությունը հանդիսացող հիմնական միջոցների օտարումից:

- 2006 թ.-ին Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կատարել է բարեգործական ակցիա՝ երկրաշարժի հետեւանքով տուժած 15 եւ փախստական 2 ընտանիքների ցույց տալով 45,995 մլն դրամ օգնություն:

- Տարեկան ընդհանուր ծախսերը կազմել են 198,162 հազար դրամ, որից վարչակառավարական ծախսերը՝ 26,940 դրամ (13,6%):

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՄՇՄԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 1.06.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: